Թովանդ. Առ աստղն հիւսիսոյ /Բրայենդ/; Յարութիւն դստին Յարոսի /Ն. Ա./; Ի մահն բարեկամի /Անդ. Նորդոն/; Երկիր հրանելեաց /Պիրոդի/; Աբեսաղոմ /Ն. Ուիլլիս/; Մեկուսութիւն /Ն. Ա./; Գանգատ կուրի /Ուալլիս Խաբրուրն/; Ի թողուն զտուն՝ ի խնդիր ամոքագոյն կլիմայի /Չարլոդ Էլլիոտ/; Հնձողն և ծաղկունք /Լոնգֆելլո/; Աղշիկն օրհասական /Ն. Ա./; Առ Հանջրային /Բրայենդ/; Հրէշտակն համբրութեան /Ն. Ա./; Յորժամ Անցցուք ընդ բացական ընդ Գետն աշն /Սաունդերս/; Ի տարեվերջն /Ուիդեր/; Անմահություն /Դեւա/; Մանուկ մերձ ի մեռանել /Ն. Ա./; Զայն գուժեաց ի հումամ /Ա. Ա./; Երգ վերջալուսոյ /Լուկրետիա Մարիա Դավիդսոն/; Նուագ ի ծով /Բրայենդ/; Նոյեմբեր /Բրայենդ/; Ավազ անապատի ի ժամաշափ... /Լոնգֆելլո/; Աղտը անապատին /Ուիլլիս/; Մահատեսութիւն:

Սույն հրատարակւոյթներ համարվում և որպիս տմերիկացի բանաստեղծների ստեղծագործութիւններից քաղված հատվածներ մի ժողովածու Գրաբար թարգմանութիւն է: Թարգմանչի մասին տիտղոսաթերթիկի վրա տեղեկութիւններ չկան: Վենետիկի Միսիթարյանների «Գրացուցակ»-ում նշված է, որ «Քնար Ամերիկան»-ը թարգմանել է Հ. Ղևոնդ Մ. Ալիշանը, անգլերեն բնագրից՝ գրաբար: Տեքստը գրքում տրված է հայերեն և անգլերեն:

Տես՝ «Գրացուցակ Միսիթ. տպ., Վենետիկ, 1960, էջ 60:

Տիրապետելով հվրոսպական ու ասիական բաղձաթիւ լեզուների, բանասիր, պատմաբան, աշխարհագրագետ և թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանը կատարել է մի շարք թարգմանություններ Դրանցից են՝ Զ. Միլտոնի, «Դրախտ կորուսյալ»-ը: «Մաղկաքաղ քերթողաց Անգղիացւոյ», Զ. Բայրոնի «Իտալիա»-ն, «Քնար Ամերիկյան», Հ. Լոնգֆելլոյի «Հնձողն ու ծաղկունքը», Ֆ. Շիլլերի «Երգ ի դանգակն» և այլն:

Առսեմին Երկեր

36*. Բարեյ [ՊԱՐԼԵՅ, ԱՄԵՐԻԿԱՅԻ]: Ամերիկացի Պարլիզուրոյցները /Թարգմ. Կամսար Օձնեցի.— Թիֆլիս, 1865.—183 էջ.

ՊԳ-ում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Կովկ. հայոց բարեգործ. ընկ. գրադ-ն» Թիֆլիս, 1910, էջ 69.

37. [Բրնիան Հովհաննես]: Քրիստիանոսին ու Քրիստինենին համբորդությունը աս աշխարհես հանդերձյալը: Երազի ձևով շարադրյալ.— Նյու-Յորք: Տպ. Ամերիկ. տետրակի ընկ., 1891.—532 էջ, 8 թ. նկ.

Տիտղոսաթերթի վրա թարգմտիչի մասին տեղեկություններ չկան: Հեղինակի վերաբերյալ խոսվում է դրբի առաջաբանում՝ «Յօհաննէս Պրնիանին վարքը» խորագրով: Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից: Սույն դիրքը հրատարակվել է՝ 1843, 1865, 1882 և 1891 թթ.

Տիտղթ. վրա՝ «Յօհաննէս Պրնիան».

38. [Բրնիան Հովհաննես]: Քրիստիանոսին ու Քրիստինենին համբորդությունը աս աշխարհես հանդերձյալը: Երազի ձևով շարադրյալ.— Նյու-Յորք: Տպ. Ամերիկ. տետրակի ընկ., 1882.—532 էջ, 8 թ. նկ.— Տիտղթ. վրա՝ «Յօհաննէս Պրնիան»...

39. [Բրնիան Հովհաննես]: Քրիստիանոսին ու Քրիստինենին համբորդությունը աս աշխարհես հանդերձյալը: Երազի ձևով շարադրյալ.— Նյու-Յորք: Տպ. Ամերիկ. տետրակի ընկ., 1865.—532 էջ, 8 թ. նկ.— Տիտղթ. վրա՝ «Յօհաննէս Պրնիան»...

40. [Բրնիան Հովհաննես]: Քրիստիանոսին ու Քրիստինենին համբորդությունը աս աշխարհես հանդերձյալը: Երազի

ձեռք /Անգլ. բնագրից թարգմանված.— Ձմյուռնիա Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1843.—

Մաս 1. 444 էջ.

Մաս 2. 354 էջ.

ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանում գտնվող օրինակը՝ Ա մասն է, Երկրորդ մասը գտնվում է Մատենադարանի գրադարանում և գրականության արվեստի թանգարանում:

41. Բիշեր-Սթոու Հարրիս: Աղբար Թովմասի տնակը, Վիպտասանություն չա. 1—2. Բ. սուպեր.— Վենետիկ, Տպ. ո. Ղադարի, 1906.—

Չա. 1. 452 էջ.

Չա. 2. 576 էջ.

Աշխարհաբար թարգմանություն անգլերեն բնագրից, արևմտահայերեն Թարգմանչի մասին գրքում տեղեկություններ չկան: Ըստ Ա. Յալըճյանի գրառան գրադասակի վկայության, թարգմտելին է՝ Հ. Գ. Մերձոնյանի /Տես՝ «Գրադույ. Ա. Յալըճյանի գրառան», Կ. Պոլիս, 1915, էջ 3/:

Երկու հատարք մի կապի մեջ է:

Գրքում դեռնված է համառոտ առաջաբան նվիրված հեղինակի գրական ստեղծագործություններ և սույն լիպտասանության հրատարակությանը Առաջաբանում նշված է նաև այս գրքի նշանակություն և թարգմանության մասին:

42. Բիշեր-Սթոու, Թովմաս Լորդի տնակը, Փոլիսպր. Տ. Պալմերի /Թարգմ. օր. Ն. Տեր-Մարկոսյանց.— Թիֆլիս, Հրատ. «Թիֆլիսի ընկ. հայերեն գրքերի...», տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.—78 էջ, նկ.

43. Բիշեր-Սթոու, Եղբայր Թոմի տնակը, Վեպ տիկ. Ստուտի Երևանյան համար պատմած Պատկերազ. թարգմանություն ֆրանսիականից [Թարգմանիչ՝ Միքայել Տեր-Գրիգորյանց].— Ս.— Պետերբուրգ, Հրատ Տեր-Միքայելյան և ընկ. դրավաճառանոցի, տպ. Ռ. Պատկանյանի, 1865.—124/1/ էջ.

Գրքում զետեղված է թարգմանչի առաջաբանը [էջ 5—11] սույն հրատարակության նշանակության և թարգմանության մասին /Միքայել Տեր Գրիգորյանց/:

Թարգմանչի մասին նշված է առաջաբանի վերջում: Տես՝ էջ 11.

44. Բիշեք-Սթոու: Աղբար Թովմասի տնակը /Վիպասանություն: Հտ. Ա.—Բ. [Թարգմ. Հ. Գրիգորիս Մերճանյան]—. Վենետիկ, Տպ. Մխիթ. ս. Ղազար, 1854.—

Հտ. Ա. 368 էջ, 1 թ. ներդ. նկ.

Հտ. Բ. 495 էջ, 1 թ. ներդ. նկ.

Աշխարհաբար թարգմանություն անգլերեն բնագրից, արևմտահայերեն: Պատկերազարդ վիպասանություն: Թարգմանչի մասին գրքում չի նշված: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանիչը Հ. Գրիգորիս Մերճանյանն է: Տեղեկությունը քաղված է Վենետիկի գրացուցակից: Տես՝ «Լիակատար ցուցակ Վենետիկի Մխիթարյանների» Վենետիկ, 1910, էջ 2:

Գրքում զետեղված է համառոտ առաջաբան նվիրված հեղինակի գրական գործունեությանը, ինչպես նաև վիպասանության նշանակությանն ու թարգմանությանը:

Սույն երկում տրված է նաև համառոտ կենսագրական ակնարկ հեղինակի վերաբերյալ՝ «Հեղինակին վրայ համառոտ տեղեկություն» խորագրով:

Վենետիկի Մխիթարյանները հրատարակում են պատանի ընթերցողների համար կրթական և դաստիարակչական նշանակություն ունեցող երկեր: Դրանց թվում՝ Վենետիկում 1854 թ. երկու հատորով լույս տեսած ամերիկացի նշանավոր կին դրող Բիլլոր Սթոուի՝ «Աղբար Թովմասի տնակը» վիպասանությունը:

45. Ռեե-ճաբու: Իննըսուն և ութ տարի առաջ /Պատմվածք/ թարգմ. Ստ. Լիսիցյան.— Թիֆլիս, Տպ. վրաց. հրատ. բնկ., 1902.— 56 էջ.

Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից: Գրքում ղեկավարված է «Առաջաբան» թարգմանչի կողմից [Ստ. Լիսիցյան, էջ 3—8]: Առաջաբանում համառոտակի տրված են տեղեկություններ հեղինակի և վիպակի թարգմանության վերաբերյալ: Արտատպված է՝ «Մուրճ» ամսագրից:

Շպկ-ի վրա տպագրության տարեթիվը նշված է «1903»:

Հեղինակ՝ Հարտ Ֆրենսիս Բրետ:

46. Ռեե-ճաբու: Մլիս թարգմ. Ստ. Լիսիցյան.— Թիֆլիս, Հրատ. «Հասկեր» ամսագրի, տպ. օր. Ն. Աղանյանցի, 1910.— 27 [2] էջ.

Գրքույկի վերջում ղետեղված է զրականության ցանկ մանուկ-
ների ընթերցանության համար, որոնք լույս են տեսել 1906—1908
թվականներին՝ «Հասկեր»-ի ձրի հավելված» խորագրով:

47. Խրվինգ Վաշինգտոն: Ահմեդ արքայազն Այ. Քամըր կամ
սիրո ուխտավոր: Արեւելյան զրույց /Ռուսեր. թարգմ. Հ. Խոջամիր.
— Բագու, Հրատ. Գ. Շ., տպ. Գյուլբասարյանի և Շահբազյանի,
1894.—62 էջ.

Գրքում ղետեղված է թարգմանչի համառոտ խոսքը՝ «նուկը
սիրաշաղկապ բնականիքներին» խորագրով:

Կաղամակից է Րաֆֆի՝ «Արծիւ Վասպուրականի /Խրիմյան հայ-
րիկ/» գրքին: Տես՝ ալիգ. 3.

48. Լոնգֆելլո Հենրի Ուոդսուորտ, Եվանգելինա /Վիպակ/;
Կոլմարի դատավորի տեսիլը (Ալֆոնս Դոդեից) /փոխադրեց՝ Հա-
րություն Ղարազոյան.— Թիֆլիս, Հրատ. Պ. Բ. Արուշանյանցի,
տպ. Մովսէս Վարդանյանի, 1892.—67 էջ.

Վիպակի սկզբում ղետեղված է թարգմանչի առաջաբանը:

Սույն հրատարակությանը տպակից է Ալֆոնս Դոդեի՝ «Կոլմա-
րի դատավորի տեսիլը» պատմվածքը:

49. Լոնգֆելլո Հենրի, Իվանճելին /Հովվերգություն/ /Հայացուց
Սահակ-Մեսրոպ.— Կ. Պոլիս, Հրատ. Պ. Պալենց գրատան, [տպ.
Օ. Արզուման], 1913.—71 [1] էջ, 1 թ. պիմանիկ.

Աշխարհաբար թարգմանություն անգլերենից, արեւմտահայե-
րեն, չափածո երկ:

Գրքույկում ղետեղված է թարգմանիչ՝ Սահակ-Մեսրոպի բա-
նաստեղծությունը «Անուր» խորագրով:

Թարգմանիչ՝ Սահակ-Մեսրոպ:

Տիտղթ. վրա հեղ.՝ «Հենրի Վ. Լոնգֆելլո»:

50. Լոնգֆելլո Հենրի: Իվանճելին /Հովվերգություն/ /Թարգմ.
Տ. Լյուկենյան.— Կ. Պոլիս, Հրատ. Դավթյան գործակալութ., 1903.—
80 էջ. Տիտղթ. վրա՝ «Թերթոն «Բիրական»-ի»:

Աշխարհաբար թարգմանություն անգլերենից, արեւմտահայե-
րեն: Սույն երկի 2-րդ հրատարակությունը լույս է տեսել 1913 թվ.
Ս. Մեսրոպի թարգմանությամբ Կ. Պոլսում:

Կազմակից է՝ «Նապոլյոն մեծի մտածութիւնք քրիստոնեութեան վրա» գրքին: Կ. Պոլիս, 1865: Տես՝ ալիդ. 4.

51**. Լոնդոն Զեկ: Երկաթե կրունկը /Ռուսեր. թարգմ. Վ. Վան-դեկ, Խմբ. Գ. Հայկունի.— Մոսկվա: «Մուրճ և մանդաղ», /ա. թ./.— 148 էջ, իւ.

Աշխարհաբար թարգմանություն ուսերեն հրատարակությունից: Տպագրության տարեթվի մասին չի, նշված: Հալանական է, որ սույն գիրքը լույս է տեսել 1920 թվ. հետո:

52. Լոնդոն Զեկ: Զորավորին ուժը /Պատմվածք/ /Թարգմ. Ն. Մանկունի.— Բոստոն: Տպ. «Հայրենիք», 1914.— 29 էջ.— /Հասարակական մատենաշար, թիվ 1/.

53*. Նաթ Պինկերտոն: Ամերիկացի հռչակավոր ոստիկանին երկվելի գործերը /Թարգմ. Երվ. Օտյան.— Կ. Պոլիս, 1912, 95 էջ.

Պետական գրադարանում սույն հրատարակությունը չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Հանդես ամսօրյա», 1913, փետրվ., էջ 129.

54*. Նաթ Պինկերտոն: Երեք ոճրագործ.— Խիֆուս Տպ. «Էս-պիրանտո», 1911.— 32 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Սովետահայ թարգմանական ղեկար-վեստական գրականություն: Մատենագիտ. /1920—1980/, էջ 749. .

55**. Նաթ Պինկերտոն: Ամերիկացի հռչակավոր զաղտնի ոստիկանին նոր արկածները /Թարգմ. Ժ. Շ.— Կ. Պոլիս: Տպագր. Պ. Պալլքեյանի, /ա. թ./.— 288 էջ.— Տիտղթ. վրա՝ «ՆԱԹ ԲՆԻՔՆԵՐ-ԹՐՆ»:

Աշխարհաբար թարգմանություն անգլերենից, արևմտահայերեն: Տպագրության տարեթվի մասին չի նշված: Լույս է տեսել պրականերով /թիվ 1—21/:

56**. Նաթ Պինկերտոն: Ամերիկացի հռչակավոր զաղտնի ոստիկանին նոր արկածները /Թարգմ. Ժ. Շ. [ա. տ. և թ.]: Տպագր. Հ. Ասատրյանի որդիք.— /թ. 1—19/.

Աշխարհաբար թարգմանություն, արևմտահայերեն: Տպագրության վայրի և տարեթվի մասին չի հիշատակված: Լույս է տեսել 19-ը պրակներով, յուրաքանչյուրը՝ 32 էջից բաղկացած: Թարգմանիչը վերծանված չէ:

57^{**}. Նաթ Պրեկերտոն: Դարուս նշանավոր գաղտնի ոստիկանը: Աչքի տեղ աչք, ախալի տեղ ախալ.— Գահիրե, Հրատ. Սոկրատ Սարաֆյանի, տպագր. Զարեհ Պերպերյանի, լա. թ./.— 46[3] էջ.— թիվ 1. Ամբողջ պատմությունն մր/.

Թարգմանությունը կատարված է անգլերենից, աշխարհաբար, արևմտահայ լեզվով: Հրատարակության տարեթվի և թարգմանչի մասին գրքում տեղեկություններ չի սրված:

58^{**}. Նիֆ Քարբուր, ամերիկացի գաղտնի ոստիկանին նոր արկածները.— [Կ. Պոլիս] Ն. Աբրահամյանի, լա. թ./, 48 էջ.— Մատենադար Հայաստան, թիվ 1—10/.

Թարգմանչի և հրատարակության տարեթվի մասին հիշատակություն չկա:

59. Պո Էդգար: Ոսկե քղեզ, լվկալ/ թարգմ. Գրիգոր Շահրուդադյան.— Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանի, 1887.—57[7] էջ.— Տիտղթ. վրա՝ «Էդգար Պո»:

60. Վուդ Հենրի: Չանհինգների ընտանիքը, լվկալ/ Աղաթ թարգմ. օր. Մ. Ս.— Թիֆլիս: Տպ. «Էսպերանտո», 1911.—215 էջ.— Նովեր մանուկներին/.

61. Տվեն Մարկ, [Սամուէլ Կլեմենս], Իշխանն ու աղքատը (Պատմական վեպ պատանիների համար) թարգմ. Գրիգոր Շահրուդադյան.— Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանի, 1893.—300[2] էջ.

Գրքում ղեկավարված է հեղինակի համառոտ ուղերձը ընթերցողին՝ նվիրված սույն երկի ստեղծման պատմությանը:

Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից:

62. Տվեն Մարկ, Զվարճալի պատմվածքներ.— Թիֆլիս: Տպ. Մ. Ռոտինյանցի, 1891.—105 էջ.— Տիտղթ. վրա՝ «Արտատպված է «Մուրճ» ամսագրից»:

Թովանդ.՝ Ամուսինների վրդովմունքը բկացավի պատճառով; Տի-
կին Ուիլյամսը և Կայծակը; Իմ առաջին գրականական
փորձը; Իմ ժամացույցի արկածները; Փրկարար ձայնը;
Սափրիչների մասին; Նոր քրեական մի բառ; Միջնադար-
յան վեպ; Խրատական մի տեսակ առականների մասին:

Թարգմանչի մասին շի նշված: Տիտղթ. վրա՝ «Մարկ Տվեն»
/Սամուէլ Կլեմենս/:

63. Տվեն Մարկ: Մահվան օղակը: /Պատմվածք/ /Թարգմ.
Մ. Թավաքալյան.— Թիֆլիսի Հրատ. «Նվիր մանուկներին» րնկ.,
ուպ. օր. Ն. Աղանյանի, 1913.—22[2] էջ.— /Հավելված «Հասկեր»
ամսագրի/:

Գրքուլի վերջում գետեղված է՝ «Նվեր մանուկներին» րնկե-
րության և «Հասկեր»-ի հրատարակությունների ցուցակը:

64. Տվեն Մարկ: Վիճակ /Թարգմ. օր. նվարդ Աղանյան.—
Թիֆլիսի Հրատ. և տպ. Ն. Աղանյանի, 1912.—24 էջ.— /Մանուկ-
ների գրադ-ն № 2/:

Շուկ-ի վերջին էջի վրա տպված է՝ «Օր. Ն. Աղանյանի թարգ-
մանութեամբ լույս են տեսիլ» գրականության ցանկը:

Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությու-
նից:

65. Փայտաշեն խրճիթից մինչև սպիտակ տունը Պատկերադ.
/Թարգմ. Լևոն Մելիք-Աղամյան.— Թիֆլիսի Տպ. «Մամուլ» րնկ.,
1916.—206 էջ.

Հեղինակի մասին շի հիշատակված: Փոխադրված է տնղյերե-
նից:

66. Փայտաշեն խրճիթից մինչև սպիտակ տունը.— Պատկե-
րադ. /Փոխադր. Լևոն Մելիք-Աղամյան.— Թիֆլիս, 1896.—206 էջ,
իլ.

Սույն հրատարակությունը գտնվում է ԳԱ հիմնային գրադարա-
նում:

ԱԿԳ

67. Փայտաշեն խրճիթից մինչև սպիտակ տունը /Փոխադրեցին՝
Ն. Տեր-Ավետիքյան և Լևոն Մելիք-Աղամյան.— Թիֆլիսի Հրատ.
«Աղբյուր»-ի, տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1884.—131 էջ, նկ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժողովածուներ

68. Անգլիաց Անպետ: Յորում պարագրին քաղուածք պէսպէս գեղեցկապաճոյճ խրատական և հոգեզուարճ բանից ի զանազան երեսիլի Անգղիացի մատենագրաց, Գլխաւորաբար դիտեալ ի հրահանգութիւն և ի դրօսանս համբակաց/Հարազատաբար թարգմանեալ աշխատասիրութեամբ պարոն Յովհաննիսի Ալլալեանց.— Կալկաթա: «Տպագրեալ յընծայեալ տպարանի Յորդանանեան պարոն Պողոսի, ի Յովհաննիսէ Տէր-Յակոբեան», 1821.—Ե, 313, [6] էջ.

Ռովանդ.՝ Նախաբան, Վերընծայումն՝ Հարութիւն Գալացեանին, ղատիարակին իր աշակերտից՝ Յովհ. Ալլալեանցից; Ընտիր հատվածներ հետեյալ անգլիացի գրողներից՝ Բլէքըր, Ջանսըն, Սալլուստ, Էյպիսըն, Բէաթթի, Գոլլամիթ, Վոսլոյ, Դադ, Տատլեր, Ռալին, Պէրսվըլ և ուրիշն. Վերջում հավելված՝ «Անձնագրութեան հեղինակաց ընդհանուր գրուածոց պարունակելոց Յայտմիկ» խորագրով:

Անգլիացի տարրեր հեղինակների ստեղծագործութիւններից քաղված ընտիր հատվածների հավաքածու է: Թարգմանութիւնը կատարված է բնագրից, գրաբար:

Կալկաթայում լույս տեսաւ Հովհաննէս Ալլալայտնցի թարգմանած և կալմած «Անգիտաց անպետ» ժողովածուն [1821], ուր գետեղված են փոքրիկ պատմութիւններ օտարազգի մատենագիրներից՝ Գոլդսմիթից, Կիկերոնից, Բենիամին Յրանկլիից և այլ հեղինակներից: Հնդկահայ այս դաղութումն են հրատարակվել նաև Սամուէլ Ջոնսոնի «Հռասելաս արքայորդին Նթովպիոյ» [1826], Օլիվեր Գոլդսմիթի «Փոխերեցն Վեկֆիլդայ»-ը [1848] և ուրիշ երկեր:

69. Ընտիր նորավեպեր: /Հավաքածո/.— Նյու-Յորք: Հրատ. «Կոչնակի», 1919.—159 էջ.

Ռովանդ.՝ Հոթհորն: Մեծ ապառաժյա դեմքը /Թարգմ. Մ. Հ. Անանիկյան, էջ 7—51; Իգրայիլ Զենկվիչ: Կեթոյի վարդ մը /անգլ. բնագրից թարգմ. Գ. Ա. Սարաֆյան, էջ 124—159.

70*. Մադիլենե անգղիական գրականութեան /Թարգմ. Մ. Մինասյան.— Կ. Պոլիս: Տպ. Գ. Պաղտատլյանի, 1893.—100 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Հանդես ամսօրյա», 1894, հոյեմբեր, էջ 345.

71. Մավկաֆալ քերթողաց անգղիացւոյ: Beauties of English Poets /Քերթվածք լորտ Պայրընի և այլոց անգղիացի քերթողաց/. Lord Byron's english and armenian.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1852, /1—15/, 233 էջ. /Անգլ. և հայեր. տեքստերը միասին են/; Թովանդ.՝ Ի ԹՂԹՈՅ ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԻ՝ Առ պ. Մուր; Առ պ. Մրրի /էջ V—XV/; ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԻ՝ Հատուածք պատմութեանն հայոց թարգմանեալք ի լորտ Պայրընէ ի հրահանգս անձինն ի հայ բարբառ; Հատուածք՝ ատենաբանութեան ս. Ներսէսի Լամբրոնացոյ թարգմանեալ ի լորտ Պայրընէ; Թուղթ կորթնացոցն առ սուրբ տաքեալն Պաղոս /Գոհալ յԱստուածաշունչն հայոց՝ ի կարգի Անյայտից/; Թարգմանեալ ի լորտ Պայրընէ; Թուղթ Պաղոսի առ կսրնթացիս /Գոհալ յԱստուածաշունչն հայոց՝ ի կարգի Անյայտից/; Թարգմանեալ ի լորտ Պայրընէ /էջ 1—41/; ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԻ ՔԵՐԹՈՒԱՄՔ՝ Կոտորած բանակին Սենեքերիմայ; Ուղերձ առ ովկիանոս; Ի Վալերլու; Առ Ժամանակ; Տաղ երգեալ ի շանթաձիգ մրրի; Տաճար ս. Պետրոսի /էջ 44—105/; ՓոփԱՅ ՅԱՌՈՒՐ ՏՕՆԻ ՍՐՐՈՒՀԻՈՅՆ ԿԵԿԷԼԻԱՅ /ԵՐԳ, Մեսիա /էջ 107—147/; ԿՐԵՅԻ ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ԳԻՒՂԱԿԱՆ ԳԵՐԵՁՄԱՆԱՏՈՒՆ; Տալանագիր; Ի մահ սիրելոյ կատուի /էջ 149—185/; Ամ քրիստոնէական՝ Առաւմոտ; Երեկոյ /էջ 187—211/; ԴԸԲԲԸՐԱՅ ԱՌԱՎԱՆՈՍ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՐԱՆՔ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ /էջ 213—225/; ՄԻՆՏՈՎՆԻ ԴՐԱՆՏ ԿՈՐՈՒՍԵԱԼ; Դրախտ կորուսեալ /էջ 227—233/:

1852 թվ. Մխիթարյանները վենետիկում հրատարակում են «Մաղկաքաղ քերթողաց անգղիացոյ» գիրքը, որի երկրորդ թերթի վրա գտնում ենք /Lord Byron's English and Armenian Hand-writing... Բայրոնի մականորութունը անդլերեն և հայերեն լեզուներով:

Գիրքը չունի առաջաբան, սկսվում է «Ի թղթոց Բայրոնի» վեր-

նագրով, որից հետո տրվում է անգլերեն և հայերեն լեզվով՝ Բայրոնի հայերեն քերականության համար գրած առաջաբանը, որ բերվում է իբրև նրա 1817 թվ. հունվարի 2-ի նամակը Այնուհետև ղևտեղված են Բայրոնի 1816 թվ. դեկտեմբերի 5-ի և դեկտեմբերի 4-ի նամակները, ուր Բայրոնը խոսում է հայերեն լեզվի առանձնահատկությունների և այն պատճառների մասին, որոնք մղել են նրան հայ լեզվի ուսումնասիրությանը:

Նամակներին հաջորդում են այն հատվածները, որոնք Բայրոնը գրաբարից թարգմանել է անգլերենի՝ խորենացու «Պատմութիւն Հայոց», Ն. Համբրոնացու «Ատենաբանութիւն»-ը, «Թուղթ Կորընթացոցն առ սուրբ առաքեալ Պաւղոս...», «Թուղթ Պաւղոսի առ Կորընթացիս»: Բայրոնի պոեզիայից այստեղ տրված են նմուշներ անգլերեն և գրաբար լեզուներով: Օրինակ՝ «Կոտորած բանակին Սենեքիբիմայ», «Ուղերձ առ ովկիանոս», «Ի Վադրլու», «Առ ժամանակ», «Տաղ Լրգեալ ի շանթաձիգ Մրրիկի», «Տաճար Ս. Պետրոսի» և այլն:

Բացի Բայրոնի ստեղծագործություններից, կան նաև հատվածներ՝ Ա. Պոպի, Գրեյի, Տըպլըրի, Միլտոնի երկերից:

1855 թվ. լույս է տեսնում «Հատուածք քերթուածոց և թարգմանութեանց» գիրքը, գրեթե նույն բովանդակությամբ:

Տես նաև՝ Բայրոն Զ. Գ. Հայերեն վարժություններ և բանաստեղծություններ...

72. Յուլաւան տնգլիական գրականության /Առաջին շարք/ /Հայացոյց՝ Սահակ Մեսրոպ.— Կ. Պոլիս: Տպագր. «Կոհակ»-ի, 1913.— 154[4] էջ. նիլ.— /«Ավետարան»-ի մատենաշար թիվ 4/.

Բովանդ.՝ Առաջաբան /Ֆ. Ու. Մեքսլըմ/; Երկու խոսք /Սահակ Մեսրոպ/; ԷՄԸՐՍԸՆ ՐԱԼՖ ՈՒԱԼԴՈՒ Գանբըրաի Երգը; «Րանտարա»-ն; ԹԵՆԻՍԸՆ ԱԼՖՐԵԴ: Օրերն որ այ մեռած են... ՔԼԹԵԼՎԱԼԵՆ վաշտին տրձակումը; Հնչեցեք զանդեր; Սրինգին Երգը; Հատուած մը «Ին Մէմորիամ»-էն; ԼՈՆԴՅԵԼԼՈ ՇԵՆՐԻ Վ. Հրեշտակներու ոտնաձայնը; Իրիկուն է; Գլուղին դարբինը; Ավելի վեր; Մանուկներու ժամը; Կյանքի սաղմոսը; Սուրբ Օգոստինոսի սանդուխը; Պատին ժամացույցը; ԳՐԵՅ ԹՈՄԱՍ: Եղերեբը; Տապանագիրը; ՀԸՆԹԵՆ Հ.: Ապու Պէն-Ատհէմ; ՀԻՄԷՆԱ ՖԵԼԴՊԱ. Ընտանիքի մը շիրիմները; Գասապիանքա; ՀՈՒԻԹԻԸՐ

ԶՈՆ ԳՐԻՆԼԻՖ: Մոտ Միլլեր; Իմ սաղմոսս; ՀՈՒԴ ԹՈՒՄԱՍ: Շապիկին երգը; ՄԻՆՏՈՆ ԶՈՆ, Հնչյակ: Փիէտմըն-տի վերջին ջարդին վրա; ԹՈՄԱՍ ՄՈՒՐ, Հայրենիքիս քաղցր քնար; Սա զանգակներն իրիկուան; Մարիամին երգը; Սա վերջին վարդն է ամառուան, ՆՈՐԹԸՆ ԳԱԼՈՐԻՆ, «Մնաս բարով» կըսէ արապըն իր ձիուն; ՇԵԼԼԻ ՊԵՐՍԻ ԲԻՇԷ: Արտույտին; Փոփոխութիւն; Ամպը; ՈՒՈՏՍԸՆ: Գեղեցիկ ձիւն, ՈՒՐԴՍՈՒՐԴ ՈՒԻԼՅԱՄ, Յոթն հոգի ենք; Հնչյակ; Տաղ առ պարտականութիւն; Հոգիին նախագոյութիւնք, ԼՈՐԴ ԲԱՅՐՈՆ ԶՐՈՋ ԳՈՐԴՈՆ, Սենեքերիմի ավերումը; Շիլիոնի կալանավորը; ԲՐԱՅԸՆԴ ՈՒԻԼՅԱՄ: Պատերազմի դաշտը; ԲՐԱՈՒՆԵՆԳ ԵԼԻՋԱԲԵԹ, Քունը; ՍԱՌԹԻ ՌՈԲԵՐՏ: Պէնհայմի ճակատագիրը; Ինչքեյի ժայռը; ՍՏՈՐԻ ՈՒԻԼՅԱՄ, Հաղթածին, ՍՊԵՆՍԷՐ ՈՒԻԼՅԱՄ: Պէթհ-Կէլլերգ; ՍԿՈՏՏ ՎԱԼՏԵՐ, Լախինվար; ԲԵՅՆ ԶՈՆ ՀՈՎԱՐԴ, Հայրենիք, քաղցր հայրենիք; ԿԱՌԻՊԸՐ ՈՒԻԼՅԱՄ: Պատկերին դիմաց; Ձմռան երեկո; Տաղեր, ԿԻՆԳՍԼԻ ՉԱՐԼԸՋ, Երեք ձկնորսները; ԿԻՅ ԶՈՆ, Տաղ; ԿՈԼԸՐԻՋ ՍԱՄՈՒԷԼ ՏԵՅԼՈՐ, Բոլոր արարածներու սերը; Հոգիներու հրգը; ՕԼԻՎԵՐ ԳՈԼԴՍՄԻԹ, Գյուղն ամառի, Օ'ԿՈՆՆԸՐ ՄԻՇԱԷԼ: Զարթոնք գինձորներուն; Օ' ՀԱՐԱԹԵՈՒՐ, Մեռեալին բանակետը; ՕՊԻԷ ԱՄԷԼԻԱ: Որբուկին պատմութիւնը; Մի մոռնար դիս; ՖԵՅԲԸՐ ՖՐԵԴԵՐԻԿ ՈՒԻԼՅԱՄ, Շիտակը պետք է հաղթէ, ԷԼԻԵԹ ԷՊԻՆՋԸՐ, Բանաստեղծի մը տապանագիրը; Այլ հեղինակներէ խանութի՝ Լույսերու մեջ; Մի՛ սիրեր զիս զեղիս համար; Լորդ Լովել; Գիշեր բարի:

Անգլիական բանաստեղծներէց թարգմանված հոտորետիք քաղվածքների ժողովածու է, աշխարհարար, արևմտահայ լեզվով, շտփածու:

Թարգմանությունը բնագրից կատարել է՝ Սահակ-Մկրտչու:

Դրբում գետեղված են՝ համառոտ առաջարտն և թարգմանչի ներածական խոսքը սույն ժողովածուի թարգմանությունն և հրատարակության առթիվ:

Կազմակից է Մ. Ամպերպոյանի՝ «Մարդն» գրքին, Տես՝ ալիգ. 4. 73*, Քերթվածք Լորդ Բայրնի կամ ծաղկաքաղ Լ. Բայրնի և

ուրիշ անգլ. հուշակավոր քերթողներու գրվածներեն /Անգլ. թարգմ. Հ. Ղևոնդ Մ. Ալիշան.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1907.—147 էջ.

Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա՝ Պետական գրադարանում չկա՝ Լույս է տեսել բնագրի հետ միասին:

Տես՝ «Գրացուց. Վենետիկի Մխիթ.»,— Վենետիկ, 1960, էջ 60.

74*. Քերթվածի Լորդ Բայրնի կամ ծաղկաքաղ Լ. Բայրնի և ուրիշ անգլ. հուշակավոր քերթողներու գրվածներեն /Անգլ. թարգմ. Հ. Ղևոնդ Մ. Ալիշան.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1887.—147 էջ.

Նկարագրված է ըստ մատենագիտական աղբյուրների՝ Պետական գրադարանում չկա:

Տես՝ «Գրացուց. Վենետիկի Մխիթ.»,— Վենետիկ, 1960, էջ 60.

Առանձին երկեր

75. I Արլ: Ակվա /Աքվա/: Անգլիական հեքիաթ: II Առաջին ձեռագիրներ /Թարգմ. Կարեն Միրիանյան.— Թիֆլիս: Տպ. «Հերմես», 1911.—16 էջ.

Աշխարհաբար թարգմանություն անգլերեն բնագրից: Հեղինակի մասին չի հիշատակված: Արտատպված է «Հասկեր» մասագրից՝ նախատեսված է մանուկների ընթերցանության համար:

76. Աղետալի դիպվածք Իսլանտիու /Պատմական վեպ /Թարգմ. Փիլիպպոս Յատիկյար].— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1896.—313 [3] էջ.— /Շարք բնաթիւ պատմութեանց/.

Աշխարհաբար թարգմանություն տեղիերեն բնագրից, արեւմտահայերեն: Թարգմանություն մասին եզրակացությունն արվել է տեքստի ուսումնասիրություն հիման վրա:

Հեղինակի և թարգմանչի մասին պրքում չի հիշատակված: Թարգմանչի վերաբերյալ տեղեկությունները վերցված են Ա. Ղալիկյանի մատենագիտությունից /Ղ հտ. 1, էջ 107/:

Ուսյն վիպատառությունը լույս է տեսել «Շարք բնաթիւ պատմութեանց» մատենաշարով, որոնք հրատարակվել են մի քանի հատորներով:

Կազմակից է՝ «Վիլհեմ կամ քրիստոնեական ներողամտություն» դրքին: Տես՝ ախղ. 4.

77. Անգեղա Քաճիուլի կամ նախախնամության գաղտնիքը /Թարգմ. Տիգրան Հարություն Տեռեյան.— Զմյուռնիա, Տպ. Տեռեյանի, 1862.—32 էջ.

Թարգմանությունը կատարված է բնագրից, արևմտահայերենի Թարգմանության մասին եզրակացությունն արվել է գրքույկի ուսումնասիրության հիման վրա: Հեղինակի մասին հիշատակություն չկա:

78*. Արլեն Մայլ, Կանաչ զլխարկ, /Վեպ/ /Թարգմ. Հերմինե Իսկենդեր, /Ա. տ. և թ./.—350 էջ.

Աշխարհաբար թարգմանություն անգլերենից, արևմտահայերեն:

Գրքում ղետեղված է թարգմանչի առաջաբանը վեպի նշանակության և թարգմանության առթիվ: Այնուհետև, տրված է հեղինակի սույն երկի վերաբերյալ եղած կարծիքները, որոնք հրապարակվել են մամուլում:

Գրքի տպագրության վայրի և տարեթվի մասին նշումներ չկան:

Գիրքն առանց տիտղոսաթերթի է, նկարագրված է առաջաբանի հիման վրա:

79. Բայրոն Զորջ Գորդոն, Դոն-ժուան, Երգ առաջին /Անգլ. թարգմ. Լ. Աբրահամյանց.— Մոսկվա, Տպ. Ք. Բարխուդարյանի, 1894.—94 էջ, 1 ներդ. թ. դիմանկ.— Տիտղթ. վրա՝ «Բայրոն Զորջ Գորդոն /լորդ/»:

80. Բայրոն Ջ. Գ. Երազը /Թարգմ. Հովհաննես Խան Մասիսյան.— Թեհրան, Տպ. «Մոդերն», 1894.—12 էջ.

Սույն հրատարակությունը դրսևում է Մատենադարանի պատկարանում:

Մ

81. Բայրոն Ջ. Գ. Երկինք և երկիր Սրբազան ողբերգ. Ի լուրս Պայլուն /Թարգմ. օր. Դոմնի Գաբրիելյան.— Կ. Պոլիս, Զ. Գրլլենյանի պատուով, /տպ. Օ. Արլումանի/, 1911.—43 էջ.— /Մատենադարան հայ գրակ. թ. 2/.

82. Բայրոն Ջ. Գ. Երկինք և երկիր Սրբազան ողբերգ. Ի լուրս Պայլուն /Թարգմ. Ի գաղղիական է Դոմնի Գաբրիելյան, աշակերտուհի Ագապյան վարժարանի.— Կ. Պոլիս, 1874.—35 էջ.

Աշխարհաբար թարգմանություն ֆրանսերենից, արևմտահայերեն, արձակ ողբերգություն:

Գրքույկում զետեղված է Դոմնի Գաբրիելյանի ուղերձը «Առ յգական սեռն Հայկազուն» խորագրով:

Տիտղթ. վրա՝ «Բայրըն Զորջ Գորգոն /լորդ/»:

83. Բայրոն Ջ. Գ. Իտալիա /Չալլո Հարոլդից մի հատված/ 4-րդ տպագր. [Թարգմ. անգլ. Հ. Ղևոնդ Մ. Ալիշան].— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1901.—147 էջ.— /Տեքստը՝ անգլ. և հայեր. լեզ./: Բովանդ.՝ Ազգ. /Առաջաբան թարգմանչի/, էջ 3—7; Իտալիա, էջ 8—133; Ծանոթութիւնք, էջ 135—147.

Առաջին տիտղոսաթերթի վրա կա անգլերեն տեքստ. Թարգմանությունը գրարար է: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանիչը Վենետիկի միաբ. Մխիթարյաններից՝ Հ. Ղևոնդ Մ. Ալիշանն է, որը կատարել է նաև սույն ստեղծագործության նախորդ հրատարակությունների թարգմանությունները: Գրքում զետեղված է անգլերեն բնագիրը:

Վենետիկի Մխիթարյանները շնայած իրենց կրոնական պահպանողական աշխարհայեցողությանը, որոնք հանդես էին գալիս ի պաշտպանություն կլասիցիզմի և կաթոլիկ կղերականության, այնուամենայնիվ մեծ ծառայություն մատուցեցին հայ դրականությանը, թարգմանելով բաղմամբով դրքեր՝ հայագիտական, պատմական, բանասիրական, աշխարհագրական, կրոնաբարոյախոսական բովանդակության և վերջապես օտարազգի գրողներից թարգմանված գեղարվեստական դրականությունը:

84*. Բայրոն Ջ. Գ. Իտալիա (Քերթսոսք, Մի երկ Չալլո Հարոլդից) /Անգլ. թարգմ. Հ. Ղևոնդ Մ. Ալիշան.— Վենետիկ, Ս. Ղազար, 1891.—146 էջ.

Սույն հրատարակությունը պետտիտն գրադարանում չկա: Նկատարվում է մատենադիտական աղբյուրների հիման վրա:

Ա. հրատարակությունը լույս է տեսել 1860 թ.

Բ. հրատարակությունը՝ 1872 թ.

Գ. հրատարակությունը՝ 1889 թ.

Տեա՛ «Գրացույց. Մխիթ. տպ.» Վենետիկ, 1960, էջ 52.

85. Բայրոն Ջ. Գ. Իտալիա (Չալլո Հարոլդից մի հատված) 3-րդ տպագր. [Թարգմ. անգլ. Հ. Ղևոնդ Ալիշան].— Վենետիկ, Ս. Ղազար, 1889.—147 էջ.— /Տեքստը՝ անգլ. և հայեր. լեզ./:

Բովանդ.՝ Աղդ; /Առաջաբան թարգմանչի՝ էջ 5—7; Իտալիա՝ էջ 8—133; Ծանոթութիւնք՝ էջ 135—147/.

Գրքում թարգմանիչը չի նշված, թարգմանությունը բնագրից կատարել է Վենետիկի Մխիթարյաններից՝ Հ. Ղևոնդ Մ. Ալիշանը:

Թարգմանությունը գրաբար է, գրքում զետեղված են անգլերեն և հայերեն տեքստերը:

Տիտղթ. վրա՝ «Բայրըն Զորջ Գորդոն /լորդ/»:

86. Բայրոն Զ. Գ. Իտալիա (Զայլդ Հարուլդից մի հատված...) [Թարգմ. անգլ. Հ. Ղևոնդ Մ. Ալիշան Վենետ. Մխիթար. միաբ.]. — Վենետիկ, Ս. Ղազար, 1872.—147 էջ.

Բովանդ.՝ Աղդ; /Առաջաբան թարգմանչի՝ էջ 5—7; Իտալիա՝ էջ 8—133; Ծանոթութիւնք՝ էջ 135—147.

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից՝ գրաբար: Տեքստը տրված է անգլ. և հայերեն լեզուներով: Թարգմանչի մասին տիտղոսաթևքում չի հիշատակված: Թարգմանիչը Վենետիկի Մխիթարյաններից՝ Հ. Ղևոնդ Մ. Ալիշանն է:

Տիտղթ. վրա՝ «Բայրըն Զորջ Գորդոն /լորդ/»:

87. Բայրոն Զ. Գ. Իտալիա (Զայլդ Հարուլդից մի հատված...) /Անգլ. թարգմ. Հ. Ղևոնդ Մ. Ալիշան. — Վենետիկ, Ս. Ղազար, 1860.—146 էջ. — /Տեքստը՝ անգլ. և հայեր. լեզուներով/:

Բովանդ.՝ Աղդ; /Առաջաբան թարգմանչի՝ էջ 5—7; Իտալիա՝ էջ 8—133; Ծանոթութիւնք՝ էջ 135—146.

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից՝ գրաբար: Վենետիկի Մխիթարյանների 1960 թ. գրացուցակում /էջ 53/ նշված է գրքի մասին հետևյալը՝ «Գրաբար ուսանավոր Գերթուած: Դ. Լուգ Զայլտ Հարուլտի ուղևորութիւնը գործին...»: Գրքում զետեղված է նաև անգլերեն բնագիրը:

88. Բայրոն Զ. Գ. Մովահենը /կնդլ. բնագրից թարգմ. Հ. Զ. Միրզայանց. — Թեհրան: Հրատ. «Փարոս» սուպարանի, Արաղատիոյ տպ. «Փարոս», 1911.—206/1/ էջ.

Բովանդ.՝ Թարգմանչի ձօնը եփրեմիան: Թարգմանիչ՝ Հ. Զ. Միրզայանց, էջ Ա—Բ; Հեղինակի ձօնը; 1814; Պարոն Թովմաս Մօրրին; Հեղ. Բայրըն, էջ Գ—Ը; [Մովահենը; Նուագ Ա, Բ և Գ. էջ 1—203]; [Ծանոթութիւններ, Նուագ Դ. հատուած 3-րդ, տուն 3] [Ծանոթություն հեղինակի, էջ 204—206]. Տիտղթ. վրա՝ «Բայրըն Զորջ Գորդոն /լորդ/»:

Սույն հրատարակությանը կալմակից է կտրվեն Սիլվայի
«Ասդրա» գիրքը: Կ. Պոլիս, 1892.

89. Բայրոն Զ. Գ. ...[Հայերեն վարժություններ և բանաստեղ-
ծություններ].— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1907.—148 էջ.—
/Տիտղթ. վրա հեղ./ Lord Bajron's Շմուց տիտղթ. վրա՝ Lord
Bajron's english and Armenian Handwriting.

Բովանդ.՝ Ի թղթոց լորտ Պայրընի՝ Առ պ. Մուր; Առ պ. Մըրի;
Թարգմանութիւնք լորտ Պայրընի՝ հատուածք պատմու-
թեանն հայոց թարգմանեալք ի լորտ Պայրընէ ի հրա-
հանգս անձինն ի հայ բարբառ; Հատուածք ատենաբա-
նութեան Ս. Ներսեսի կամբրունացոյ թարգմանեալ ի
լորտ Պայրընէ; Թուղթ կորնթացոցն առ սուրբ առաքեա-
լըն Պաւղոս: Թարգմանեալ ի լորտ Պայրընէ; Թուղթ
Պաւղոսի առ կորնթացիս: Թարգմանեալ ի լորտ Պայրընէ;
Լորտ Պայրընի քերթածք՝ կոտորած բանակին Սենեքե-
րիմայ; Ուղերձ առ ովկիանոս; Ի Վաղերլու; Առ ժամա-
նակ; Տաղ երգեալ ի շանթածիգ մրրկի; Տաճար ս. Պետ-
րոսի; Ի մահ օրիորդի միոյ քեռորդի քերթողին եւ սիրի-
լի յոյժ նմա; Առ դուքսն Տորսէդ; Արտասուք; Յետին
տողք Պայրընի:

Թարգմանությունը կատարված է գրաբար: Թարգմանիչը չի
նշվում: Բայրոնի բանաստեղծությունների սույն թարգմանույթյունը
կատարել է Վենետիկի Միթարյանների միաբան՝ Հ. Ղեոնդ Մ. Այի-
շանը: Գրքում տրված է նաև Լորդ Բայրոնի թարգմանությունները
հայերենից-անգլերեն՝ «Թարգմանութիւնք լորտ Պայրընի» խորա-
դրով /էջ 18—53/: Տեքստը՝ հայերեն-անգլերեն և անգլերեն-հայե-
րեն լեզուներով:

Տիտղթ. վրա՝ «Բայրըն Զորք Գորդոն /լորդ/»:

Տես նաև՝ Ծաղկաքաղ քերթողաց անդդիա-
ցոյ...

90. Բայրոն Զ. Գ. ...[Հայերեն վարժություններ և բանաստեղ-
ծություններ].— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1870.—171 էջ.

Բովանդ.՝ Ի թղթոց լորտ Պայրընի՝ Առ պ. Մուր; Առ պ. Մըրի;
Թարգմանութիւնք լորտ Պայրընի՝ Հատուածք պատմու-
թեանն հայոց թարգմանեալք ի լորտ Պայրընէ ի հրա-

հանգս անձինն ի հայ բարբառ: Հատուածք ատենաբանութեան Ս. Ներսեսի կամբրոնացոյ թարգմանեալ ի լորտ Պայրընէ; Թուղթ կորընթացոցն առ սուրբ առաքեալն Պաւղոս, թարգմանեալ ի լորտ Պայրընէ; Թուղթ Պաւղոսի առ կորընթացիս թարգմանեալ ի լորտ Պայրընէ; Լորտ Պայրընի քերթուածք՝ կոտորած բանակին Սենեքերիմայ; Ուղերձ առ ովկիանոս; Ի վաղերու; Առ ժամանակ; Տաղ երգեալ ի շանթաձիգ մերկի; Տաճար ս. Պետրոսի; Ի մահ օրիորդի միոյ քեռորդի քերթողին եւ սիրելի յոյժ նմա; Առ դուքսն Տորսէյ; Արտասուք; Յետին տողք Պայրընի:

Թարգմանությունը կատարւած է գրաբար: Թարգմանիչը չի նշված: Թարգմանությունը կատարել է վենետիկի Մխիթարյաններից Հ. Ղևոնդ Մ. Ալիշանը: Գրքում տեքստը տրված է անգլերեն և հայերեն լեզուներով, ինչպես նաև Լորդ Բայրոնի թարգմանությունները՝ հայերենից անգլերեն՝ «Թարգմանութիւնք լորտ Պայրընի» խորագրով:

Շմուց տիտղթ. վրա անգլերեն տեքստ՝ Lord Bajron's english and Armenian handwriting և Բայրոնի ստորագրությունը /տպագիր/:

Տիտղթ. վրա՝ «Բայրըն Զորջ Գորդոն /լսող/»:

Տեքստը և տիտղթ. նաև անգլերեն:

Տես նաև՝ Մաղկաքաղ բերթողաց տնիղիացոյ...

91. Բայրոն Զ. Գ. Մանֆրեդ: Ողբերգական քերթվածք: 3 արար. /Թարգմ. անգլ. բնագրից՝ Տիրայր վարդապետ.— Թիֆլիս, Հրատ. Կովկասի հայոց հրատարակչ. ընկ., տպ. օր. Ն. Աղաոնյանի, 1913.— 124 էջ.— /Հանրային մատենադարան № 13/.

Տեքստի վերջում՝ «Մանոթութիւններ» [էջ 121—124], Լրացուցիչ տիտղթ. անգլերեն:

Սույն հրատարակությունը կազմակերպել է Ա. Կ. Տոստոյի՝ «Իոանն Ահնդի մահը» զրքին: Թիֆլիս, 1913: Տես՝ ալիւ. 4.

Տիտղթ. վրա հեղ.՝ «Լորդ Բայրոն»:

Շպկ-ի 2-րդ էջի վրա տպագրված է լույս տեսած գրականության ցանկ /21 անուն/:

92*. Բայրոն Զ. Գ. Մանֆրեդի Ողբերգ. /Անգլ. Թարգմ. Ա. Մ. Եղեկյան.— Վենետիկ, 1907, 68 էջ.

Սույն հրատարակությունը պետական գրադարանում չկա՝ նկարագրված է մատենադիտական աղբյուրների հիման վրա՝ Տես՝ «գրաքույց. Վենետիկի Մխիթ. /1716—1960/» Վենետիկ, 1960, էջ 56.

93. Բայրոն Զ. Գ. Շիլիսնի կալանավորը /Թարգմ. Հովհաննես Թումանյանց.— Թիֆլիս, Հրատ. Փիլիպպոս Վարդադարյանցի, տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1896.—23/1/ էջ.

Սույն հրատարակությունը կազմակերպել է Պ. Պոստյանին՝ «Միքել Աղինց Արդյունը» գրքին Տես՝ ալիդ. 8.

Թարգմանությունը կատարված է ուսերեն հրատարակությունից՝

94. Բայրոն Զ. Գ. Շիլիսնյան կալանավորը Բերված լսրո Բայրոնի /Թարգմ. անգլ. Մովսես Զոհրապյանց Արցախյանց, Երկրորդ տիպ.— Շամախի, Տպ. Իսկևյանի, 1857.—24 էջ.

Թարգմանությունը կատարված է ղրաբար Բայրոնի այս ստեղծագործության 1856 թվ. հրատարակությունը լույս է տեսել Մովսես Զոհրապյանի՝ «Պարտապոյ յումք» գրքում՝ Մասն Ա. էջ 131—153.

Թարգմանվելը գրքի 2-րդ էջում համառոտ պատմական տեղեկություններ է տալիս Շիլիսնի բանտի մասին, գնահատում է Բայրոնի ջերմ հայրենասիրությունը, նրա ժողովրդասիրությունը, ազատասիրությունը, անձնագոհությունը։

95. Բայրոն Զ. Գ. Շիլիսնյան կալանավորը Մասն Ա. /Թարգմ. Մովսես Զոհրապյանց.— Շամախի, 1856.—22 էջ.

Գրաբար թարգմանություն բնագրից, չափածո՝ Տեքստից առաջ դետեղված է՝ «Համառոտ բացատրություն և դիրք Շիլիսնի դեկի» հատվածը։ Տես՝ էջ 131—153.

Սույն երկը տպակից է Մովսես Զոհրապյանցի՝ «Պարապոյ յամք» գրքին։

96. Բայրոն Զ. Գ. Շիլիսնյան կալանավորը /Թարգմ. Մովսես Զոհրապյան.— Շուշի, Տպ. «Վիճակաւոր առաջնորդին Ղարաբաղու բարձր սրբազան մեսրոպոլտի Բաղդասարայ», 1837.

Հայ անվանի մատենագետ և բանասեր Հ. Դավթյանը իր «Հայ գիրքը 1801—1850 թվականներին» մատենագիտության մեջ նշել է.

«Այսպիսի հրատարակութեան մասին հիշատակում է Լեոն 1915 թ. Թիֆլիսում հրատարակված «Պատմութիւն Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի» գրքում, գրելով. «Շուշու կոնսիստորիայի կազմած մի ցուցակից մենք մեծ հաճութեամբ տեղեկանում ենք, որ Բաղդասար մետրոպոլիտի տպարանի անդրանիկ պատուըր եկեղեցական գիրք էլ չէր, այլ «Շիլիոնեան կալանաւորը» տպուած 1837 թուականին, դարձեալ Մետրոպոլիտի թույլտուութեամբ: Տարաբախտաբար մենք չունինք այս տպագրութիւնը...»:

Սովետական Միութեան և ոչ մի գրադարանում չի գտնվել սույն տպագրությունը: Զարբհանալյանը, Ղազիկյանը, Թեոդիկը և անցյալի մյուս մատենագետները չեն նկարագրել: Այսպիսով, մինչև այժմ ոչ մեկը չի տեսել նման հրատարակություն, մի հանգամանք, որ ինքնին կասկածելի է դարձնում այդպիսի հրատարակության գոյությունը: Մինչդեռ գրադարաններում շատ է հանդիպում այդ գործի 1857 թվ. Շամախի տպագրությունը՝ «Երկրորդ տիպ» նշումով: Հայտնի է, որ Բայրոնի այդ ստեղծագործությունը տպագրվել է նաև 1856 թվ. դարձյալ Շամախիում հրատարակված Մովսիս Զոհրապյանի «Պարապոյ ժամբ» թարգմանական և ինքնուրույն գրվածքների ժողովածուի Ա պրակում /էջ 131—153/: Եթե 1837 թ. տպագրությունը գոյություն ունենար, 1857 թ. հրատարակությունը կլիներ ոչ թե երկրորդը, այլ երրորդը: Լեոյի հայտնած տեղեկությունը սրել թյուրիմացության արդյունք է, նկատի պետք է ունենալ նաև, որ Մովսիս Զոհրապյանի աշխատությունները սկսվել ևն հրատարակվել 1850-ական թվականներին:

[2. Դավթյան «Հայ գիրքը 1801—1850 թթ.», էջ 224/.

97. Ռայրոն Զ. Գ. /Զայյղ Հարսղյ, Հատված «Դոգերի քաղաքը»/ |Թարգմ. Դեոնղ Ալիշան.— Վենետիկ, Տղ. ս. Ղաղարի, 1855, էջ 38—44.

Սույն հրատարակությունը տպակից է՝ *Dianachian mesropi* «Lord Byron a Saint hazare» գրքին:

Գրաբար թարգմանություն, չափածու: Անգլերեն տեքստի հետ տրված է նաև հայերեն թարգմանությունը:

98. Բատտեն Մորտիմեր: Ամերիկա գաղթածների կյանքից: |Պատմվածք Մորտիմեր Բատտենի| |Թարգմանություն ռուսերենից.— Թիֆլիս: Հրատ. քժ. Ա. Բուդուղյանի, տպ. «Հերմէս», 1914.— էջ 75—85.

Սույն պատմավածքը տպակից է Ի. Ֆ. Սվիստունի՝ «Զորավարէրնձան» գրքին: Թիֆլիս, 1914.

99. Բառուեմ: Փայլուն կոպեկի /Մանկական վեպիկ/ /Թարգմ. Գրիգոր Շահբուդսյան.— Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանի, 1893.—64 էջ.

100. Բառուեմ: Փայլուն կոպեկի /Մանկական վեպիկ/ /Թարգմ. Գրիգոր Շահբուդսյան.— Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանի, 1885.—61 էջ.

101. Բերենա Ֆրենսիս: Փոքրիկ լսողի պատմությունը /վեպիկ/ /Ազատ թարգմ. Գ. Բաղր.: Պատկերավարդ.— Բագու: Տպ. Շահբազյանի և Ախունդովի, 1898.—[1], 186 էջ.

Թարգմանված է ռուսերեն հրատարակությունից: Գրքում գիտողված է առաջաբան թարգմանչի կողմից:

102. Բրիև Լոմեն: Ավերվածները /Թարգմ. անգլ. դոկտ. Մ. Գ. Տեյրիմենճյան.— Բոստոն: Տպ. «Հայրենիք», [1913].—178 էջ, նկ.— Տիպոթ. վրա հեղ.՝ «էօմեն Պրիւս»:

Գրքի սկզբում տրված է դոկտոր Ավետիս Գույումճյանի կողմից գրված առաջաբանը [էջ 5—11], Այնուհետև սույն հրատարակության վերաբերյալ մամուլում լույս տեսած արձագանքները «Մամուլի նոթեր» խորագրով [էջ 12—22], Այս գիրքը վեր է ածվել դրամայի և 1913 թվ. ներկայացվել է Նյու-Յորքի թատրոններում: Մեր կարծիքով գրքի հրատարակության ուտրիսթիվը 1913 թվականին է, տես՝ էջ 12:

103. Բրոնտե Շարլոտա: Զեյն էյր [Երկու հատորով] /Թարգմ. Մ. Հ. [օր Մարինոս Հ.] Սաամպսոնյան: Հո. Ա. և Բ.— Կ. Պոլիս: Տպագր. Հ. Մատթեոսյանի, 1908.—

Հո. Ա. 318 էջ.

Հո. Բ. 336 էջ.

Թարգմանված է անգլերեն բնագրից, արևմտահայերեն:

Գրքի սկզբում տրված է թարգմանչի նամակը ուղղված «Տիկին Զապել Հ. Ասատուրին» սույն թարգմանության առթիվ և Զապել Հ. Ասատուրի պատասխան նամակը՝ թարգմանչին [էջ Գ—է]: Այնուհետև կենսագրական ակնարկ՝ «Զարլոթ Պրոնդէ» խորագրով գրված թարգմանչի կողմից [էջ Թ—ԺԴ], Գիրքը բաղկացած է երկու հատորից, մի կազմի մեջ:

104. Բուլվեր-Լիտտոն Հենրի: Պոմպեյի վերջին օրերը: Պատմական վեպ / Թարգմ. անգլ. Ն. Միրզոյան.— Թիֆլիս: Հրատ. Գ. Գալստյանի, տպ. Մ. Ռոտինյանցի, 1903.—752 էջ.— Տիտղթ. վրա հեղ.՝ Վերդ Լիտտոն:

Գրքի սկզբում տրված է «նախաբան» Ն. Առաքելյանի [էջ 3—11] և «Առաջաբան հեղինակի» [էջ 15—23]:

105. Գեորգ Ռալլեստոն: Թարգմ. անգլ. Հարոթյուն սարկ. Առաքելյանց.— Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.—168 էջ.— Պատանիների համար/.

Գրքույկը նախատեսված է մանկական բնթրցանույթյան համար: Հեղինակը հայտնի չէ, թարգմանությունը կատարված է բնագրից: Գրքի սկզբում տրված է առաջաբան թարգմանչի կողմից /էջ Ա—Դ/: Վերջում տեղեկություններ և հայտարարություններ Հարոթյուն սարկավազ Առաքելյանցի /Աղանյանցի/ ալ թարգմանությունների մասին /էջ 166—168/.

106*. Գիշեր՝ Յուսիկ /Ողբերգ./ Թարգմ. անգլ. բնագրից՝ Արմենակ Ն. Զիլմեճյան.— Կ. Պոլիս: Տպագր. Ռուրեն Ն. Քյուրբեջյանի, 1861.—130 էջ.

Պիտական դրադարանում չկա: Նկարագրությունը տրված է մոտենուդիտական աղբյուրների հիման վրա: Հեղինակի մասին չի նշված:

Տես՝ «Յանկ... ի գրատուն Հովսեփոս Գովաֆյան» Կ. Պոլիս, 1890, էջ 2.

107. Գուղսմիթ Օլիվեր: Գյուղն ամառի /Պոեմ/ /Անգլ. բնագր. թարգմ. Ն. Մաղաթիա Պիտրոսյան.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1871.—65 էջ.

Տեքստը տրված է անգլերեն և հայերեն լեզուներով: Տխուր սաթերթի վրա նկարագրությունն անգլերեն է: Գրքի սկզբում գետեղված է հեղինակի նամակը՝ «To sin «Reynolds»-ին:

108. Գուղսմիթ Օլիվեր: Վեքֆիլդի երեց: Անգլիական հեղինակի՝ Օլիվեր Գուդամիթի գործը /Թարգմ. Ֆրանս. լեզվից աշխատասիր. Մ. Բուդուղյանցի.— Մոսկվա: Տպ. Արևելյան լեզուների լազարյան ճեմարանի, 1865.—232[4] էջ, 1 թ. հեղ. պորտր.

Գրքի սկզբում տրված է խորագիր՝ «Հեղինակի ծանուցումը»:

109. Գուղսմիթ Օլիվեր, Վեքֆիլդի երեցը /Անգլ. թարգմ. Կա-

րապետ Ս. Յուրյուճյան.— Կ. Պոլիս: «Ի տպարանի Մասիս լրագրոյ», 1863.—569 էջ.— Տիտղթ. վրա հեղ.՝ «Կօլտսմիթ».

Գրքի սկզբում տրված է «Յառաջաբան թարգմանչին» որին հետևում է «Ազգ» հեղինակի /Օլիվեր Կօլտսմիթ/ Թարգմանությունը կատարված է բնագրից, գրաբար:

110. Գոլդսմիթ Օլիվեր, Փոխերեցն Վեկֆիլդայ /Թարգմ. անգլ. Թարգման. և. Ավետում.— Կալկաթա: Տպ. Արարատյան ընկ., 1848.—8 չհ. 309, 3 չհ. էջ.— Տիտղթ. վրա հեղ.՝ «Օլիվեր Գօլդսմիթայ»:

Բովանդ.՝ Ի յիշատակ Յովսեփայ մանուկեան նահապետի... /Թ. և. Ա./, հոսք թարգմանչի՝ «Առ պատուելի ընթերցողս» խորագրով; Ազգ /Օլիվեր Գոլդսմիթ/; Փոխերեցն Վեկֆիլդայ; Վարք հեղինակին:

Դրարար թարգմանություն անգլիկին բնագրից:

Դրքում ղեկեղված են՝ թարգմանչի համառոտ խոսքը ուղղված բնթերցողին, հեղինակի «Ազգ»-ը և Օ. Գոլդսմիթի կյանքի ու գրական գործունեությանը նվիրված ներածություն՝ «Վարք հեղինակին» խորագրով:

111. Գրեյկ Մյուրոկ, Կաղ իշխանիկը և իր թոշող լողիկը: Առակ մը դեռաախներու և տարեցիներու համար /Թարգմ. գրիչ. Քնար.— Կ. Պոլիս: Տպ. Քեշիշյանի, 1913.—147 էջ.—/ «Ավետաբեր» մատենաշար, թիվ № 2/.— Տիտղթ. վրա հեղ.՝ «Միսիս Մրյուրք Քրեյք...»:

Աշխարհաբար թարգմանություն անգլիկին բնագրից, արևմտահայերեն:

Նախատեսված է պատանիների ընթերցանության համար:

Գրքի վերջում ղեկեղված են՝ «Ավետաբեր մանկանց» պատկերազարդ ամսաթերթի նպատակների մասին, համառոտ ծանուցում և «Ավետաբեր մատենաշար»-ի հրատարակությունների ցուցակը:

112. Դադոնե Կարլ, Ոսկե կուռքի գանձը (Կարլ Դադոնեից).— Թիֆլիս: Հրատ. բժ. Ա. Բուդուդյանի, տպ. «Կուլտուրա» ընկ. 1913.—48 էջ.

Թարգմանչի մասին գրքույկում չի հիշատակված: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է անգ-

լերեն բնագրից, Սույն հրատարակությունը տպակից է Մայն Ռիդի՝ «Կորած սարը» գրքին, Տես՝ ալիգ. 2.

113. Դեբս Գեորգ: Կույր երգչուհին: Ռոմանտիկ թատերիկ. 3 արար./ Անգլ. թարգմ. Միքայել Հ. Բարթիկյան... Մենրար.— Իզմիր: Տպագր. Մամուրյանի, 1914.—80 էջ.— Տիտլթ. վրա հեղ.՝ «George H. R. Dabbs M. D.».

Աշխարհաբար թարգմանություն անգլերեն բնագրից, արևմտահայերեն:

Վերնագրից առաջ նշված է՝ «Հ. Ուզունյանից ինքնագրով՝ դի-րասանուհի Հայկուշին»:

Գրքույկում ղետեղված է խոսք ուղղված թարգմանչին՝ «բառ մը թարգմանչին» խորագրով և թարգմանչի համառոտ ճերկու խոսք»-ը:

114. Դեֆո Դանիել, Պատմություն Ռուդենսոնի Քոյուզոն, թարգմ. գաղղ. Հ. Մինաս վ. Բժշկյան ի Մխիթ. ուխտեն: 5-րդ տպագր.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1911.—439 էջ.

Թարգմանությունը կատարված է ֆրանսերեն հրատարակությունից, արևմտահայ լեզվով: Գրքում ղետեղված է առաջաբան նվիրված սույն հրատարակության նշանակությանն ու թարգմանությանը:

115. Դեֆո Դանիել, Ռոբինզոն Կրուզոյի ճանապարհորդությունը և դարմանալի արկածները Պատկերասրտով թարգմ. Ս. Թառայանց.— Թիֆլիս: Տպ. «Հեղափոխ», 1904.—287 էջ, 28 ներդ. թ. նկ.

116. Դեֆո Դանիել, Պատմություն վարոց Ռուդենսոնի Քոյուզոն թարգմ. Հ. Մինաս վրդ. Բժշկյան ի Մխիթ. ուխտեն.— Վենետիկ: Ս. Ղազար, 1886.—396 էջ.

Գիրքն ունի առաջաբան և ծանոթություններ: Աշխարհաբար վիպասանություն ֆրանսերեն համառոտությունից թարգմանված: Նախատեսված է պատանիների ընթերցանության համար:

117. Դեֆո Դանիել: Ռոբինզոնի պատմությունը թարգմ. Գյուտ քհ. Աղանյանց.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլիսի ընկ. հայ գրքերի, տպ. Մովսես Վարդանյանց և ընկ., 1881.—199 էջ, 1 ներդիր թ. նկ.

118. Դեֆո Դանիել: Պատմություն Ռոպինսոնի Քոյուզոն թարգմ. ի գաղղ. Հ. Մինաս վ. Բժշկյան ի Մխիթ. ուխտեն: 4-րդ

տպագր.— Վենետիկ, Տպ. ւ. Ղաղարի, 1876.—364 էջ, 1 թերթ
ներդիր նկ.

Աշխարհաբար թարգմանություն ֆրանսերենից, արեմտահայե-
րենի Գրքում գետնդված է համառոտ առաջարան

119*. Դեֆո Դանիել: Ռոպենսոնի արկածք, /Աշխարհաբար
վիպասանություն/ /Գաղղիերեն համառոտութենեն թարգմ. Հ. Մի-
նաս-Բժշկյան.— Վենետիկ, Տպ. ս. Ղաղարի, 1858.—364 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտա-
կան աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Լիակ. ցուց. գրք. Վենետիկի Մխթթ.
/1716.—1910/» Վենետիկ, 1910, էջ 56.

120. Դեֆո Դանիել, Ռոբինզոն Կրուզոյի պատմությունը
/Թարգմ. և ֆրանսերենից վերափոխված հրատ. Ռաֆայել Պատ-
կանյան.— Ս.— Պետերբուրգ, Տպ. Հակոբ Յանսոնի, 1857.—187 էջ.
նկ.

Աշխարհաբար թարգմանություն ֆրանսերեն հրատարակույթու-
նից, Գրքում գետնդված է համառոտ առաջարան թարգմանչի կող-
մից՝ նվիրված Ռոբինզոն Կրուզոյի պատմությանը և նրա թարգմա-
նությանը /Գամառ-Քաթիպա/:

121**. Դեֆո Դանիել: Պատմություն Ռոպենսոն Քրիստիո
/Ա. տ. և Խ./.—208 էջ.

Տիտղոսաթերթ լուսին

Սույն Երկը գտնվում է ԴԱ հիմնային գրադարանում:

ԱԿԿ

122. [Դիկկենս Չարլզ], Արքեպոզի մահը [Թարգմ. Հովհաննես
Յուսուֆյան].— Թիֆլիս, Հրատ. Բագրատ Միրիմանյանի, տպ.
Ա. Ա. Միխեյսոնի, 1886.—18 էջ.— /Ժողովրդական գրադ-ն/.

Հեղինակի և թարգմանչի մասին տեղեկությունները վերցված
են Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրա-
գիտարան հայ կեանքի» աշխատությունից, Տես՝ Ղ հտ. 1, էջ 53.

Գրքի շապիկի վրա գետնդված է համառոտ առաջարան նվիր-
ված Զ. Դիկկենսի կյանքին ու գրական գործունեությանը: Շապի-
կերջին էջի վրա տպված է «Ժողովրդական գրքույկների հրատարա-
կութիւն» [Հրատարակիչ՝ Բագրատ Միրիմանյան]:

Ուսումնասիրութիւնը ջուլց տվեց, որ թարգմանութիւնը կատարված է ռուսերեն հրատարակութունից:

123. Դիկկենս Չարլզ, Արքեցողի մահը: Վիպասանութիւն /Թարգմ. Հովհ. Յուսուֆյան].— Թիֆլիս Տպ. Մ. Ռոսինյանցի, 1885.—22 էջ.

Թարգմանութիւնը կատարված է ռուսերեն հրատարակութիւնից: Տիտղոսաթերթի վրա թարգմանութեան վերաբերյալ հիշատակութիւն չկա:

124. Դիկկենս Չարլզ, Դավիթ Կոպպերֆիլդ, Կենսագրական վիպ, Պատկերազ. Մաս Ա—Գ. /Անգլերեն թարգմ. Փիլիպպոս Վարդանյան.— Թիֆլիս, Հրատ. Կովկ. հայոց հրատ. ընկ., տպ. օր. Ն. Աղանյանցի, 1912.—

Մասն Ա. 459 էջ, 14 ներդ. թ. նկ.

Մասն Բ. 458 էջ, 13 ներդ. թ. նկ.

Մասն Գ. 448 էջ, 8 ներդ. թ. նկ.

Գրքում ղեկողված է առաջաբան նվիրված Չարլզ Դիկկենսի ծննդյան հարյուրամյակին /էջ 1—9/:

125. Դիկկենս Չարլզ, Դավիթ Կոպպերֆիլդ, Կենսագրական վիպ, Հմ. Ա—Բ. /Անգլերեն թարգմ. Փիլիպպոս Վարդանյան.— Բազու Տպ. «Արօր», 1898.—1900.—

Հտ. Ա. 1898, 520 էջ.

Հտ. Բ. 1900. 510 էջ.

Փիլիպպոս Վարդանյանը հայանի է, արեւմտահայկական ժողովուրդների գրողներից կատարված իր բաղմաթիվ թարգմանութիւններով: Նա թարգմանել է գերմաներենից, անգլերենից, ֆրանսերենից և ռուսերենից: Նրա թարգմանութիւններից են՝ Զ. Դիկկենսի «Դավիթ Կոպպերֆիլդ», Շիլլերի «Ավաղակներ», Ֆերդ. Շմիդի «Հոմերոսի Իլիական», «Ոդիսական», Լ. Ն. Տոլստոյի «Կոլումբ», «Ռոբինզոն», Լ. Ուոլլեսի «Բեն հուր» և այլ երկեր:

126. Դիկկենս Չարլզ, Դավիթ Կոպպերֆիլդ, Պատանեկան հասակի համար /Թարգմ. Պ. Պ.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատ. ընկ., տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1897.—370[2] էջ.

Թարգմանիչն է՝ Պերճ Պռոշյանը: Վիպասանութեան թարգմանութիւնը կատարվել է ռուսերեն տեքստից:

127. Դիկկենս Ջարլզ, Դավիթ Կոպպերֆիլդ, Կենսագրական
վեպ, Հտ. 1—2. /Թարգմ. Փիլիպպոս Վարդանյան.— Բագու Տպ.
«Արար», 1896.—1898.—

Հտ. 1. 1896. 510 էջ.

Հտ. 2. 1898. 519 էջ.

128. Դիկկենս Ջարլզ, Ժլատ Սկրուջը, /Ծննդյան վեպ/ /Անգլե-
րենից համառոտված թարգմ. Ն. Զիգիանյան.— Թիֆլիս, Հրատ.
Ն. Զիգիանյանի, տպ. Ա. Մելիք-Շահնազարյանցի, 1897.—40 էջ,
1 թ. դիմանկ.

Թարգմանված է ռուսերեն հրատարակությունից

Տիտղոսաթերթը՝ հուլիսին և ուսերեն:

Սույն հրատարակությունը կաղմակից է Ստեփանոս վ. Նա-
ղարյանցի «Պայլտ մանուկը կամ կապիկացած երեխա» գրքին
Թիֆլիս, 1896.— Տես՝ ալիգ. 2.

129. Դիկկենս Ջարլզ, Խելագարի հիշատակարանը («Պիկվիկ-
յան կուրքից») /Թարգմ. Ս. Տ.— Մ.— Թիֆլիս Տպ. Մ. Շարաձևի
և ընկ., 1899.—25 էջ.

Թարգմանությունը կատարված է ռուսերեն տեքստից, Թարգ-
մանչի մասին գրքույկում լրիվ տեղեկություններ չկան, Կաղմակից
է նաև Լ. Ն. Տոլստոյի՝ «Աստված գիտե արդարն ու մեղավորը»
գրքին Տես՝ ալիգ. 3.

130. Դիկկենս Ջարլզ, Ծննդյան արձակ երգերից /Թարգմ.
բնագրից՝ Միխիսթ Տեր-Անդրեասյանց.— [Թիֆլիս], 1904, [1],
85—94 էջ.

Թավանդ.՝ Գլուխ Ա.— Մառնեյի ուրվականը; Գլուխ Բ.— Երեք ողի-
ններից առաջինը; Գլուխ Գ.— Երեք ողիներից երկրորդը;
Գլուխ Դ.— Երեք ողիներից վերջինը; Գլուխ Ե.— Վերջա-
րան:

Գիրքը հրատարակվել է Թիֆլիսում և արտատպված է «Մուրճ»
ամսագրից, Հրատարակության վարչի մասին տեղեկությունները
վերցված են մատենագիտական աղբյուրներից: Տես՝ «Գրացույց.
հայերեն զրբերի Բազմի հայոց մարդաս. ընկ. զրադ.», 1912, էջ 145.

131. Դիկկենս Ջարլզ, /Ծննդյան վեպ/ /Անգլերենից համառո-
տած թարգմ. Ն. Զիգիանյան.— Թիֆլիս, Հրատ. Զիգիանյանի,
1897.—40 էջ.

Սույն հրատարակությունը գտնվում է ՀՍՍՀ ԳԱ հիմնային պատ-
դարանի ֆոնդերում:

ԱԿԳ

132. Դիկկենս Ջարլզ: Մենդյան պատմություն: Պատմվածք/
/Փոխադր. Մ. Տ.— Դ.— Շուշի: Տպ. Մահտեսի-Հակոբյանցի,
1891.—42 էջ.

133. Դիկկենս Ջարլզ: Կյանքի դպրոցը: Վեպ հրիտասարդների
համար: Դիկկենսի «Մարտին Չուզլվիտ» վեպից: Համառոտեց
ն. Բորիսով... /Թարգմ. Գյուտ քահ. Աղանյանց.— Թիֆլիս: Տպ.
Մ. Շարաձեի, 1892.—[1—4], 291 էջ.

Դրքում զետեղված է համառոտ հերածությունը նվիրված
Զ. Դիկկենսի կյանքին ու գրական գործունեությանը:

Շպկ-ի 2-րդ և 3-րդ էջերի վրա տպագրված է Գյուտ քահ. Աղան-
յանցի թարգմանությունների և աշխատությունների գրացուցակը:

134. Դիկկենս Ջարլզ: Հարս և սկեսուր: Նվեր սկեսուրներին
/Թարգմ. օր. ն. Տեր-Մարկոսյանց: «Մշակ»-ից արտատպած: Առա-
ջին սերիա № 6, հրկրորդ տարի.— Թիֆլիս: Հրատ Տ. Նազարյան-
ցի, տպ. Կովկասի կառավարչ. գլխ. կառավ., 1882.—54[8] էջ.

Դրքույկը տպագրված է Թիֆլիսի Մ. Վարդանյանցի տպարա-
նում: Այդ մասին տես՝ վերջում, 8-րդ էջում «Типография М. Вап-
таняна и К.» նշումով: Տես նաև՝ Ա. Ղադիկյանի «Հայկ. մատե-
նագիտության» մեջ, հտ. 1, էջ 531.

Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությու-
նից:

135**. Դիկկենս Ջարլզ: Սմալի Պատմվածք Չարլզ Տիրրնզլ
/Թարգմ. Լիոն Պ. Գալիմբյարյան.— Կահիրի: Հրատ. և տպագր.
«Սահակ-Մեսրոպ»-ի, [ա. թ.], 28 էջ.— /Պատանիին պատկանելի
Հոտոթի թիվ 9/.

Աշխարհաբար թարգմանություն անգլերեն բնագրից, արևմտա-
հայերեն:

Նախատեսված է պատանիների ընթերցանության համար:
Սույն հրատարակությունը լույս է տեսել «Պատանիին պատկանելի»
մատենաշարով:

Շպկ-ի վերջին էջի վրա տպագրված է՝ «Հրատարակութունք
«Սահակ-Մեսրոպ» տպագրատան»:

Դրքույկում հրատարակության տարեթվի մասին հիշատակու-
թյուն չկա:

136. Դիկկենս Ջարլզ: Վերադարձած հանցավորը: /Պատմվածք/
/Թարգմ. ռուսերենից Արշակ Եղիզարյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Վար-
դանյանցի, 1896.—24 էջ.

137*. Դիկկենս Ջարլզ: Օլիվեր Տվիստ /Անգլերեն թարգմ. Ժի-
րայր Շիրակացի.— [Կ. Պոլիս], 1903—1904.

Արտատպված է ռուսերեն Ռյուզանդինից:

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագի-
տական աղբյուրների հիման վրա: Տես՝ Ղ հտ. 1, էջ 53.

138. Դիկկենս Ջարլզ, Օլիվեր Տվիստ: /Պատկերազարդ վեպ/
/լ. Շելգունովայի համառոտած ռուսերեն թարգմանությունից թարգ-
մանեց՝ Ա.— Ալեք-պոլ: Տպ. Գևորգ Սանոյանցի, 1894.—126 էջ.

Թարգմանությունը կատարված է ռուսերեն տեքստից: Սույն
վիպակը նախատեսված է մանուկների ընթերցանության համար:
Թարգմանչի մասին տեղեկությունները լրիվ չեն:

139. Դոյլ, Արթուր-Լոնան: Բանական ինչպես ազատեցի /էտի-
կեն Ժերարի արկածներից/ /Թարգմ. Տ. Վ.— Թիֆլիս: Տպ. Ա. Բու-
թաթիլաձեի, 1904.—30 էջ.— Տիտղթ. վրա հեղ՝ «Կոնան Դոյլ Ար-
թուր»...:

Թարգմանչի և թարգմանության մասին տեղեկությունները
լրիվ չեն: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությու-
նը կատարվել է ռուսերեն հրատարակությունից: Արտատպված է
«Նումայ» երկամսյա հանդեսից:

Շպկ-ի էջերի վրա տպագրված է Գյուտ քհ. Աղանյանցի աշ-
խատությունների և նրա կողմից կատարված թարգմանությունների
ցուցակը:

140. Դոյլ, Արթուր-Լոնան, Դեղին դիմակավորը /Թարգմ. Ն. Բ.
Նիկողոսյան.— Ալեք-պոլ: Տպ. Հակովբ Ղասադյանցի, 1905.—36
էջ.— Տիտղթ. վրա հեղ՝ «Կոնան Դոյլ Արթուր»:

141. Դոյլ, Արթուր-Լոնան: Շերլոք Հոլմսի արկածները
/Թարգմ. Ժ. Շ.— Կ. Պոլիս: Հրատ. Հակոբ Արրահամյանի, տպողը.
Հ. Ասատուրյան որդիք, 1920.—32 էջ.— Տիտղթ. վրա հեղ՝ «Ա. Գո-
նան Տոյլ»:

142. Դոյլ, Արթուր-Լոնան: Շերլոք Հոլմսի նոր արկածները
/Թարգմ. Ժ. Շ. Թիվ 3—Նարինչի հինգ կուտերու արկածը.— Կ. Պո-

լիս: Հրատ. Հակոբ Աբրահամյանի, տպագր. Հ. Ասատուրյան որ-
դիւր, 1920.—32 էջ.

143. Դոյլ, Արթուր-Կոնան: Շերլոք Հոլմսի արկածները:
Ա. շարք.— Կ. Պոլիս: Հրատ. Նշան-Պապիկյան գրատան, տպ.
Նշան-Պապիկյանի, 1910.—83 էջ. նկ.— Տիտղոսաթերթի վրա վեր-
նագրից առաջ՝ «Ալը Արթիւր Քօնան Տոյլ»:

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից, արեւմտա-
հայերեն:

Թարգմանչի մասին գրքում հիշատակութիւն չկա:

Սույն հրատարակութիւնը, կազմակից է Սոսի Սիլվանուսի՝
«Ինչ պետք է գիտենա դեռատի մանչ մը» գրքին: Կ. Պոլիս, 1907.
Տես՝ ալիգ. 4.

144*. Դոյլ, Արթուր-Կոնան: Շերլոկ Հոլմսի արկածները: Ուշա-
ցած վրեժխնդրութիւն.— Բագու, 1908, 193 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագի-
տական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Սովետահայ թարգմ. գեղարվ. գրակ-ն»
Մատենագիտ. /1920—1980/, էջ 735.

Տես նաև՝ Հ. Խաչատրյանի «Մեկ և կիս դար
նուս գրքի հետ Մատենագիտ...ը»,
էջ 158.

145**. Դոյլ, Արթուր-Կոնան: Շերլոք Հոլմսի նոր արկածները:
Թիւ 4, վեր դարձած շրթունքով մարդը /Թարգմ. Ժ. Շ.— [Կ. Պո-
լիս], Հրատ. Հակոբ Աբրահամյանի /տ. թ./— 38 էջ.— Տիտղթ.
վրա հեղ.՝ «Ա. Գոնան Տոյլ»:

146. Դոյլ, Արթուր-Կոնան: Վերադարձ պեպի հայրենիք
[Պատմվածք], Բ տպագր. /Թարգմ. Նիկողայոս քհ. Բոսնակյան.—
ն. Նախիջևանի Տպ. Ս. Հ. Ավագյանի, 1913.—26 էջ.— Տիտղթ.
վրա հեղ.՝ «Կոնան Դոյլ Արթուր»:

147**. Դոյլ, Արթուր-Կոնան: Ուշացած վրեժխնդրութիւնը:
Դոկտոր Վաթսոնի հիշողութիւններից: Գլ. Ա. Շերլոկ Հոլմսի
/լիւպ /Թարգմ. Արսեն Տեր-Գաբրիելյանց/, /տ. տ. և թ./, 161 էջ.—
Տիտղթ. վրա հեղ.՝ «Կոնան Դոյլ Արթուր»:

Թարգմանված է ռուսերեն հրատարակութիւնից: Թարգմանչի
մասին տես՝ տեքստի վերջում [էջ 161]:

Սույն հրատարակութիւնը տպակից է Ֆայլիկինհորստի՝ «Աֆ-
րիկյան կաշվե դուլբա» գրքին: Տես՝ ալիգ. 2.

148. Դոտդ, Մեղքի զղջումն /Թարգմ. Խորեն քաջ. Խանդավ-
յան.— Վաղ-պատ: Տպ. ս. էջմիածնի, 1894.— 27 էջ.— /Մանուկ-
ների ընթերցանության համար/.

Գրքույլում զեանդված է համառոտ առաջաբան «Ազգ» խորա-
գրով նվիրված հայ մանուկների դաստիարակությանը:

149. Եունկ էդուարդ, Ողբերգական գիշերները /Թարգմ. անդ-
լերեն բնագրից Արմենակ Հ. Ճիզմեճյան, Հտ. Ա.— Կ. Պոլիս, Տպա-
գր. Ռուբեն Հ. Քյուրքճյանի, 1861.— [Ա—Ը], 130 էջ.— Տիտղթ.
առաջ տպված է՝ «Եունկ իմաստասեր»:

Ռովալե. Ձոն «Ի սղալի յիշատակ... Պետրոսի Խորասանճևան...»
(չափածո); Առաջարան թարգմանչին; Պատմութիւն վա-
րուց Եղստուր Եունկ փիլիսոփայի; Եունկի գիշերները
(գիշեր Ա—Դ):

Ա հրատ. լույս է տեսել 1859 թ. Կ. Պոլսում: Այդ մասին տես՝
Ղ հտ. 1, էջ 577.

Սույն հրատարակությունը կաղմակից է՝ Արմենակ Հայկունու՝
«Գիրքզմանք հրիտասարկաց...» զրքին: Կ. Պոլիս, 1882.— Տես՝
ալիգ. 4.

150*. Եունկ Եդուարդ: Եունկ փիլիսոփային ողբերը: Քսան և
չսրս գիշերներու բաժնված /Անդլերեն բնագրից թարգմ. Արմենակ
Հ. Ճիզմեճյան.— Կ. Պոլիս, Տպ. Ռ. Հ. Քյուրքճյանի, 1859.— 30 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենադիտա-
կան աղբյուրների հիման վրա:

Տես՝ Ղ հտ. 1, էջ 577—578.

151*. Զրույցներ: Տետր Ա.— Մրցող պատգամաւորները; Հույ-
րական սեր; Նախապաշարմունք /Անդլերեն թարգմ. Խանդավ.—
Ռովալիգ, 1895, 49 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենադիտա-
կան աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Գրացուց. հայեր. գրքերի Կովկ. հայ.
բարեգործ. ընկ. գրադ.» Թիֆլիս, 1910,
էջ 37.

152. Էջուարդ Մ. Բարոյալեպք: Ա. վաղը: Նմանությունամբ ի
Մ. էճուրթէ: Բ. Դադարումն ժամանակի (պարսկ. վէսլ) /Թարգմ.
ի ֆրանս. օր. նվարդ Հ. Եսայան.— Կ. Պոլիս, Տպագր. «Արեւելք»
և «Մասիս» լրագրաց, 1889.— 154 էջ, նկ. — Տիտղթ. վրա՝ «Ի
նպաստ որբանոցին խասգիւղի»:

Աշխարհաբար թարգմանություն ֆրանսերեն հրատարակությունից, արևմտահայերեն:

Գրքում գետեղված է համառոտ ներածություն թարգմանչի կողմից նվիրված անգլիացի գրող էջուորդին և նրա ստեղծագործություններին: «Բարոյավեպը»-ը բաղկացած է հետևյալ վիպակներից՝ «Վաղը» [էջ 7—140] և «Դադարումն ժամանակի» (պարսկ. վեպ), [էջ 141—154]։

Թարգմանիչը ներածության մեջ նշում է, որ 1887 թվ. նույն տպարանում լույս է տեսել Մ. էջուորդի՝ «Տարաբաղդն Մուսա» հրկը:

Կազմակից է Վիկտոր Հյուգոյի՝ «Գլօս Կէօ» գրքին: Կ. Պոլիս, 1872.— Տես՝ ալիգ. 3.

153*. էջուորդ Մ. Տարաբաղդն Մուսա /Անգլերեն թարգմ. նվարդ Եսայան.— Կ. Պոլիս: Տպ. «Արեւիք լրագրոյ», 1887.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ Ղ հտ. 1, էջ 673.

154*. Թեյլորի Ս. Ճշմարիտ կինը /Անգլերեն թարգմ. Ա. Կ. Սեբեմյան.— Կ. Պոլիս, 1896.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Ընդարձակ պատյույց. Պ. Պալեից պրոտան». Կ. Պոլիս, 1911, էջ 51.

155. Թեննիսոն Ալֆրեդ: Հիշատակին: Լու *memoriam*... /Անգլ. թարգմ. Աբրահամ Մելիք Ջհանյանց.— Թիֆլիս: Տպ. Ա. Քոթաթիլ-լածի, 1905.— [Ա—Ե], 88 էջ.

Տիտղթ. վրա՝ «Alfred Tenjson»:

Թարգմանված է անգլերեն բնագրից, չափածու: Գրքի սկզբում գետեղված է թարգմանչի՝ Աբրահամ Մելիք Ջհանյանցի համառոտ առաջաբանը: Համարվում է, որպես հավելված «Լուծմայ» հանդեսի:

156. Թեննիսոն Ալֆրեդ: Մահ Արթուրոյ Ի հիշատակ Անտոն-ցիադայի Բերլսսքա Դեզա: Նվեր ամուսնուն /Թարգմ. անգլ. իտալերեն՝ է. Դեզա և իտալ. հայերեն՝ Հ. Ա. Ղազիկյան.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1900.—14 էջ.

Գրաբար թարգմանություն, լատիամու թարգմանությունը կուտարել է իտալերեն բնագրից հայերեն՝ Վենետիկի Մխիթ. Արսեն Ղադիկյանը:

Գրքույկում զետեղված է թարգմանչի կողմից գրված համառոտ առաջաբան նվիրված անգլիացի դրող Թեննիսսոնի սույն քերթվածի թարգմանությանը:

Կազմակից է Շուշանիկ Կուրդինյանի՝ «Արշալույսի զոռանքներ» բանաստեղծությանը Ա. պրակ, Նոր-Նախիջևան, 1907.— Տես՝ ալիդ. 5.

157. Թիբ-Քաթ: Լատի /Աղատ թարգմանություն Զարուհի Ստամպոլլույանի.— Կ. Պոլիս: Տպ. Մ. Հովակիմյանի, 1914.— 45 էջ.— /Մատենաշար ազգանվերի ի օժանդակ օրիորդաց/.

Թարգմանությունն անգլիերեն բնագրից է, արևմտահայ լիււլով: Գրքում զետեղված է առաջաբան հրատարակչության կողմից «Մեր նպատակը» խորագրով:

Բարոյական պատմվածքների շարքից վերցված թարգմանուկսն հանրամատչելի հրատարակություն է, նախատեսված է երիտասարդության ընթերցանության համար:

158. Թխոռակ Գեղանին /Թարգմանություն անգլիերենէ.— Կ. Պոլիս: Տպագր. Օ. Արդումանի, 1911.— 196 էջ.

Հեղինակի և թարգմանչի մասին գրքույկում նշումներ չկան: Կազմակից է Լ. Ն. Տոյստոյի՝ «Քորնելյ Վոսիլիևի» վիպակին: Տես՝ ալիդ. 7.

159. Ինգլիս Հ. Դ. Խեցիներ ժողովոյ Սիւսր Գոգուֆի պանդըտությունը /Անգլիերեն թարգմ. Աշոտ Բայանդրյան.— Շուշի: Տպ. Ն. Մ. Մահուսի-Հակոբյանցի, 1903.— 26 էջ.

160. Լամբալ Վեյլը ի վերից Շեկսպիրայ /Թարգմ. անգլիերեն Թ. Տեր-Ստեփաննոսյան, վարժսպետ Հակոբյան մարդասիր. ճամար. որ ի Կալկաթա.— Վենետիկ: Ս. Ղադար, 1903.— 273 էջ.

Բովանդ.՝ Բան թարգմանչին; Ռոմիո և Զուլիետ; Վենետիկացի վաճառական; Օթելլո; Զգոնացուցանել կին ժանտաբնույթ; Համլետ; Դեր սիալանց և շիոթի; Մոկբեթ; Սիմբրելին; Տիմոն Աթենացի; Որպես և հաճոյ է քեզ; Արքայն իր; Փոթորիկն:

Աշխարհաբար թարգմանություն անգլիերենից, արձակ: Գրքում զետեղված է թարգմանչի համառոտ խոսքը:

Տես՝ Վեպք ի դերից Շեկսպիրայ...

Տես նաև՝ Լեմ Զարլզ և Մերի...

161. Լեմ Զարլզ և Մերի: Շեքսպիրյան պատմվածքներ: Ա. Վե-
նետիկի վաճառականը /Թարգմ. դոկտ. Հովս. Տ. Ստեփանյան.—
Կ. Պոլիս: Գրավաճառ-հրատարակիչ՝ Վ. և Պ. Զարլզարյան եղբայր,
տպագր. Օսմ. գործակ. ընկ., 1910.—31 էջ, 1 թ. դիմանկ. իլ.—
/Ազատ մատենաշար, Բ. 31/.

Թարգմանությունը կատարված է անդլերեն բնագրից, արե-
մտահայերեն:

Գրքույկում զետեղված է թարգմանչի համառոտ խոսքը՝ Զարլզ
և Մերի Լեմի «Շեքսպիրյան պատմվածքներ»-ի թարգմանության
առթիվ:

Տես նաև՝ Շեքսպիրյան պատմվածքներ...

162. Լեմ Զարլզ և Մերի: Վեպք ի դերից Շեկսպիրայ /Թարգմ.
անգլ. Թ. Տեր-Ստեփաննոսյան վարժապետ Հայկական մարդասիր.
ճեմար. որ ի Կալկաթա.— Վենետիկ: Տպ. ս. Ղադարի, 1903.—270
[3] էջ.

Բովանդ.՝ Բան թարգմանչին; Վեպք ի դերից Շեկսպիրայ; Ռոմէո
և Զուլիէտ; Վենետիկի վաճառական; Օթելլո; Զգո-
նացուցանիլ կին ժանտաբնույթ; Համլետ; Դեր սխալանց
և շփոթի; Մակբեթ; Սիմբրիլին; Տիմոն Աթենացին; Որ-
պես և հաճոյ է քեզ; Արքայն լիր; Փոթորիկն:

Դրաբարախառն աշխարհաբար թարգմանություն անդլերեն
բնագրից, արձակ: Շեքսպիրյան պիեսների ժողովածու է, արձակ
շարադրված:

Տես՝ Վեպք ի դերից Շեկսպիրայ...

Տես նաև՝ Լամբ...

163. Լենկի Ս. Կ. Նիորե կամ մարմարյա վարժուհին: Ֆուր 3
արար./ /Ա. Կ. Լենկի ուս. փոխադրությունից փոխադր. Ա. Վլույր
/բնագիրը անգլերեն է/.— Բագու Տպ. «Արօր», 1897.—36 էջ.

165. Կաբա, Իրանդական կյանքից /Թարգմ. Գյուտ քաճ.
Աղանյանց.— Թիֆլիս: Տպ. Տ. Մ. Ռոտինյանցի, 1904.—14 էջ.

Թարգմանված է անգլերեն բնագրից:

Գրքի շապիկի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերում տպագրված է Գյուտ
քճ. Աղանյանցի լույս տեսած աշխատությունների և թարգմանու-
թյունների ցուցակը:

166. Կարաբո Սարաճ Նելսըն, Ի սեր զթությանս Սիրեցեք կենդանիները, պաշտպանեցեք զանոնք.— Կ. Պոլիս, Տպ. Օ. Արդումանի, 1911.—120 էջ.— Տես նաև՝ Նելսըն Սարաճ...

Թարգմանված է անգլերեն ընդգրից, արևմտահայերեն Թարգմանչի մասին գրքում չի հիշատակված:

167. Կեռ Լ'Ուիլյամ, Ռասպուտին կամ Սրիկա վանականը, որ պատճառ եղավ ռուս կայսրության քայքայման.— Կ. Պոլիս, Հրատ. Սմբատ-Բյուրատի Վաղինակի, 1920.—175 էջ.— (Ժամանակակից մատենաշար).— Տիտղթ. վրա հեղ.՝ «Լ'Կեռ Ուիլյամ...»:

Թարգմանչի մասին չի նշված: Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից, արևմտահայերեն:

168. Կիպլինգ Ռեդիարդ: Կոստուկն էսկիմո տղան: Պատմվածք էսկիմոսների մասին ներածական մի հոդվածով /Թարգմ. Նիկ. Սարգսյան.— Թիֆլիս, Հրատ. «Նվիր մանուկներին» ընկ., տպ. օր. Ն. Աղանյանի, 1914.—61 [2] էջ, նկ.— Տիտղթ. վրա՝ «Համվելած «Հասկեր» ամսագրի»:

Էսկիմոսների մասին սույն պատմվածքը նախատեսված է մանուկների ընթերցանության համար:

Դրքում ղեկավարված է ներածական հոդված նվիրված էսկիմոսներին /Վ. Լյուվ/:

Դրքի վերջում տրված է «Նվեր մանուկներին» ընկ. հրատարակությունների գրականության ցանկ:

169. Կիպլինգ Ռեդիարդ: Նաուլյանիկա /Ըստ Ռ. Կիպլինգի/ Պատմվածք.— Թիֆլիս, Հրատ. բժ. Ա. Բուլուդյանի, 1915.—116 էջ, 1 թ. նկ.— Տիտղթ. վրա՝ «Հրատ. բժ. Ա. Բուլուդյանի № 3/15»:

Թարգմանված է անգլերենից, արևմտահայերեն Թարգմանչի և Թարգմանության մասին գրքում չի հիշատակված:

Հեղինակի մասին նշված է 5-րդ էջում:

170*. Կիպլինգ Ռեդիարդ: Նաուլյանիկա /Պատմվածք/.— Թիֆլիս, Տպ. «Էսպերանտո», 1913.—116 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Սովետահայ Թարգմանական գեղարվեստ. գրակ. /1920—1980/»-ի Մատենագիտ. էջ 741.

171. Կորեկի Մարիա: Բարաբբա: Քրիստոսի ժամանակակից վեպ, Երկու մասից /Անգլերեն. թարգմ. Աղեքսանդր Արտակ/ Տեր-Սարգիս Պարզյանց.— Թիֆլիս: Հրատ. Մկրտիչ Տեր-Սարգիս Պարզյանցի, տպ. ընկ. «Վերելիչ և Կամենմասեր»-ի, 1903.—418 էջ.

Գրքի սկզբում տրված է առաջաբան թարգմանչի կողմից: Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից: Գիրքը բաղկացած է 2 մասից, տպագրված է միասին: Վերջում տրված է հավելված՝ «Տեսութիւն հայ թարգմանչի՝ Մարիա Կորեկու «Բարաբբա» վեպի առթիվ» /էջ 400—417/.

172*. Կորեկի Մարիա: Իմ զարմանալի կինս /Թարգմ. Մ. Մ.— Թիֆլիս, 1896.—101 էջ.— /Հավելված «Արևելեան մամուլ»-ի/.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ Ղ հտ. 1, էջ 1378.

173. Կորեկի Մարիա: Մի մանկան հոգու պատմություն վեպիկ ոչ մանուկների համար /Ռուսեր. թարգմ. Տ. Վ.— Վաղ-պատ: Տպ. «Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի», 1902.—354 էջ.

Տիտղոսաթերթի վրա տպված է՝ «Արդիները յատկացում է նորայրական օգնութեան»:

174. Կրարր Գէորգ: Ժլատու Գէորդ Կրարրի /Թարգմ. Տիրուհի Կոստանյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձևի, 1894.— էջ 11—16.

Թարգմանված է ռուսերեն հրատարակությունից: Նախառնակում է պատանիների ընթերցանության համար:

Սույն հրատարակությունը տպակից է Վ. Օստրոգուրսկու՝ «Տիրուցի աղջիկ» զրքույկին: Թիֆլիս, 1894.— Տես՝ ալիգ. 2, էջ 11.

175*. Կույր երգչուհին: Թատրերգություն 3 արար. /Անգլ. թարգմ. Մ. Հ. Բարթիկյան.— Ջմյունիա: «Կիլիկիայի դրատուն», 1919.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է բանասիրական աղբյուրների հիման վրա:

Տես՝ Ոստան կիսամյա պարբեր, 1919, Գ տարի, Թ—3, նոյեմբ., էջ 144.

176*. [Հակարտ Ռայտր]: Թափառաշրջիկին մանյակը /Վեպ/ [Թարգմ. անգլերենից՝ Շ. Ա. Ստեփանյան].— [Ա. տ. և ա. թ.], 416 էջ, 14 թ. իւ., Ա. տիտղթ. և շպկ-ի:

Գրքի սկզբում ղետեղված է առաջաբան հետևյալ խորագրով՝

«Երկու խոսք՝ թարգմանիչէն» [էջ 3—6]։ Տիտղոսաթերթի վրա չկան տեղեկություններ հեղինակի, թարգմանչի, ինչպես նաև՝ հրատարակության վայրի ու տարեթվի վերաբերյալ։ Հեղինակի մասին նշված է 3-րդ էջում, «Երկու խոսք»-ում։ Թարգմանչի մասին տեղեկությունը տրված է գրքի վերջում։ Տես՝ էջ 416.

177. Համլետո Դանիայի իշխան /Թարգմ. Սեյադ Ամիրյանց/ (Շեքսպիրի «Համլետ» ողբերգ. համառոտ բովանդակությունը արձակի վերածված).— Բագու։ Հրատ. Սմբատ Բեկ-Լալայանցի, տպ. Մ. Վաչկինի, 1886.—[2], 48 էջ.— Տիտղթ. վրա՝ «Վաճառվում է յօգուտ քաղաւայ հայոց դրամատիկական ակմբի»։ Շմուց տիտղթ. վրա՝ «Յայտնի տաղանդավոր հայ դերասան Պետրոս Աղամյանցին... նվիրում է հրատարակիչը»։

Գրքի սկզբում տրված է թարգմանչի խոսքը ուղղված ընթերցողներին սույն հրատարակության առթիվ։ Այս երկը համարվում է, որպես «Համլետ» ողբերգության համառոտ բովանդակության շարադրանքը։

178. Հանուն նորա։ Վարսենցվոց վրա պատմություն մը յոթը հարյուր տարի առաջ /Անգլերենէ թարգմանված.— Կ. Պոլիս։ Տղտղր. Ա. Պոյաճյանի, 1896.—206 [1] էջ.

Հեղինակի և թարգմանչի մասին հիշատակություն չկա։
Թարգմանված է քնագրից, արևմտահայերեն։

179^{**}. Հավթնոն Ն. Թեվալուր ձին /Մանկական պատմվածք/ /Թարգմ. Լ. Պ. Գալեմբյարյան.— Գահիրե։ «Սահակ-Մեսրոպ» տպագրատուն,— 24 էջ, իլ.— /Պատանիի գրադարանը։ Հտ. թ. 3/.

180^{**}. Հավթնոն Ն. Միտաս։ Ոսկիի փոխող հպումը /Թարգմ. Պ. Գալեմբյարյան.— Գահիրե։ «Սահակ-Մեսրոպ» տպագրատուն, լա. թ./, 24 էջ, նկ.— /Պատանիին գրադարանը/.

Թարգմանված է անգլերեն քնագրից, արևմտահայերեն։ Տպագրության թիվը հայտնի չէ։ Տիտղթ. վրա՝ «Պատմուածք Ն. Հավթ-հորնէ»։

181^{**}. Հավթնոն Ն. Պանտորա։ Պատկերազարդ ավանդավեպ/.— Գահիրե։ «Սահակ-Մեսրոպ» տպագրատուն, լա. թ./, 31 էջ, նկ.— /Պատանիին գրադարանը/.

182. Հերբեր Ռիչինալդ: Պաղեստին: Պսակհալ քերթուած գերապատի տն. Ռիչինալդայ Երբեան Եպիսկոպ. Կալկաթայ |Անգլ. թարգմ. հայերեն՝ Մեսրոպ Դավթյան Թաղիաղյանց, սարկավագ ս. էջմիածնի.— Կալկաթա: Տպ. Եպիսկոպոսական Հեմարտնի, 1830.— [Իթ], 76 էջ.

Ուովանդ.՝ Վարք հեղինակին; Պաղեստին:

Գրաբար թարգմանություն անգլերենից. չափածո: Թարգմանիչըն է՝ Մեսրոպ Թաղիաղյանցը: Տեքստը՝ անգլերեն և հայերեն:

183. Հելլ էդուարդ: Առանց հայերենիքի մարդը.— Նյու-Յորք: Տպ. «Երիտասարդ Հայաստան»-ի, 1909.— 20 էջ.

Թարգմանված է անգլերեն ընտրից, արևմտահայերենի Թարգմանչի մասին չի հիշատակված:

Ա. տիտղթ. և շակ-ի:

184. Հենրիկոս և անոր բարեկամները կամ երկնից ճամբան |Համառոտ թարգմ. անգլերենից.— Կ. Պոլիս: Հրատ. «Ամերիկայի Պօրտ ընկ.» տպագր. Արամյանի, 1873.— [Ա—Գ], [7—202], [2] էջ.

Թարգմանությունը կատարված է անգլերեն ընտրից, արևմտահայ լեզվով: Գրքում զետեղված է համառոտ առաջաբան՝ «Առ ընթերցող տղայա» խորագրով: Նախատեսված է պատանիների ընթերցանության համար:

Թարգմանչի մասին հիշատակություն չկա:

185*. Հյում Զ. Աներեվոյթ օլարոնը |Անգլ. թարգմ. Մ. Մ. [Մատթևոս Մամուրյան].— Թիֆլիս, 1897.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա: Հավելված «Արևելյան մամուլ»-ի

Տես՝ Ղ հտ. 1, էջ 1576.

186. Հսկայական ձեռքեր: |Անդղիական վեպ| |Թարգմ. Զարմայր Մ. Մըսերյանց.— Մոսկվա: Տպագր. Զարմայր Մսերյանցի, 1879.— 11 էջ, նկ.— Տիտղթ. վրա վերնագրից առաջ՝ «Իմ առաջին ընծայն իմ որդույն»:

187. Ճոճայ Մոխի: Ալի փաշա: |Պատմական վեպ| |Թարգմ. Վահրամ.— Բոստոն: Հրատ. «Ջայն Հայրենյաց»-ի, 1901.— 116 էջ.

Գրքում զետեղված է թարգմանչի վերջաբանը: Մեր կարծիքով թարգմանությունը կատարված է անգլերենից: Այդ եզրակացությունըն արված է տեքստի ուսումնասիրության հիման վրա:

188. Մայն Ռիդ [Ռիդ Մայն], Անգլուս ձիավոր /խմբ. Կ. Խա-
տիսյան, Մասն Ա. և Բ.— Բաքու, Հրատ. Ռազվի Հայոց կուլտ.
Միության սեկցիայի», 1908.— /պատանեկան դրագ-նի/.

Մասն Ա. 235 էջ, նկ.

Մասն Բ. /236—516/ էջ, նկ.

Գրքի սկզբում զետեղված է առաջաբան, այնուհետև «Մի քա-
նի խոսք» խմբագրության կողմից՝ «Պատանեկան գրադարան»
հանդեսի հրատարակության առթիվ, Նախատեսված է պատանի-
ների ընթերցանության համար:

Աստմհասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կա-
տարվել է ռուսերեն հրատարակությունից: Տես նաև՝ Ռիդ Մայն...

189. [Մայն Ռիդ] [Ռիդ Մայն], Անտառի զավակները և ուրիշ
պատմվածքներ.— Թիֆլիս, Հրատ. Բժ. Ա. Բուդուղյանի, տպ. «Հեր-
մես», 1913.—96 էջ.— /Գրագ-ն հայ տպագր. 400 և տառերի գյու-
տի 1500-ամյա հոբելյանի հիշատակին/.

Ռովանդ.՝ Անտառի զավակները /Մայն Ռիդից/; 1 /Վան-Բլումի ըն-
տանիքը; 2. Մորեխ; 3. Գաղթը և նոր անրախառնություն;
4. Առյուծ; 5. Զիերի կարոտոր; Ռնգեղջյուրն ու փիղը;
Բուրենի; Մառի վրայի առյուծ; Նոր արկածներ; Հանսսի
արկածը; Փիղ որսալը; Կվադ բռնելն ու ընտելացնելը;
Երեխաների հրաշապատում ազատվելը; Վերջաբան; Դըմ-
վար ընտրություն /Անգլիկներին/; Վերաբնակվողները
/Յուզանս Ախտ-ի/; Մղձավանջ /Հովսեփից/:

Հեղինակի մասին տիտղոսաթերթի վրա սվլալնեք չկան «Ան-
տառի զավակները» գրքի հեղինակն է՝ Մայն-Ռիդը: Այդ մասին
նշված է գրքի 3-րդ էջում: Թարգմանչի մասին չի հիշատակվում:
Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից:

Տես նաև՝ Ռիդ Մայն...

190. Մայն Ռիդ [Ռիդ Մայն], Կորած սարը; Ոսկե կուռքի
գանձը /Կարլ Դադոնեից/; /Պատմվածք/.— Թիֆլիս, Հրատ. Բժ.
Ա. Բուդուղյանի, տպ. «Կուլտուրա» ընկ., 1913.—98 էջ.— /Գրագ-
հայ տպագր. 400 և տառերի գյուտի 1500-ամյա հոբել. հիշատա-
կին/:

Ռովանդ.՝ Կարավանը; Կոյտոները; Պետրոյի կասկածը; Կոյտոների
որոշումը; Հնդիկներ; Վշտան օձը; Հարձակումը բանակի
վրա; Շրջակա; Պերրոն վրեժը լուծեց; Կրուզադերը ան-

վնաս մնաց; Անսպասելի թշնամին; Սարի վրա; Ո՞ւմ էր վիճակված; Հարցի ողբերգական շուծումը; Հրաշալի ոստյուն; Գնդապետը; Վերջին օրը; Ազատություն; Բանակի պահույլը; Սահղա Դերթուրիս:

Գրքույկի սկզբում տրված է բժ. Ա. Բուդուլյանի ներածական խոսքը՝ «Յառաջաբանի փոխարեն» խորագրով:

Սույն հրատարակությունը տպակից է Կարլ Դադոնեի՝ «Ոսկեկուռքի գանձը» գիրքը:

191. Մայր ուղեխնամ /Անգղիերին բնագրէն թարգմանված.— Զմյուռնիա, Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1840.—4 շհ., 238 էջ.

192. Մարիամ անուն պզտիկ աղջկան մը պատմությունը /Անգլիերենից թարգմանված.— Զմյուռնիա, Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1841.—96 էջ.

Հեղինակի և թարգմանչի մասին դրքույկում չի հիշատակվում: Թարգմանված է անգլիերեն բնագրից, արևմտահայերեն:

193. Մարիետա Ֆրեդերիկ, Փաքրիկ վայրենիս /Ըստ Մարիէտայի/.— Թիֆլիս, Հրատ. բժ. Ա. Բուդուլյանի, տպ. «Հերմէս», 1914.—112 էջ.— /Գրադ-ն հայ տպագր. 400 և տասերի պյուտի 1500-ամյա հոբելյանի հիշատակին/.

Թարգմանությունը կատարված է ուսերեն հրատարակությունից: Թարգմանչի և թարգմանության մասին դրքում չի հիշատակվում:

Բժ. Ա. Բուդուլյանի հրատարակությամբ, նշված մատենաշարով լույս են տեսել մի շարք պատմվածքներ, որոնք նախատեսված են պատանիների ընթերցանության համար:

194. Մարվել Իֆ. [Դոնալդ կ. Միտչել]: Ամուրիի մը հրադնիրը կամ սրտի գիրք մը /Անգլ. թարգմ. Մ. Մամուրյան.— Զմյուռնիա, Տպ. Տետեյան հղբ., 1875.—136 էջ.

Թարգմանված է անգլիերեն բնագրից, արևմտահայերեն: Գրքում զետեղված է համառոտ առաջաբան, ուր հեղինակի մասին տրված է հետևյալ տեղեկությունը՝ «... Կեղծանունն է Իֆ. Մարվել, բուն անունն է՝ Տոնալտ կ. Միտչել... Իրոք նույն ինք հեղինակն՝ որ Իֆ-Մարվել անունով հրատարակած է այս երկն» /էջ 1/:

195*. Միլտոն Ջոն, Աղամ, Եվա /Միլտոնի դրախտ կորուսեալ անուն քերթուածէն հատուածեալ վեպ /Անգլ. թարգմ. ի գրաբար

Հ. Ս. Մալիզյան.— Կ. Պոլիսի Տպագր. Պողոս Քիրիչևյանի, 1877.— 39 էջ.

Պետական գրադարանում չկա՝ նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա՝ Տես՝ Ղ հտ. 2, էջ 1976.

196. Միլտոն Ջոն։ Դրախտ կորուսյալ /Թնագրից թարգմ. Հ. Արսեն Ղազարոս Ղազիկյան, Մխիթ. — Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, Մխիթար. տպագր., 1913.— /Ա—ԺԲ/, 487 էջ, իլյուստր.— /Քերթողական մատենադարան, ԺԶ/.

Գրքի սկզբում գետնադրված է համառոտ ակնարկ նվիրված հեղինակի կյանքին ու գործունեությանը՝ «Միլտոն» խորագրով [էջ Ե—Թ]։ Այնուհետև տպագրված է Միլտոնի «Յաղագս տաղաչափության» խոսքը։ Թարգմանությունը կատարված է աշխարհարար, Հ. Արսեն Ղազիկյանի կողմից։

197. Միլտոն Ջոն։ Դրախտ կորուսեալ /Թարգմանություն յանգլիական բնագրի Հ. Յարութիւն վ. Ավդիւբեան.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1824.— 503 էջ.

Տխաղթ. տռաջ՝ «Միլտովնի Անգղիացոյ դրախտ կորուսեալ»։ 7—22 էջերում՝ «Վարք Միլտովնի» քննությունն դրախտի կորուսելոյ», 23—24 էջերում՝ «Թարգմանություն մեր յանգլիական բնագրէն»։

Բովանդ.՝ Յաղագսարան, Վարք Միլտովնի, քննությունն դրախտին կորուսելոյ, Թարգմանություն մեր յանգլիական բնագրի։ Դրախտ կորուսեալ /գիրք Ա—ԺԲ/; Մանթոթությունը։

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից, դրաբար, արձակ։ Սույն հրատարակությունը համարվում է սրպես Միլտոնի «Դրախտ կորուսեալ»-ի առաջին թարգմանությունը /Տես՝ Ղ հտ. 2, էջ 1976 և «Գրացուցակ Վենետիկի Մխիթ.», 1960, էջ 54.

Վենետիկի Մխիթարյանները հավատարիմ մնալով իրենց կրոնական պահպանողական աշխարհայեցողությանը՝ չհետևեցին ժամանակի Եվրոպական առաջադեմ գրականությանը, չհրատարակեցին հեղափոխական լուսավորիչների ստեղծագործությունները։ Մխիթարյանները թարգմանում էին մեծ մասամբ գրաբար, Եվրոպական ու հին աշխարհի ականավոր հեղինակների գլուխգործոցները։ Ինչպես օրինակ՝ Միլտոնի «Դրախտ կորուսեալ»-ը /1824/, «Ռոբինզոն

Կրուզոն-ն /1817—1836 թթ./, Եզոպոսի առակները /1818, 1827 և 1849 թթ. և այլ երկեր:

198. Միլտոն Ջոն: Կորուստ դրախտին /Թարգմ. Հ. Արսեն Կոմիտաս Բագրատունի ի Միլթոն.— Վենետիկ/ Տպ. ս. Ղազարի, 1861.—273 էջ, 3 թ. պիմանկ.

Գրքի սկզբում զետեղված է թարգմանչի ներածական խոսքը՝ «Թարգմանիչէն» խորագրով: Այնուհետև «Միլտոնի Յաղագս տաղաչափության» խոսքը ուղղված ընթերցողներին:

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից՝ գրաւար. չափածո:

199. Մոնգոմերի, Երկու եղբայր /Վեպիկ/ /Անդլ. թարգմ. Պ. Պ.— Թիֆլիս/ Թիֆլ. հայ հրատ. ընկ., տպ. Մ. Շարաձևի և ընկ. 1895.—236 էջ.

200. Մոնգոմերի, Երկու եղբայր /Վեպիկ/ /Անդլ. թարգմ. Պ. Պ.— Թիֆլիս/ Թիֆլ. հայ հրատարակչ. ընկ., տպ. Մ. Շարաձևի և ընկ., 1889.—236 էջ.

201. Մորիեր Զեյմս, Հաջի Բարայի արկածները Անգլիայում /Վեպիկ/ /Թարգմ. անգլ. բնագրից Մկր. Կարապետյան Նոոր-Ջուղայեցի/.— Թիֆլիս/ Տպ. «Հերմես», 1905.—316 էջ.— Տիպոգր. վրա՝ «Յաւելուած «Մուրճ» ամսագրի»:

Սույն հրատարակությունը կադմակից է Մորիեր Զեյմսի՝ «Հաջի Բարայի արկածները Պարսկաստանում» գրքին:

202. Մորիեր Զեյմս, Հաջի Բարայի արկածները Պարսկաստանում /Վեպիկ/ պարսկական կյանքից/ /Թարգմ. անգլ. բնագրից Մ. Կ. Նոոր-Ջուղայեցի/.— Թիֆլիս/ Տպ. Ա. Քոթաթեյանի, 1904, XVI, 408 էջ.— Տիպոգր. վրա՝ «Յաւելուած «Մուրճ» ամսագրի»:

Գրքի սկզբում տպագրված է խոսք թարգմանչից /Մ. Կ./ Այնուհետև զետեղված է ներածական խոսք լորդ Զորջ Կլարկինի՝ նվիրված հեղինակի կյանքին ու գրական գործունեությանը [էջ 2—16], Թարգմանիչն է՝ Մկրտիչ Կարապետյանը:

Սույն հրատարակությունը կադմակից է Զեյմս Մորիերի՝ «Հաջի Բարայի արկածները Անգլիայում» գրքին:

203. Մրցող պատգամավորները; Հայրական սեր; Նախապաշարմունք; /Պատմվածքներ/ /Անդլ. թարգմ. Խանգաղ.— Թավրիզ/ Հրատ. Թավրիզի հայ կրթ. «Սէր» ընկ., տպ. Թավրիզի հայոց Արամյան դպր., 1895.—49 էջ.

204. Մուկն և կատուն, /Թարգմ. անգլ. Ե. Վ. Նրկարակեցյան.—
Նոր-Ջուղայ Տպ. ս. Ամենափրկիչ վանքի, 1914.—45 էջ.— /Պարս-
կական հեքիաթներ/.

Բովանդ.՝ Մուկն ու Կատուն; Օճառավաճառի որդին; Թագավորա-
կան դանձ գտնող խորասանցի գյուղացու պատմություն-
ներ; Թագավորն ու ձկնորսը:

Աշխարհաբար թարգմանություն անգլերեն բնագրից:

Հեղինակի մասին գրքույկում տեղեկություններ չկան:

Սույն հրատարակությունը նախատեսված է մանուկների ըն-
թերցանության համար:

205. Մունք Շ. Աբրահամ Լինկոլն, Շարադր. Մունթի /Թարգմ.
օր. Մաթիլդա Տեր-Միքայելյանց.— Տփլիսի Տպ. Հովհ. Մարտիրոս-
յանցի, 1885.—94 էջ.

206. Նամակներ փոքր Հենրիի վրա իր մորաքույրից, Պարզեմ
Լերխանց /Թարգմ. անգլ. Հովհաննես Ախվերդյան.— Թիֆլիսի Տպ.
Գևորգ Արծրունու Ներսիսյան հոգևոր դպր., 1861.—59 էջ.

Հեղինակի մասին չի հիշատակված: Թարգմանությունը կա-
տարված է բնագրից, նախատեսված է մանուկների ընթերցանու-
թյան համար:

207. Նելսոն Սաբան Քարթր: Ի սեր դթություն, Սիրեցէք կեն-
դանիները, պաշտպանեցէք զանոնք.— Կ. Պոլիսի Տպ. Օ. Արղումա-
նի, 1911.—120 էջ.— Տես նաև՝ Կարտրի Սարահ...

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից, արև-
մտաշայկուն Թարգմանչի մասին գրքում չի հիշատակված:

208. Նիլանդեր Ջոն Վիլիամ, Իդիլիա /Հովվերգություն/ /Ռու-
սեր. թարգմ. Ս. Ռոմեյսանյան.— Կ. Պոլիսի Հրատ. Նիքատ. գոր-
ծակալ, տպ. Մ. Հովակիմյանի, 1914, էջ 323—349.

Թարգմանված է ռուսերեն հրատարակությունից, արևմտաշա-
յկուն:

Սույն հրատարակությունը կազմակից է Սպիրիի՝ «Այծուրած
Մօնի» գրքին: Տես՝ ալիդ. 2.

209**. Նիլ Քարթր: Ամերիկացի զազունի ոստիկանին նոր
արկածները.— [Կ. Պոլիս], Հակոբ Աբրահամյանի, [տ. թ.], 48
էջ.— /Մատենաշար Հայաստան, թիվ 1—10/.

Կազմակից է՝ նաթ Բինքերթլենի՝ «Նիակարայի սրընթացներուն
մեջ» գրքին: Տես՝ ալիդ. 2.

210. Նիֆ-Քարթըր գաղտնի ոստիկաններու թագավորը; Վտանգավոր հիվանդ մը [Թարգմ. Երվ. Օտյան]։— Գահիրեի Հրատ. Սովրատ Սարաֆյանի, տպագր. Զարեհ Պերպերյանի։— [1912], 47 էջ։— [Արկածալից պատմություն մը, թիվ 1/]

Թարգմանված է անգլերեն բնագրից, արևմտահայերեն Ա. տիտղթ., տեղեկությունները վերցված են շապիկից; Տպագրության և արեթմվի վերաբերյալ հիշատակություն չկա։

Հեղինակի մասին գրքույկում չի նշված։ Թարգմանչի վերաբերյալ տեղեկությունները քաղված են «Հանդես ամսօրյա» պարբերականից՝ «Տես՝ «Հանդես Ամսօրյա», 1913, փետրվ., էջ 129/»

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սույն հրատարակությունը լույս է տեսել 1912 թվ.

211*. Նիֆ-Քարտըր ամերիկացի հռչակավոր ոստիկանին երեւելի գործերը [Թարգմ. Երվանդ Օթյան. — Կ. Պոլիս, 1912. — 119 էջ.

Պետական գրադարանում չկա։ Նկարագրված է բանասիրական աղբյուրների հիման վրա։

Տես՝ «Հանդես ամսօրյա», 1913, փետրվ., էջ 129.

212. Շեյֆսբիրյան պատմվածքներ, (Արծակ վերաշարադրանք Չարլզ և Մերի Լեմերի)։ Ա. Վենետիկի վաճառականը Պատկերազարդ [Թարգմ. տոքթ. Հովհ. Տ. Ստեփանյան. — Կ. Պոլիս, Հրատ. Վ. և Պ. Զարդարյան եղբայր, 1910. — 31 էջ, նկ. — Վերին. առաջ՝ «Լեմ Չարլզ և Մերի»։

Սույն հրատարակությունը համարվում է որպես Չարլզ և Մերի Լեմերի կողմից կատարված Շեքսպիրի «Վենետիկի վաճառական» թատերգության տրձակ շարադրանքը։

Տես նաև՝ Լեմ Չարլզ և Մերի...

213. Շեֆալիւր Վիլիամ։ Անտոնիոս և Կլեոպատրա [Տրամ 5 արար./ Թարգմ. Գ. Ֆետթլյան /Փառնակ/։— Փարիզ, Տպագր. Կ. Ներսիսյանի, 1911. — [Ե—ԺԹ], 108 էջ, 1 թ. դիմանկ. — Տիտղթ. վրա հեղ.՝ «Ուիլիամ Շեքսպիր»։

Թարգմանված է անգլերեն բնագրից, տրձակ, տրամադասյուն։ Գրքում զետեղված է թարգմանչի ներածական խոսքը նվիրված Շեքսպիրի ստեղծագործություններին, ինչպես նաև «Անտոնիոս և Կլեոպատրա» դրամայի թարգմանությանը։

214. Շեֆսպիր Վիլիամ: Աստղիկ և Ադոնիս /Թարգմ. Արթուր Համբարգարթյան.— Կ. Պոլիս: Տպագր. Մարգարյանի, 1836.—61 էջ.— Տիտղթ. վրա հեղ.՝ «Շէքըսպիր»:

Գրքույկում զետեղված է թարգմանչի ուղերձը «Մի բան» խորագրով՝ ուղղված ընթերցողներին: Թարգմանությունը կատարված է բնագրից, գրաբարախառն աշխարհաբար, արձակ:

Սույն հրատարակությունը կազմակից է Լ. Ն. Տուլստոյի՝ «Քոր-նեյ Վասիլիեֆ» վիպակին: Կ. Պոլիս, 1919.— Տես՝ ալիգ. 6.

215. Շեֆսպիր Վիլիամ: Արքա լիր /Ողբերգ. 5 արար./ /Անգլ. թարգմ. Հովհաննես խան Մասեհյան.— Թիֆլիս: Թիֆլ. հայոց հրատ. ընկ., տպ. Մ. Դ. Ռոտինյանցի, 1898.—180 էջ.

Հովհաննես Մասեհյանը, որը համարվում էր Շեքսպիրի հանճարեղ թարգմանիչը, լիովին տիրապետում էր մայրենի լեզուն՝ գրաբար և աշխարհաբար, նա հրաշալի գիտեր՝ ֆրանսերեն, արաբերեն, թուրքերեն, ֆարսերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն և այլ լեզուներ: Հայ բեմի վրա Շեքսպիրը խաղացվում էր հիմնականում Մասեհյանի թարգմանությամբ: Իր Շեքսպիրյան թարգմանություններով Հովհաննես Մասեհյանը աչքի ընկնող ծառայություն մատուցեց հայ ժողովրդի կուլտուրային և անմահացրեց իրեն:

Հովհ. Թումանյանը բարձր է գնահատել Մասեհյանի թարգմանական արվեստը: «Համլետ»-ի թարգմանության առթիվ, որ լույս տեսավ 1894 թվ. նա գրել է. «...Մենք կարող ենք ասել, թե առաջադիմություն ենք արել, ո՛չ, թո՛ւրք ենք կատարել, մի հանկարծակի թո՛ւրք: Նվ այդ թո՛ւրքը մեզ կատարել է տվել Մասեհյանը «Համլետ»-ի թարգմանությամբ»:

Շեքսպիրի պիեսներից, Հովհ. Մասեհյանի թարգմանությամբ լույս են տեսել՝ «Համլետ»-ը /1894/, «Ինչպես կուղեք» /1895/, «Ռոմեո և Ջուլյետա» /1896/, «Վինետիկի վտճառակտունը» /1897/, «Արքա լիր» /1898/:

1921—1923 թթ. Վիեննայում լույս տեսան Մասեհյանի թարգմանությամբ Շեքսպիրի չորս շքեղ հրատարակություններ՝ «Համլետ», «Օթելլո», «Մակբեթ», «Վինետիկի վտճառակտունը»:

Շեքսպիրի ստեղծագործությունները թարգմանել են նաև ուրիշները: Ինչպես օրինակ՝ Մ. Նուպարյանը, Ստ. Մալխասյանցը, Հովհ. Լալայանը, Շ. Տեր-Նիկողայոսյանը, Ա. Տետեյանը, Սենեքերիմ Արծրունին, Ս. Ամիրյանը, Գ. Բաբազյանը, Մ. Բաղդասարյա-

ներ, Գ. Ֆեոֆանը /Փառնակ/ Շեքսպիրի ստեղծագործությունները հայերեն թարգմանել են նաև այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են՝ դերասան Գ. Չմշկյանը, մեծատաղանդ նկարիչ Վարդկես Սուրենյանցը, հռչակավոր դերասան-ողբերգակ՝ Վահրամ Փափազյանը և ուրիշներ:

216. Շեքսպիր Վիլյամ: Զուր տեղը մեծ աղմուկ: Կատակերգ. 5 դործող. /Գերմ. հայերեն թարգմ. Հովհաննես Լալայան.— Թիֆլիս, Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1888.— [Ա—Գ], 111 էջ.

Գրքի սկզբում ղեկավարված է ներածություն թարգմանչի կողմից, որտեղ խոսվում է Շեքսպիրի սույն կատակերգության բովանդակության, թարգմանության ու տպագրության մասին: Ըստ թարգմանչի հայտարարության, նշված հրատարակության թարգմանության գլխավոր աղբյուրը եղել է գերմանացի Շլեդելի և Տիկի թարգմանությունները:

217. Շեքսպիր Վիլյամ: Ինչպես կուզեք: Թատերգ. 5 արար. /Անգլ. թարգմ. Հովհաննես Խան-Մասեհյանց.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատ. ընկ., տպ. Մ. Շարաձևի և ընկ., 1895.— 159 էջ.

218. Շեքսպիր Վիլյամ: Լիր թագավորը: Ըստ Շեքսպիրի ժողովրդական ընթերցանության համար [Համառոտակի կազմած հանրամատչելի զրույց] /Փոխադր. օր. Շ. Տեր-Նիկողայոսյանի (Նրիու պատկերով).— Թիֆլիս [Հրատ. Խ. Մալումյանի], տպ. «Արօր» Տ. Նաղարյանի, 1891.— 38 էջ, նկ.

Գրքուկի սկզբում ղեկավարված է համառոտ խոսք հրատարակիչ Խ. Մալումյանի կողմից, ուր նշված է ժողովրդական ընթերցանության համար հանրամատչելի զրբեր հրատարակելու անհրաժեշտության մասին:

Թարգմանությունը կատարված է փոխադրությամբ, հանրամատչելի դրույցի ձևով մասնաշաղկան ընթերցանության համար:

219. Շեքսպիր Վիլյամ: Լիր թագավոր: Ողբերգ. 5 արար /Թարգմ. Ստ. Մալխասյանց.— Ա. Պետերբուրգ, Տպ. Ի. Ն. Սկորոտոդովի, 1888.— [Գ—Թ], [Ժ—ԺԳ], 184 [2] էջ.

Թարգմանիչը սույն ողբերգության թարգմանությունը կատարել է գերմանացի Հայնրիխ Ֆոսսի գերմաներեն շափածո թարգմանությունից:

Գրքում ղետեղված է թարգմանչի առաջարանը նվիրված Շեքսպիրի «Լիր թագավոր»-ի թարգմանությունը:

Սույն հրատարակության մեջ տրված է նաև «Լիր թագավորի նախկին նիւթը» խորագրով բացատրություն ողբերգության պատմության վերաբերյալ:

Կազմակից է Կ. Ավետիսյանի՝ «Զուր հյուրասիրություն» պրոբին (առնա, 1906.— Տես՝ ալիգ. 6.

220. Շեքսպիր Վիլիամ, Համլետ, /Ողբերգ. 5 արար./ /Թարգմ. Գարեգին Բաբադյան.— Վիեննա, Տպ. Միլիթար., 1899, [Ժն—ԻԳ]—183 էջ, 1 թ. ներդ. պորտր.

Գրքի սկզբում ղետեղված է թարգմանչի ներածական խոսքը՝ «Համլետ»-ի սույն հրատարակության առթիվ [էջ Ժն—ԻԳ],

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից:

Տիտղթ. վրա նկարագրությունը տրված է հայերեն և անգլերեն:

221. Շեքսպիր Վիլիամ, Համլետ, Դանեմարքի իշխան, /Ողբերգ. 5 արար./ /Անգլ. թարգմ. Հովհաննես խան Մասեհյան.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Շարաձեի և ընկ., 1894.—222[2] էջ.

Թարգմանված է անգլերեն բնագրից, չափածու: Գրքում ղետեղված է թարգմանչի առաջաբանը նվիրված «Համլետ» ողբերգության թարգմանությանը:

Սույն հրատարակությունը կազմակից է Կ. Ավետիսյանի՝ «Զուր հյուրասիրություն» կատակերգությանը, Վառնա, 1906.— Տես՝ ալիգ. 5.

222. Շեքսպիր Վիլիամ, Համլետ, /Ողբերգ. 5 արար./ /Թարգմ. Սենեքերիմ Արծրունի.— Թիֆլիս, Հրատ. Բարսեղ Քամալյանի, տպ. Մ. Ռոտինյանցի, 1889.—[7], 125 էջ.

Թարգմանված է անգլերեն բնագրից:

Թարգմանված է նաև այլ լեզուներից, ռուս և ֆրանսիացի թարգմանիչներից՝ Կետչեր, Պոլևոյ, Կրոնբերգ, էմիլ Մոնտեգյու և ուրիշներ:

Գրքում ղետեղված են՝ հրատարակչի խոսքը /Բարսեղ Քամալյան/ և թարգմանչի ուղերձը «Իմ ընթերցողներին» խորագրով /Սենեքերիմ Արծրունի/ «Համլետ» ողբերգության առաջին բեմադրության մասին ասված է հետևյալը՝ ...1880 թվ. նոյեմբերի 20-ին

Թիֆլիսի թատրոնի հայ դերասանական խումբը ներկայացրեց առաջին անգամ «Համլետ» ողբերգությունը...»:

223^{**}. Շեքսպիր Վիլիամ: Համլետ: Իշխան Տանըմարքայի: Ողբերգ. 5 արար. Պատկերադ.— Կ. Պոլիս: Տպագր. Մ. Տեր-Սահակյանի, /ա. թ./, 135 էջ.

Թարգմանված է անգլերեն բնագրից, արևմտահայերեն: Թարգմանչի մասին չի նշված: Հրատարակության տարիների վերաբերյալ հիշատակություն չկա:

224. Շեքսպիր Վիլիամ: Համլետ: Դանիայի իշխան: /Արծալ/ Թարգմ. Սեյադ Ամիրյանց.— Բաքու: Հրատ. Սմբատ-բեկ Լալայանցի, 1886.— 48 էջ.

Տես՝ Համլետ: Դանիայի իշխան...

225. Շեքսպիր Վիլիամ: Հոռմէոս եվ ճիւլեէդդա: Ողբերգ. Ի հինգ արարուածս, Սթիվընսի, Մալոնի և Ս. Ճոնսոնի օրինակաց դիմընդդիմեալ բնագրէ /թարգմ. Ա. Կ. Տետեյան.— Զմյուռնիա: Տպագր. Տետեյանի, 1866.— /Գ—Իէ/, 112 էջ.— Տիտղթ. վրա՝ «Վ. Շէքսպիրայ խաղարկութիւնք»:

Թարգմանված է անգլերեն բնագրից, արևմտահայերեն, արձակ:

Ա. Տետեյանը բացի իր առաջաբանից, որտեղ նա ծանոթացնում է հայ ընթերցողին Շեքսպիրի ստեղծագործության հետ, տալիս է նաև անգլերեն բնագրի 1842 թ. հրատարակության առաջաբանը՝ «Յառաջաբան բնագրին /Շէքսպիրի երկոց վրայօք համառօտ քննադատութեամբ/» խորագրով: Այնուհետև Շեքսպիրի կենսագրությունը թարգմանված անգլերենից՝ «Կենսագրութիւն Վիլիամ Շեքսպիրայ (կրճատեալ ի բնագրէ)» վերնագրով:

Գրքում ղեկավարած է մի հատված Ալեքսանդր Դյումայի՝ Շեքսպիրի վերաբերող ուսումնասիրությունից, որը խորագրված է՝ «Շեքսպիրի վարուց վրայ բնագրէն վերլուծելալը թարգմանելն և տք՝ հետեւեալը կը համառօտեմք Ա. Տիմայի գրուածքներէն»:

Թարգմանիչը առաջին անգամ հայերեն լեզվով սույն հրատարակության մեջ լույս է բնծայում Շեքսպիրի կտակը:

Ա. Տետեյանը իր առաջաբանում նշում է Շեքսպիրին թարգմանելու դժվարությունների և թարգմանական աշխատանքի առանձնահատկությունների մասին: Առաջաբանում նա գրում է. «Ծս, ըստ կարեացս, զայս թարգմանելով՝ սիրելի Ազգիս պզտիկ ծառայութիւն

մը բնելու նպատակաւ՝ մտակէտս սոյն է, որ խրախույս մ՝ ըլլայ մերագնէից այսպիսի ձեռնարկութիւններ բնելու Թեև 1853-ին հնդինակիս մեկ քանի խաղարկութիւնները թարգմանեցի, այլ ճակատագրաբար անյաջող բաղդ ունեցաւ անոնց տպագրութիւնը, սակայն առանց վհատելու անկե ի վեր ուրիշ մասեր ևս թարգմանելու շարունակեցի նէալ, մինչև հիմա փոշոտված մնացին: 1853-ին «Արփի Արարատեան»-ի մեջ «Կատակերգութիւն սխալանացը» կիսատ մնաց, և 1862-ին «Դիմակ»-ի մեջ «Համլետը» նոյն վիճակն ունեցաւ, և բոլոր թարգմանութիւններէս միայն «Վինետիկի վաճառականը» ամբողջ, շնորհիվ բարեյիշատակ Ս. Փափազեանի, նոյն տարի «Յաւերժահարս»-ի մեջ՝ մաս առ մաս լույս տեսաւ Առայժմ կնեակայնի սիրելի Ազգիս սույն ճշումնս և ճիւղէղոյս»-ն իբր բնտիր ճաշակ հեղինակիս երեխայրեաց, որոց քաղցրութեան մեջ թէ որ թարգմանութեանս համեմը նուազագորած է, յուսամ, որ ներողամիտ ըլլալու են անոր թերութեանց, որպեսզի քաջալերութիւն ստանալով յաջորդաբար միուս շատոնց ի վեր թարգմանուածներն ալ ի լոյս գան...»:

Սույն ողբերգութեան տեքստից առաջ՝ «Քննադատական» վերնագրով զետեղված են առանձին հատվածներ անգլիացի շեքսպիրագետներ՝ Ջոնսոնից և Մալոնից:

Տրված է նաև «Ռոմեո և Ջուլիետտա»-ի համառոտ բովանդակութիւնը:

Սույն հրատարակութեանը կազմակից է Գ. Ստեփանյանի՝ «Քննադատ օջախ» գրքին: Թիֆլիս, 1882.— Տես՝ ալիդ. 4.

Մեծ երախտիք ունին Տետեյան եղբայրները և նրանց կողմից հիմնադրված տպարանը՝ Ձմիւտնիւթում: Տետեյան եղբայրները եղել են ոչ միայն հրատարակիչներ, այլև թարգմանիչներ: Նրանց հետ միասին թարգմանութիւններ կ'ին կատարում նաև հայ նշանավոր թարգմանիչներ՝ Գր. Չիլինկիրյանը, Մատթեոս Մամուրյանը, Մսեր Մսերյանը և ուրիշներ: Նրանց միջոցով Տետեյանները մի քանի տասնյակ տարիների ընթացքում թարգմանել և հրատարակել են հայերեն՝ Շեքսպիրի, Դյոթի, Վոլտերի, Մոլիերի, Հյուգոյի, Լամարթինի, Ժյուլ-Վեռնի, Վալտեր Սկոտի, Ալ. Դյումայի և այլ գրողների ստեղծագործութիւնները:

226. Շեքսպիր Վիլիամ: Հուլիոս Կեսար: [Տրամ հինգ գործող.] / Թարգմ. անգլ. Մաթիլտ Գ. Պաղտասարյան: Պրուսա [Արձակ

թարգմ.]— Կ. Պոլիս: Տպար. Զ. Մատթեոսյանի, 1910.—153 էջ.

227. Շեքսպիր Վիլիամ: Ձմեռային հերիաթ, Ըստ Շեքսպիրի վերակադմեց Ղ. Աղայան.— Թիֆլիս: Հրատ. Կովկ. հայոց բարեգործ. ընկ., 1910.—48 էջ.

Սույն հրատարակությունը չկա պետական գրադարանում: Այն գտնվում է ԳԱ հիմնային գրադարանում և Շեքսպիրագիտական գրադարանում:

ԱԿԳ, ՇԳ.

228. Շեքսպիր Վիլիամ: Ձմեռային հերիաթ, Համառոտություն Մերի և Չարլզ Լամբի /Թարգմ. Հար. Նահապետյանց.— Թիֆլիս: Տպ. «Հերմէս», 1904.—29 էջ.

Գրքույկի սկզբում ղեռնդված է թարգմանչի համառոտ հիշատակությունը, ուր ասված է, որ «Մենք նպատակահարմար համարեցինք թարգմանել Մերի և Չարլզ Լամբի համառոտութեան ռուսերէն թարգմանութիւնից...»:

229. Շեքսպիր Վիլիամ: Մակբեթ, Ողբերգ. 5 արար. /Թարգմ. Ստ. Մալխասյանց.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. «Արօր», Տ. Նաղարյանի, 1892.— [Ա—ԺԸ], 108 էջ.

Գրքում թարգմանչի կողմից տրված է առաջաբան, ուր նշված է, որ «... Ներկա թարգմանութիւնն արել ենք Շլեգելի և Հիլտենբերգի գերմաներեն հրկու ընտիր թարգմանութիւնների վերայից, ի նկատի ունենալով նաև Ուստրիալովի ռուսերեն և Յոսսի ու Բիրլդի-րի գերմաներեն թարգմանութիւնները: Սոցանից դատ աչքի առաջ ենք ունեցել անգլերեն բնագիրը, որի համեմատութեամբ ենք արել մեր ամեն մի տողի թարգմանութիւնը [էջ Գ]»:

Այնուհետև ղեռնդված է հոդված՝ «Հայկական տաղաչափութիւն (հիմնական կանոններ)» խորագրով [էջ Ե—Ժ] և «Մակբեթ» ողբերգության համառոտ շարադրանքը՝ «Մակբեթի նախկին նիւթը» վերնագրով [էջ ԺԱ—ԺԸ]:

Թարգմանությունը կատարված է շափածո, ղերմաներեն հրատարակությունից:

230. Շեքսպիր Վիլիամ: Միջամառային գիշերվա երազ, Midsummer-night's Dream /Թարգմանված հռչակավոր «Clobe Edition» հրատարակությունից, որ հայտնի է նաև «The Cambridge Shakespeare» անունով [Թարգմանություն Վարդգես Սուրենյանցի].— Թիֆլիս: Տպ. Ա. Կերեսելիձեի, 1912.—63 էջ.— [«Հուշարարի» մատենադարան, № 14/.

Գրքի սկզբում տրված է խարդմանչի կողմից գրված տառաշա-
բան, ուր ասված է, որ «... Ներկայ թարգմանութիւնս կատարված
է հռչակավոր «Կեմբրիդճ Շեքսպիր» կոչված հրատարակութիւնից...
/Վարդգէս Սուրենյանց. նկարիչ/:

231. Շեքսպիր Վիլիամ: Ռոմեո և Ժյուլիետ /Ողբերգ. 5 արար./
/Անգլ. բնագրից թարգմ. Մեսրոպ Նուպարյան.— Իզմիր: Տպագր.
Մամուրյանի, 1912.— [Ա—Ժէ], [Գ—ԺԶ], 176 էջ.

Շեքսպիրի սույն ողբերգության սկզբում տրված է թարգմանչի
համառոտ ներածությունը: Թարգմանությունը կատարված է անգ-
լերեն բնագրից, արևմտահայ լեզվով, արձակ: Վերջում զետեղված
է «Ծանոթութիւնք»:

232. Շեքսպիր Վիլիամ: Ռոմեո և Զյուլիետ /Ողբերգ. 5 արար./
/Թարգմ. անգլ. Հովհաննես Խան Մասեհյան.— Թիֆլիս: Հրատ.
Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Դ. Ռոստինյանցի, 1896.—
189 էջ.

Գրքի սկզբում զետեղված է թարգմանչի ծանոթությունը: Թարգ-
մանությունը կատարված է բնագրից, չափածո:

233. Շեքսպիր Վիլիամ: Վենետիկի վաճառականը /Թատերգ.
5 արար./ /Թարգմ. անգլ. Հովհ. Խան Մասեհյան.— Թիֆլիս: Հրատ.
Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Դ. Ռոստինյանցի, 1897.—
133 էջ.

Տիտղոսաթերթի վրա տրված է թարգմանչի լինքնագիրը ուղղղ-
ված՝ Գ. Սունգուկյանին:

234. Շեքսպիր Վիլիամ: Օթելլո [Վենետիկի մավրը /Ողբերգ.
5 արար./ /Թարգմ. Գարեգին Հ. Բաբաղյան. Snakespeare. Othello.
Translated into Armenian by Garekine Papasian.— Գահիրե,
1904.— [է—Թ], 186 էջ.

Գրքի սկզբում տպագրված է թարգմանչի ուղերձը ուղղված
Մարտիրոս Թոքաթյանին [էջ է—Թ]: Թարգմանված է բնագրից,
արձակ:

Սույն հրատարակությունը կազմակից է Շեքսպիրի՝ «Համլետ»
ողբերգությանը: Վիեննա, 1899.— Տես՝ աղիգ. 2.

235. Շեքսպիր Վիլիամ: Օտելլո (Վենետիկի մավր): /Ողբերգ.
5 արար./ /Թարգմ. Ստեփանոս Սուլխանյանց.— Տիֆլիս: Տպ. Հով-
հաննես Մարտիրոսյանցի, 1880.— 168 էջ.

Գրքի սկզբում տրված է թարգմանչի ձոնը՝ Հարություն Քալանթարյանցին: Այնուհետև գետեղված է առաջաբան նվիրված Վ. Շեքսպիրի կյանքին ու գրական գործունեությանը՝ «Շեքսպիր: Շեքսպիրի կենսագրությունը» խորագրով [էջ 5—35. Ս. Սուլխանյանց]:

Թարգմանությունը կատարված է արձակ, ուսերեն հրատարակությունից: Ստ. Սուլխանյանցը թարգմանությունը կատարել է Վեյնբերգի ուսերեն թարգմանությունից: Ռոմեո և Ջուլետտա-ի 1866 թվի հրատարակությունից հետո սա առաջին գիրքն է, որ մենք գտնում ենք առաջաբան, Շեքսպիրի կենսագրությունը և մանրամասն ծանոթագրություններ:

Թարգմանիչը Շեքսպիրի կենսագրությունը քաղել է հուլիանոս շեքսպիրագետ Գերվինուսից, ուսերեն թարգմանության միջոցով: Բերված են նաև Զոնսոնի, Կարլայլի և այլ շեքսպիրագետների կարծիքները՝ մեծ դրամատուրգի ստեղծագործության նշանակության մասին:

236. Չեստերտոնի ժառանգը: /Պատկերազարդ Վեյլ/ /Թարգմ. Դյուտ քհ. Աղանյանց.— Թիֆլիսի Տպ. Հովհ. Մարտիրոսյանցի, 1881.—188 էջ, իլ.

Հեղինակը չի նշված: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է ուսերեն հրատարակությունից:

237. Պատմություն վարույց Ռուդենսոնին Քուրզոլ /Թարգմանեալ ի զաղլիական լեզու, յաշխարհաբառ Ի Հ. Մինաս վարդապետէ Բժշկեան... Կրկին տպագրեալ.— Վենետիկի Տպ. ս. Ղազարի, 1836.—596 էջ.

238. Պատմություն վարույց Ռուդենսոնին Քուրզոլ ի խրատ և ի կրթութիւն մանկանց: Թարգմանեալ ի զաղլիական լեզուէ յաշխարհաբառ Ի հայր Մինաս վրդ. Բժշկեան Տրապիզոնցոյ ի Մխիթ. Միաբ.— Վենետիկի Տպ. «Ի վանս Սրբոյն Ղազարոս», 1817.—400 էջ.

Հեղինակի անունը գրքում չի հիշատակված: Սույն գիրքը Դ. Դեֆոյի երկի հետևությամբ գրված կամ վերապատմված բազմաթիվ «Ռոբինզոններից» մեկն է: Առաջաբանում թարգմանիչը բացատրում է, թե գոյություն ունի այս գրքի անգլերեն ընդարձակ հրատարակությունը, այսինքն՝ Դ. Դեֆոյի վեպը և 1799 թ. գերմանացի «Նրեկի գիտունի մը» համառոտությունը, որը առաջինից տարբերելու համար անվանված է «Նոր Ռուդենսոն»:

Գրքում զետեղված է Մինաս վրդ. Բժշկյանի առաջաբանը նվիրված սույն հրատարակության թարգմանությանը և նշանակությանը մանուկների համար:

Մինաս Բժշկյանը թարգմանական արձակի լավագույն նմուշներ է ստեղծում: Բացի «Ռոբինզոն Կրուզո» վեպի համառոտության աշխարհաբար թարգմանությունից, 1824 թվ. լույս տեսավ նրա կազմած «Վարժութիւն մանկանց» ալբանարան-ընթերցարանում 157—252 էջերում զետեղված ֆրանսիացի կին գրող Մարի Կոստենի՝ «Եղիսարեթ» վեպի աշխարհաբար համառոտ շարադրանքը:

.240. Պրայս Լ. եվ Ջիլբերտ Չ. Առասպելական հերոսներ /Թարգմ. անգլ. Գ. Իփեկյան.— Թիֆլիս: Հրատ. Ն. Ս. Բախչաճյանի, 1913.—64 էջ, նկ.— Տիտղթ. վրա՝ «Հավելված «Հասկեր» ամսագրի».

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից, նախատեսված է մի քիչ և միջին տարիքի երեխաների ընթերցանության համար:

Շպկ-ի վերջին էջի վրա՝ «Նուր մանուկներին» ընկերության հրատարակությունների ցանկը:

Ա. շպկ-ի:

241. Ջեյմս Ուիլյամ: Հույզ /Թարգմ. Սիրակոն Տիգրանյան.— Վաղ-պատ, 1904.—18 էջ.

Ա. շպկ-ի:

242. Ջերոմ-Ջերոմի: Նոր ցնորք /Պատմվածք/ Ազատ թարգմ. ռուսեր. Գ. Մ. Շահնազարյանց.— Շուշի: Տպ. Հայոց հոգևոր տեսչ. 1902.—30 էջ.— Տիտղթ. վրա հեղ.՝ «Ջերոմ-Ջերոմի»:

243*. Ջերոմ-Ջերոմի: Փեսացուներ և հարսնացուներ /Թարգմ. Մ. Մարտիրոսյան.— Թիֆլիս: Տպ. Քուլթաթեյաձեի, 1905.—15 էջ.

Սույն հրատարակությունը նկարագրված է ըստ մատենագիտական աղբյուրների Պետական գրադարանում չկա:

Տես՝ «Սովետահայ թարգմ. գեղարվ. գրականություն /1920—1980/: Մատենագիտ.», էջ 750:

244. Ջոնսոն Սամուել, Հասսեիլասայ պատմությունը /Թարգմ. անգլ. բնագրէ Ա. Կ. Տետեյան.— Ջմյուռնիա: Տպագր. Տետեյան,

1863.—112 էջ.— Տիտղթ. վրա՝ «Ծօնսրնի Հոսսսեւասայ պատմութիւնը»:

Սույն հրատարակութիւնը կաղմակից է Նշան Միրզոյանի՝ /Նշան Միրզա/ «Տորա» վեպին: Զմյուռնիա, 1871.— Տես՝ ալիգ. 2.

245. Զոնսոն Սամուէլ: Հոսսսեւաս արքայորդին եթովպիոյ: Որ է բանաստեղծական պատմութիւն իմն բարոյական՝ յօրինեալ ի մեծանուն Սամուէլէ Զանսրենեան: Յանգղիական բնագրէ թարգմանեալ ի հայ բարբառ երկասիրութեամբ պարուն Յովհաննա Ավդալեանց.— Կալկաթա: Տպ. Մարդասիրական ճեմարանի, 1826.—14 չհ. ժ, 268 էջ, իլ.

246. Ռըսկին Զոն: Ոսկեգետի թագավորը կամ սեվ եղբայրենբորը: Հեղինակ Ժոն Րըսքին Մ. Ա. /Թարգմ. Գրիշ-քնար.— Կ. Պոլիս: Տպ. Կ. և Մ. Հ. Քեշիշյանի, 1913.—67 էջ.— /«Ավետարեք» մատենաշար, թիվ 1/.

Թարգմանված է անգլերեն բնագրից, արեւմտահայ լեզվով: Գրքուկի սկզբում՝ համառոտ նախաբան նվիրված հեղինակի գրական գործունեությանը և սույն երկի թարգմանությանը:

247. Ռոքեբուս Չարլզ: Պատահական ընկերություն /Թարգմ. Ա. Ս.— Թիֆլիս: Հրատ. «Հասկեր»-ի, «Նվեր մանուկներին» ընկ., տոյ. Ն. Աղանյանի, 1914.—16 էջ, նկ.— Տիտղթ. վրա՝ «Հավելված «Հասկեր» ամսագրի»:

Նախատեսված է փոքրահասակ երեխաների ընթերցանության համար: Թարգմանչի մասին տեղեկությունները լրիվ չեն:

Շպկ-ի վերջին էջի վրա տրված է՝ «Նվեր մանուկներին» ընկ. կողմից լույս ընծայված հրատարակությունների գրականության ցանկը:

248. Ռուպենսոն համառոտ: Յանգղիականէն թարգմանեաց ի հայ... հաշիկ Թ. Ավետումեանց, աշակերտ ս. Սանդիստոյ, յօգուտ սիրելեաց ընկ.— Կալկաթա: Տպ. Ազգասեր Արարատյանի, 1850.— 60 էջ.

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից: Հեղինակի մասին հիշատակություն չկա:

Սույն հրատարակությունը գտնվում է Մատենադարանի գրադարանում:

Մ

249. Սետոն, Տոմպտոն-էրնեստ: Թիալորը Մի պոստային աղալնու պատմություն /Թարգմ. ռուսեր. Նիդերմ Սարգսյան.— Թիֆլիս: Հրատ. Վնվեր մանուկներին» ընկ., տպ. Ն. Աղանյանի, 1916.—29/2/ էջ, 1 թ. նկ.

Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակություն-նից: Նախատեսված է մանուկների ընթերցանության համար: Հավելված «Հասկեր» ամսագրի:

Գրքույկի 30-րդ էջում տպված է Վնվեր մանուկներին» ընկ. հրատարակությունների գրականության ցանկ. «Հասկեր» ամսագրի խմբագրությամբ:

250. Սետոն, Տոմպտոն-էրնեստ: Միտն ու որբերը /Նեքիաթ/ /Թարգմ. Աթ. Խնկոյան.— Թիֆլիս: Հրատ. «Հասկեր» ամսագրի, տպ. Ն. Աղանյանի, 1912.—16 էջ.— /Նվեր մանուկներին/.

Սույն հրատարակությունը գտնվում է Խնկո-Ապոբ անվան հանրապետական մանկական գրադարանում:

ՀՄԳ

251. Սետոն, Տոմպտոն-էրնեստ, Կախականջիկը /Թարգմ. կըր-ճատումներով Ստ. Լիսիցյան.— Թիֆլիս: Հրատ. «Հասկեր» ամսագրի, տպ. Ն. Աղանյանի, 1910.—32 էջ, նկ.— /«Հասկեր»-ի ձրի հավելված/.

Նախատեսված է փոքրահասակ երեխաների ընթերցանության համար: Շպկ-ի վերջին էջի վրա տպված է՝ «Հասկեր»-ի հրատարակությունների գրականության ցանկը:

252. Սետոն, Տոմպտոն-էրնեստ, Կաղլիկ քոթոթը /Թարգմ. Սալլույան.— Թիֆլիս: Հրատ. «Հասկեր» ամսագրի, տպ. օր. Ն. Աղանյանի, 1912.—44 էջ, նկ.

Հավելված «Հասկեր» ամսագրի, Վնուէր մանուկներին» ընկ. հրատարակություն: Նախատեսված է մանուկների ընթերցանության համար:

253. Սետոն, Տոմպտոն-էրնեստ: Վինիպեգի գայլը /Պատմվածք հերոս կենդանիների կյանքից/ /Թարգմ. Սիմակ.— Թիֆլիս: Հրատ. Վնվեր մանուկներին» ընկ., տպ. օր. Ն. Աղանյանի, 1913.—23 էջ, նկ.

1. Սետոն, Տոմպտոն-էրնեստ-ը և նրա ստեղծագործությունները պատկանում են կանադական գրականությանը:

254⁴⁴. Սենյալ պատանի ղինվորը: /Իրական պատկեր մը մեծ պատերազմեն/ /Թարգմանված է անգլ.— /Ա. տ. և ա. թ./, 15 էջ.

Ա. տիտղթ և շակ-ի նկարագրված է տեքստի առաջին էջից: Հեղինակի և թարգմանչի մասին հիշատակություն չկա: Տպագրության վայրը և տարեթիվը չի նշված:

255. Սիրի բշնամիներիդ: Պատմություն գաղթականների կյանքից Հյուսիսային Ամերիկայում /Թարգմ. Հովհաննես Միրզաբեգյանց, 2-րդ տպագր.— Բագու: Տպ. Հայոց մարդասիր. ընկ., գրաշար Միքայել Աղնավուրյանց, 1873.—151 [Ա—ԺԴ] էջ.

Առաջին անգամ լույս է տեսել Թիֆլիսում՝ 1869 թ. Գրքի 2-րդ տպագրության մեջ ղեկողված է թարգմանչի «Յառաջաբան»-ը: Հեղինակը չի նշված:

Տեքստի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է անգլերենից:

256. Սիրի բշնամիներիդ: Պատմություն գաղթականների կյանքից Հյուսիսային Ամերիկայում /Թարգմ. Հ. Միրզաբեգյանց.— Թիֆլիս: Տպ. Համբարձում էնֆիաճյանցի և ընկ., 1869.—150 էջ.

257. Սիրո Զղջումն: /Թարգմ. Պետրոս Տեր Հովհաննիսյանց.— Շուշի: Հրատ. Ավետիք Պապյանցի, տպ. Շուշու հայոց հոգևոր Տեսչություն, 1886.—17 էջ.

Հեղինակի մասին հիշատակություն չկա: Տեքստի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է անգլերենից:

258. Սկոտ Վալտեր: Թալիսման.— Կ. Պոլիս: Հրատ. «Արծիվ ժողովրդական գրավաճառանոցի», տպ. «Արաքս», 1914.—78 էջ, նկ.— /Մատենաշար «Արածանի» № 3/.

259. Սկոտ Վալտեր: Իվանոէ: /Վեպյ [3 հատորով] /Անգլ. թարգմ. Մ. Մամուրյան: Հտ. Ա—Գ.— Զմյուռնիա: Հրատ. Տիգրան Հարություն Տեսեյանի, 1872—1874.— Տիտղթ. վրա՝ «Վալթեր Սքոթ»:

Հտ. Ա. 1872. 176 էջ.

Հտ. Բ. 1873. 352 էջ.

Հտ. Գ. 1874. 153 էջ.

Գրքի առաջին հատորում ղետեղված է թարգմանչի առաջաբանը՝ նվիրված Վալտեր Սկոտի կյանքին, գրական գործունեությանը

և «Իվանոէ» վեպի թարգմանությանը, Թարգմանությունը կատարված է բնագրից, արևմտահայերէն:

19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության նշանավոր դեմքերից է՝ գրող, հրապարակախոս, թատերագետ-պատմաբան, բանասեր, մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ և ականավոր թարգմանիչ՝ Մատթեոս Մամուրյանը: Նա տիրապետում էր գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն և իտալերեն լեզուներին, ունի բաղմամբով թարգմանություններու Մամուրյանը հայերեն թարգմանել է՝ Վոլտերի, Գյոթեի, Լեսսինգի, Ա. Դյումայի, Ժյուլ-Վեռնի, Վ. Սկոտի, Լ. Տոլստոյի և ուրիշ գրողների երկերը:

Մամուրյանը անգլիական գրողներից թարգմանել է՝ Վ. Սկոտի «Իվանոէ» /1876/, Ի. Մարվիլի «Ամուրիի մը երազները կամ սրտի գիրք մը» /1875/, Մարի Կորելիի «Իմ զարմանալի կինս» /1896/, Ֆ. Հյումի «Աներևույթ պարոնը» /1897/, Մամուրյանի թարգմանությամբ գերմաներենից լույս տեսան՝ Գյոթեի «Վերթերը» /1892/, Լեսսինգի «Նաթան իմաստունը» և այլ երկեր:

260. Սկոտ Վալտեր, Իվանոէ և Զեդինակ՝ Վալթեր Սքոտ [Լուկ հատորով] /Անգլ. թարգմ. Մ. Մամուրյան, Հո. Ա.—Գ.— Զմյուռնիա: Տպ. Տեռեյանների, 1872—1873.—

Հո. Ա. [Զ], 176 էջ.

Հո. Բ. 177—352 էջ.

Հո. Գ. 353—506 էջ.

Սույն հրատարակությունը գտնվում է Մատենադարանի զրուդարանի հայկական ֆոնդերում:

Մ

261. Սկոտ Վալտեր, Իվանոէ /Վեպ/ /Անգլ. թարգմ. Մ. Մամուրյան, Հո. 2-րդ, 3-րդ տիպ.— Զմյուռնիա: Հրատ. և տպագր. Տ. Հ. Տեռեյանի, 1876.—153 էջ.

262*. Սկոտ Վալտեր, Լճակին օրիորդը /Թարգմ. Հ. Զ. Միրզայանց.— Թիֆլիս, 1899, 380 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է բանասիրական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Հանդես ամսօրյա», 1899, մայիս, էջ 151.

263. Սկոտ Վալտեր, Լճի լեյդին: Բաղկացած վեց նվագից

Աղատ թարգմ. բնագրից Հ. Զ. Միրզայանց.— Թեհրան, Տպ. «Փոս-րոս», 1912.— 227 էջ.

Գրքի սկզբում՝ «Պատմական նախաբան» Գրեց այս թարգմա-նության համար՝ դոկտոր Ռ. Բրուսը:

Գրքի վերջում տրված են ծանոթություններ, որոնք վերաբե-րում են սույն ստեղծագործության բովանդակությանը: Թարգմա-նությունը կատարված է անգլերենից, չափածո:

Վերն. առաջ հեղ.՝ «Ուսուցիչ Սքաթ»:

264. Սկոտ Վալտեր, Կղզիների լորդը Աղատ թարգմ. բնա-գրից, Հ. Զ. Միրզայանց.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատա-րակչ. ընկ., տպ. Մ. Դ. Ռոտինյանցի, 1898.— 380 էջ.

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից, չափածո: Գրքի վերջում տրված են ծանոթություններ կապված գրքի բովան-դակության հետ [էջ 343—380].

265*. Սկոտ Վալտեր, Կղզիների լորդը Թարգմ. Հ. Միրզա-յան.— Թիֆլիս, 1893, 380 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտա-կան աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Գրացուցակ հայերեն գրքերի կուլկ. հայ. րարեգործ. ընկ. գրադ.-ն», Թիֆ-լիս, 1910, էջ 75.

266*. Սկոտ Վալտեր, Մարմիոն Ֆլոդենֆիլդի մեկ ղրույցը Թարգմ. Հ. Զ. Միրզայան.— Թիֆլիս, 1898.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է բանասիրական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Հանդես ամսօրյա», 1899, մայիս, էջ 151.

267. Սոնատու, Համարձակ Բոբբին Թարգմ. Մարտիրոս Ղահ-րամանյանց.— Բաքու, Տպ. Ա. Մ. Ղազարյանի, 1898.— 16 էջ.

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից, արևելա-հայ լեզվով: Նախատեսված է մանուկների ընթերցանության հա-մար:

268. Սվիֆտ Զոնաթան: Գուլլիվերի ճանապարհորդությունը լիլիպուտների և բրորդինյացոց աշխարհներում Թուսերեն լիակա-տար թարգմանությունից թարգմ. Ղազարոս Աղայան.— Թիֆլիս:

Հրատ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1897.— 195 էջ, նկ.

Նախատեսված է մանուկների և պատանիների ընթերցանության համար:

Շափ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերի վրա տպագրված է Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկ. կողմից լույս ընծայված գրքերի ցուցակը /134 անուն/:

269. Ալիֆտ Զոհաբան, Ճամբորդությունը կյուլիվերի ի զանազան հեռակա ուղղոս աշխարհի... Հանդերձ կենսագրությունը հեղինակին [Թարգմ. անղլ. Սարգիս Տ. Գասպարյան].— Զմյուռնիս: Տպ. սեղբարց Տեոեյան, 1857.— [Ա—ԻԴ], [1], 643 էջ, 50 թ. նկ. և հեղ. պորտր.— Տիտղթ, վրա հեղ.՝ «Յովնաթան Սուրիֆթ»:

Թարգմանությունը կատարված է անդլերեն բնագրից, արևմտահայ լիզվով, Դիրբը թարգմանել է Սարգիս Տ. Գասպարյանը [Տես՝ էջ Ե—Զ],

Սույն հրատարակության մեջ ղեկողված են թարգմանչի առաջաբանը և հեղինակի վերաբերյալ կենսագրական ակնարկ՝ «Կենսագրական տեղեկություն Յովնաթան Սուրիֆթյա» խորագրով:

270. [Ստեբն Լավրենս], Հենրիադդա կամ անառակ կնկան մը կյանքը /Թարգմ. Արմենակ Հայկունի.— Կ. Պոլիս: Տպ. Քյուրքճյանի, 1864.— 58 էջ.

Հեղինակի մասին հիշատակված է 5-րդ էջում: Թարգմանված է բնագրից, արևմտահայերեն:

Սույն հրատարակությունը գտնվում է ԳԱ հիմնադրին դրադարանում:

ԱԿԳ

271. Ստոկտոն, Կին թև վազր /Թարգմ. Ա. Նազարեթյան.— Բագու: Հրատ. գրավաճ. Ս. Հարությունյանի, տպ. «Արօր», 1899.— 23 էջ.

Տեքստի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սույն գրքույկը թարգմանվել է անգլերենից: Առաջին հրատ. լույս է տեսել 1897 թվ. Տես՝ «Լուսմայ», 1900, գիրք Ա. հունվ. էջ 363.

272*. Ստոկտոն, Կին թէ վազր /Անգլ. թարգմ. Ա. Նազարեթյանց.— Բագու: Հրատ. Ս. Հարությունյանցի, 1897.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Լումայ», 1900, գիրք Ա. հունվար, էջ 363.

273. Ստրետտոն, Փոքրիկ Մեզն ու նորա մանուկները: Գործ՝ տիկ. Ստրետտոնի /Թարգմ. օր. Դարիա Գասպարյան-Սահակյանց.— Թիֆլիս: Տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1877.—96 էջ.

274. [Ստրոնգ Գ.]: Ալկմասարի ոսկին: Վիպակ /Թարգմանված է անգլերենից.— Թիֆլիս: [Հրատ. բժ. Ա. Բուդուղյանի], 1914.—99 էջ.

Թարգմանչի մասին չի հիշատակված: Հեղինակի մասին տեղեկությունը վերցված է տեքստի 3-րդ էջից: Գրքի վերջում ղետեղված է հավելված՝ Մ. Ռիխթենբերգի «Ներկյուղ» խորագրով պատմվածքը:

275*. Վայկունի Ս. The Raven, որին և այլ քերթուածք ինչ յեղէալ ի պարզ հայկազներեն հավատարմաբար և ընդ քերթուածային ձևոցն կամ թեքնիքին այնց: Հեղինակ Ս. Վայկունի.— Վիեննա: Տպ. Միխթ., /ա. թ./, [Ա—Ժէ], 257 էջ.

Բովանդ.՝ Ձոնիք առ հայ պատանեկություն: Ի հիշատակ Միհրան Սվաճյան: Նախաբան: Ներածական: Մարմին գործոյս՝ Քերթուածք ի պարզ հայկազներեն: Քերթուածք բուն անգլիերեն: Յետին խոսք: Յավելված: Յանկ քերթուածոյ:

Գլոսար Թարգմանություն բնագրից, շափածու: Հայերեն տեքստից հետո տրված է անգլիերեն բնագիրը:

Տպագրության տարեթիվը հայտնի չէ:

276. Վոն-Պեյկ, Մյուս մոգի պատմությունը՝ /Անգլ. բնագր. հայերենի վերածնց Հովհ. Մ. Հովակիմյան.— Նյու-Յորք-Լոնդոն: Տպ. «Կոչնակ», 1895.—108 էջ, իլ.— Տիտղթ. վրա հեղ.՝ «Հենրի Վեն Տայք»:

Բովանդ.՝ Նախաբան: Երկրից նշանը: Բաբելոնի ջրերի մոտ: Փոքրիկ մանկայն սիրոյն համար: Յավերի միջոց: Մեծագին մարգարիտը:

Գրքում ղետեղված է համառու ներածություն հետևյալ խորագրով՝ «Ամերիկյան 1899-ի հրատարակության առաջաբանից»:

277. Վան-Պեյկ, Չորրորդ մոգը /Անգլ. թարգմանված.— Թիֆ-

լիսւ Հրատ. Թիֆլ. հայեր. գրքերի հրատարակչ., տպ. վրաց հրատ.
ընկ., 1893.—32 էջ.

278. Վեպֆ ի դերից Շեկսպիրայ (Արձակ վերաշարադրանք
Ջարլզ և Մերի Լեմերի).— Վերն. առաջ՝ Լամբա /Թարգմ. Թ. Տեր-
Ստեփաննոսյան.— Վենետիկի Ս. Ղազար, 1903.—271 էջ.

Ռովանդ.՝ Ռոմիոն և Ջուլիետ; Վենետիկցի վաճառական; Օթելլո;
Ջզոնացուցանել կին ժանտարնույթ; Համլետ; Դեր սխա-
լանաց և շփոթի; Մակբեթ; Սիմբրլին; Տիմոն Աթենացի;
Որպես և հաճո է քեզ; Արքայն լիր; Փոթորիկն;

Տես՝ Լեմ Ջարլզ և Մերի...

Տես նաև՝ Լամբա...

279. Վիթման էմմա: Նրա մայրը /Վեպիկ/ /Թարգմ. Ն. Տ.
Ավետիքյան.— Թիֆլիսի Տպ. «Արօր» Տ. Նազարյանի, 1891.— 67
էջ.— Տիտղթ. վրա՝ «Աղբիւրի 1892 թ. 3-րդ ընթան»:

Տեքստի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սույն երկը
պատկանում է անգլիական գրականությանը, Թարգմանությունը
կատարվել է ռուսերեն հրատարակությունից:

Հեղինակ՝ Վիթման /Ուիթման/ էմմա:

280. Վոյնիչ էթել Լիլիան, Բոու Վեպ երեսնական թվերի իտա-
լական հեղափոխության օրերից /Թարգմ. Լևոն Շանթ.— Թիֆլիսի
Հրատ. «Ստ. Լիսիցեան և ընկ.» Տպ. «Հերմես» ընկ., 1906.—264
էջ.— /Օտարազգի հեղինակների Հտ. 2/.

Թարգմանությունը կատարված է անգլերեն բնագրից: Անդ-
լիական բնագիրը առաջին անգամ տպված է 1897 թ. Լոնդոնում:

281. Ուայզման աճղիլալի: Փաբիոյա կամ ստորերկրյա գերեզ-
մանաց եկեղեցի: Վեպ Ուայզման ձիրանավորի Անդղ.— Վենե-
տիկի Տպ. Միսիթ., 1857.—691 էջ.

Գրքի սկզբում զետեղված է խոսք՝ «Աշակերտք չորրորդի դա-
սու Ռաֆայելյան վարժարանին»:

Թարգմանչի մասին տիտղոսա-
թերթի վրա տեղեկություններ չկան: Ըստ մատենագիտական աղբ-
յուրների, սույն հրատարակությունը թարգմանվել է անգլերենից,
աշխարհաբար /Տես՝ «Ցուցակ գրոց Միսիթ. տպ. 1893, էջ 123/:

Շատ հավանական է, որ թարգմանությունը կատարվել է Ռաֆա-
յելյան վարժարանի սաների կողմից: Գրքում զետեղված է ներա-
ծական խոսք:

282. Ուայլդ Օսկար: Անձնվեր բարեկամը /Անգլ. թարգմ. Կարեն Միրիանյան.— Մոսկվա: Հրատ. հայկական գործերի կոմիտե-րիատի, 1920.—34 էջ.

283. Ուայլդ Օսկար: Աստղամանուկ /Հեքիաթ/ /Թարգմ. Կար. Միրիանյան.— Թիֆլիս: Տպ. օր. Ն. Աղանյանի, 1911.—36 էջ.— /Նվեր մանուկներին/.

284. Ուայլդ Օսկար: Արքայադուստրն ու թղուկը /Պատմվածք մանուկների համար/ /Թարգմ. Կար. Միրիանյան.— Թիֆլիս: Տպ. օր. Ն. Աղանյանի, 1911.—32 էջ.— /Նվեր մանուկներին/.

285. Ուայլդ Օսկար: Եսասեր հսկան /Անգլ. թարգմ. Կարեն Միրիանյան.— Մոսկվա: Հրատ. «Հայկ. գործերի կոմիտե», 1920.—16 էջ, նկ.

286. Ուայլդ Օսկար: Եսասեր հսկան /Թարգմ. Կար. Միրիանյան.— Թիֆլիս: Տպ. «Հերմես», 1911.—16 էջ.

287. Ուայլդ Օսկար: Երջանիկ պրինցը /Թարգմ. անգլ. Կարեն Միրիանյան.— Մոսկվա: Հրատ. հայկական գործերի կոմիտե-րիատի, 1920.—30 էջ.

288. Ուայլդ Օսկար: Երջանիկ իշխանը /Թարգմ. Լ. Բաբայան.— Թիֆլիս: Տպ. «Հերմես», 1904.—21 էջ.

Սույն հրատարակությունը կազմակից է Հալբե Մաքսի՝ «Սիս-տեմ» գրքին: Տես՝ ալիգ. 2. Արտատպված է «Մշակ» լրագրից:

289. Ուայլդ Օսկար: Լորտ Արթըր Սեվալի ոճիրը /Պատմվածք-ներ/ Արձակ քերթվածներ/ /Հայացուց Հակոբ Հ. Խաչմանյան.— Կ. Պոլիս: Տպագր. Հ. Գ. Փալազյանի, 1910.—94/2/ էջ.— /Անգլիական գրականություն, թիվ 1/.

Բովանդ.՝ Արվեստագետը; Բարեգործը; Նարգեսի մահը; Տերը; Աստուծո ղառաստանը; Իմաստության ուսուցիչ; Պատմ-վածքներ; Առանց գաղտնիքի Սփինքսը; Տիպար միլիո-նատերը; Լորտ Արթըր Սեվալի ոճիրը:

290. Ուայլդ Օսկար: /Հեքիաթներ/ /Անգլ. թարգմ. Կարեն Մի-քայելյան: Նախաբան Ա. Կարինյանի.— Մոսկվա: Հրատ. հայ գոր-ծերի կոմիտե-րիատի, 1920.—XVIII, 126 էջ.

Բովանդ.՝ Երջանիկ պրինցը; Սոխակն ու վարդը; Եսասեր հսկան; Անձնվեր բարեկամը; Նշանավոր ռոկերը:

Գրքի սկզբում տրված է Ա. Կարինյանի հոդվածը որպես նա-խաբան՝ «Օսկար Ուայլդի» «Հեքիաթները» խորագրով [5—18]:

նախարարանն ընդգրկում է իր մեջ գրական-քննադատական նյութեր և կենսագրական տեղեկություններ:

291. Ուայլդ Օսկար: Նշանավոր ռուկետը /Անգլ. թարգմ. Կարեն Միքայելյան.— Մոսկվա: Հրատ. հայկական գործերի կոմիտարիատի, 1920.— 36 էջ.

292. Ուայլդ Օսկար: Պատանի թաղավորը /Թարգմ. Կար. Միրիանյան: Պատկերազարդեց Սիմ. Արդուժյան.— Թիֆլիս: Տպ. «Հերմես», 1912.— 34 էջ, նկ.

293. Ուայլդ Օսկար: 1) Պրինցն ու ծիծեռնակը: 2) Դոֆինի մահը /Թարգմ. Մ. Բեջանյան.— Թիֆլիս: Հրատ. «Հասկեր»-ի, տպ. Ն. Աղանյանի, 1909.— 32 էջ.

Սույն հրատարակությունը գտնվում է ԳԱ հիմնադրի գրադարանում:

ԱԿԳ

294. Ուայլդ Օսկար: Սոխակն ու վարդը /Անգլ. թարգմ. Կարեն Միքայելյան.— Մոսկվա: Հրատ. հայկ. գործերի կոմիտ., 1920.— 20 էջ.

295. Ուայտ: Խղճով դատաստան /Թարգմ. ռուսերենից.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատ. ընկ. Ա. Պողոսյանի, տպ. Վրաց. հրատ. ընկ., 1900.— 56 էջ.— /Ժողովրդական գրադ-ն/.

Թարգմանչի մասին հիշատակություն չկա: Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից:

Հեղինակը և թարգմանիչը դրքում չի նշված: Հավանական է, որ սույն երկը պատկանում է գերմանացի նշանավոր մանկագիր Քրիստաֆոր Շմիդի գրչին: Թարգմանված է գերմաներեն բնագրից, աշխարհաբար: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է Վենետիկի Մխիթարյանների կողմից: Նախատեսված է պատանիների ընթերցանության համար:

Տես՝ Մատենադարան մանկանց...

Տես նաև՝ Օթոն կամ Կորսված տղան...

427. Երեք գրքույկ, 8—12 տարեկանների համար /Գերմ. փոխադր. Ա. Զիլինկայան.— Ալեք-պոլ, 1904, 17 էջ.— [Մանկական գրադ.-ն]։

Հեղինակի մասին հիշատակություն չկա: Լույս է տեսել նաև՝ «Մանկական գրադարան» խորագրով:

428. Ջախեր-Մազոլս, Կայենի կտակը /Գալիցիական գրույց-ներ/ /Թարգմ. Բաֆֆի.— Թիֆլիս, Տպ. Կովկ. գլխ. կառավարչ., 1884, XII.— 336 էջ.

Բովանդ.՝ Ջախեր-Մազոլսի գրականական գործունեությունը [Առաջաբան՝ էջ I—XII]; Կալումեայի Դոն-ժուանը [էջ 3—103]; Ֆրինկո բալադան [էջ 107—203]; Լուսերնիա դիշեր [էջ 207—336]։

Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից: Գրքում ղևտեղված է թարգմանչի առաջաբանը նվիրված հեղինակի կյանքին ու գրական գործունեությանը: Արտատպված է «Մշակ» լրագրից: Բաֆֆու ինքնագրով՝ «Թ. Թանդյանին»:

429. Ջախեր-Մազոլս, Հենրեկա /Թարգմ. Գ. Ա.— Ժրնև

Հրատ. Եվրոպայի հայ ուսանող. միության, 1903.—16 էջ.— Տիտղթ. վրա խորագիր՝ «Հայուհիներին»:

Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից, արևելահայերեն: Թարգմանիչը վերծանված չէ:

Սույն հրատարակությունը տպակից է՝ «Հայուհիներ» գրքին: Տես՝ ալիգ. 2.

430. Զախեբ-Մազոյս: Ճակատամարտը թարգմանեցին քույրեր Ա.— Ժընև, 1903, էջ 17—30.— Տիտղթ. վրա վերն. առաջ՝ «Հայուհիներին»:

Շպկ-ի վրա՝ «Հրատ. Եվրոպայի հայ ուսանող. միության» նվեր հայ ժողովրդին»:

Թարգմանությունը կատարված է ռուսերենից: Թարգմանիչները վերծանված չեն:

Սույն հրատարակությունը տպակից է՝ «Հայուհիներին» գրքին: Ժընև, 1903.— Տես՝ ալիգ. 2.

Տես նաև՝ «Հայուհիներին»...

431. Զրոսաբան Մանկանց: Ե. Ձկնորսին հյուղը; Ուղեկոտոր մայր մը; Մանրավաճառին աղջիկը; Ալպյանց խրճիթը.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1860, [2], 236[1] էջ, 1 ներդ. թ. իլ.

Սույն հրատարակությունն իրենից ներկայացնում է, որպես տարբեր ժողովուրդների գրականությունից թարգմանված բարոյախոսական բնույթի պատմություններ: Թարգմանությունը կատարված է գերմաներեն և ֆրանսերեն բնագրերից, արևմտահայերեն: Թարգմանչի մասին չի հիշատակված:

Կաղմակից է Ալֆոնս Դոգերի՝ «Փոքրիկ լլուկ» գրքին: Ա.— Պ. 1904.— Տես՝ ալիգ. 3.

Տես նաև՝ Ձկնորսին հյուղը...

432*. Զվիցեբյի Ռուպենստեյն /Ա. ա. և ա. թ./ լև—Ը/, 280 էջ.

Աշխարհաբար թարգմանություն գերմաներեն բնագրից, արևմտահայերեն: Հեղինակը և թարգմանիչը չի նշված: Գրքում գետեղված է համառոտ «նախաբան» թարգմանչի կողմից սույն վիպասանության նշանակության և թարգմանության առթիվ: Գրքում կա նաև «ներածություն» վիպասանության վերաբերյալ:

Գիրքը լուսնի տիտղոսաթերթ և շապիկ: Նկարագրությունը կատարված է «նախաբան»-ում եղած տեղեկությունների հիման վրա:

433*. Զուլեբուման Հերման: Հայրենական տունը: [Իրամա 4
գործող.] / Գերմ. թարգմ. Ս. Թառայանց.— Թիֆլիս: Տպ. «Հերմես»,
1905.

Պետական գրադարանում չկա: Նկարագրությունը կատարված
է բանասիրական աղբյուրների հիման վրա: Տես՝ «Ընկեր», 1909,
№ 1, էջ 17.

434. Զուլեբուման Հերման, «Հոգսը»: Ռոման Հերման Զուլե-
մանի / Գերմ. 115-րդ հրատարակությունից թարգմ. Գևորգ Ալթուն-
յան.— Թիֆլիս: Կովկ. հայոց հրատ. ընկ., տպ. Ն. Աղանյանի,
1913.— [Ս.—Բ], 298 էջ.— [Հանրային մատենադարան].

Գրքի սկզբում տրված է առաջաբան «Թարգմանչի կողմից»
Զուլեբումանի «Հոգսը» վեպի թարգմանությունը վերաբերյալ: Առանց
տիտղոսաթերթի է, նկարագրված է շապիկից:

435. Զուլեբուման Հերման, «Պատիվ»: Կոմեդիա չորս գործող.
թարգմ. Հարություն Ղարաբյոզյան.— Թիֆլիս: Տպ. Ա. Մելիք-Շահ-
նաղարյանցի, 1893.— [V], 164 էջ.

Պիեսի սկզբում տրված է առաջաբան թարգմանչի կողմից, ուր
համառոտակի խոսվում է հեղինակի և նրա ստեղծագործության
նշանակության, ինչպես նաև սույն երկի թարգմանության մասին:
Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից:

436. Զուլեբուման Հերման, Պատիվ: Կոմեդիա 4 գործող.
թարգմ. Ա. Թարխանյան.— Թիֆլիս: Տպ. «Արօր», Տ. Նազարյանի,
1893.— 146 էջ.

Կոմեդիայի սկզբում տրված է հեղինակի դիտողությունները
գործող անձանց վերաբերյալ:

Թարգմանությունը կատարված է վերմաներեն բնագրից՝ ար-
ևակ:

Սույն կոմեդիան առաջին տեղամ ներկայացվել է հայոց մըը-
տական դերասանական խմբի կողմից, Թիֆլիսի արքունական թատ-
րոնում 1892 թվ. նոյեմբերի 12-ին:

437*. Զուլեբուման Հերման: Սողոմի կործանումը: [Իրամա 5
գործող.] / Գերմ. թարգմ. Ս. Թառայան.— Թիֆլիս: Տպ. «Հերմես»,
1893.

Սույն հրատարակությունը պետական գրադարանում չկա:
Նկարագրությունն արված է բանասիրական աղբյուրների հիման

վրա՝ ՏԵՍ՝ «Թատրոն», 1895, № 2. Տես նաև՝ «Ընկեր», 1909, № 1, էջ 17.

438*. Զուղերման Հերման: Ֆրիցխեն, Դրամա 1 գործող. Գլորիա Բրանդեսի քննադատական հոդվածով /Գերմ. թարգմ. Ալ. Մատուրյան.— Թիֆլիս, 1901.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա՝ ՏԵՍ՝ Ղ հտ. 1, էջ 565.

439. Զուսմեեր Բերթա: Զենքերը վար: Ինքնակենսագրություն Մարթա Ֆոն Տիլլիգի, Հտ. Ա և Բ. /Թարգմ. Մ. Համբարձումյան.— Բոստոն: Տպ. «Հայրենիք»-ի, 1916, [1—8], 663 էջ, 1 ներդ. թ. պորտր.

Թարգմանչի կողմից տրված է առաջաբան՝ նվիրված գրքի հրատարակությանը և նշանակությանը: Այստեղ նշված է, որ թարգմանությունը «... արված է T-Holms-ի անգլերեն թարգմանությունէն»... /ՏԵՍ՝ էջ VII, տողատակի ծանոթություն/

Հտ. Ա և Բ մի կադմի մեջ են:

440. Էբերս Գեորգ: Մարդ եմ /Homo Sum/, /Վեպ/ /Գերմ. բնագրից թարգմ. Ստ. Մալխասյանց.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Դ. Ռոտինյանցի, 1898.— [Ա—է], 429 էջ.

Գրքի սկզբում տրված է առաջաբան թարգմանչի՝ «Գեորգ Էբերս» խորագրով: Թարգմանությունը կատարվել է գերմաներեն բնագրի 13-րդ տպագրությունից /1888/:

441. Էբերս Գեորգ: Փարավոնի աղջիկը /Պատմական վեպ/ /Փոխադր. Օ. Շապիր. Թարգմ. Գրիգոր Շահբուղադյան.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Շարաձևի, 1893.— 339 էջ.

442. Էշելրախ Հ. Երկու եղբայր Դպրոցական կյանքից /Ռուսեր. թարգմ. Երեմիա վրդպ. Ստեփանյան.— Վսդ-պատո Տպ. ս. էջմիածնի, 1910.— 44 էջ.— Տիտղթ. վրա՝ «Արտատպած «Արտատպ» ամսագրից»:

443. Էսպարբ [Եսպարբ] Ժորժ [Գեորգ], Ապուլը /Թարգմ. օր. Նվարդ Աղանյանց, 2-րդ տպագր.— Թիֆլիս, Հրատ. «Լուսնա»-յի, տպ. Ա. Քութաթեվաձեի, 1904.— 13 էջ.

Թարգմանությունը կատարված է գերմաներեն բնագրից, հան-

րամատչելի լեզվով, նախատեսված է ժողովրդական ընթերցանութ-
թյան համար:

444*. Էսպարբ Ժորժ [Գեորգ], Ապուշը /Թարգմ. գերմ. նվարդ
Աղանյանց/ Ա. տպուղը.— Թիֆլիս Տպ. Մ. Ռուսինյանցի, 1903.—20
էջ.

Սույն հրատարակությունը պետական գրադարանում չկա՝ նկա-
րագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա՝ Տեա՝
Ղ հտ. 1, էջ 687.

445. Էվալդ Կարլ: Երկիրն ու գիտաուղը /Թարգմ. Սիմակ.—
Թիֆլիս Ղրատ. «Հասկեր» ամսագրի, տպ. օր. ն. Աղանյանցի,
1910.—26 էջ, նկ.— Տիտղթ. վրա վերն. առաջ՝ «Հրատարակու-
թյուն», «Հասկեր» ամսագրի, № 9:

446. Էվալդ Կարլ: Տասներկու քույր (Մայիսյան բղիզի կյան-
քը) /Հեքիաթ/ /Աղատ Թարգմ. Կար. Միրիանյան.— Թիֆլիս Ղրատ.
«Հասկեր» ամսագրի, տպ. օր. ն. Աղանյանցի, 1911.—20 էջ, 1 նկ.

Թարգմանությունը կատարված է դերմաներեն ընթերցանությամբ՝ նա-
խատեսված է մանուկների ընթերցանություն համար:

Տիտղոսաթերթի վրա՝ «Հրատարակություն» ամսա-
գրի»:

447. Թեոփիլ Կամ պզտի ճգնավու.— Վենետիկ Տպ. ո. Ղա-
յարի, 1897.—79/1 էջ.— /Մատենադարան մանկանց, 9 Թեոփիլի/

Թարգմանված է գերմաներենից [ըստ Քր. Շմիդի], Թարգ-
մանչի և հեղինակի մասին գրքույկում հիշատակություն չկա՝ նա-
խատեսված է պատանիների ընթերցանության համար:

Սույն հրատարակությունը լույս է տեսել «Մատենադարան
մանկանց» մատենաշարով: Թարգմանությունը կատարվել է Վենե-
տիկի Միսթարյանների կողմից:

Տեա՝ Մատենադարան մանկանց...

448. Թեոփիլ Կամ պզտի ճգնավու.— Վենետիկ Ս. Ղազար,
1853.—80[1] էջ, 1 ներդիր թ. նկ.— /Մատենադարան մանկանց,
9. Թեոփիլի/.

Հեղինակի և թարգմանչի մասին գրքում չի հիշատակված: Հա-
վանական է, որ թարգմանությունը կատարվել է ըստ գերմանացի
մանկագիր՝ Քրիստափոր Շմիդի:

Լույս է տեսել «Մատենադարան մանկանց» մատենաշարով:

Թարգմանությունը և հրատարակությունը կատարել են Վենետիկի Մխիթարյանները:

Սույն հրատարակությանը կազմակից են հետևյալ գրքերը.

«Լուդովիկոս կամ կորսուած տղան»: Վենետիկ, 1853.

«Ռոզալիա Փալերմոյ քաղքին մեկ գեղեկ»: Վենետիկ, 1853.

«Քրիստինե կամ գառնուկ»: Վենետիկ, 1853.

«Ֆենհեյմ կամ առաքինութիւն վարձատրեալ»: Վենետիկ, 1853,

«Ֆելիշե կամ որբ տղայ»: Վենետիկ, 1853.

«Բարթողիմէոս կամ հովիվ քարոզիչ»: Վենետիկ, 1854.

2-րդ հրատարակությունը լույս է տեսել 1897 թվ. Վենետիկում:

Տես՝ Մատենադարան մանկանց...

449. Իքա՝ դ'սուհի Թոկենպուրկի /Վիպաս./ | Թարգմ. գերմ. Գաբրիել Գրասերյան.— Կ. Պոլիս: Տպագր. Գ. Պաղտատույանի /Արամյան/, 1886.—76 էջ.

Թարգմանված է գերմաներէն ընդարից, արեւմտահայերէն Լեդինտկի մասին յի հիշատակված:

Կազմակից է ճիւղ նորի՝ «Մղձաւանջ» զրքին: Տես՝ ալիգ. 4.

450. Իրլանտայի տնակը [Փոքր և միջին տարիքի համար]: Հտ. Ա.—Բ. [Թարգմ. Մխիթ.].— Վենետիկ, Հրատ. Մխիթ. միար. տպ. ս. Ղազարի, 1867.— [Մատենադարան մանկանց].

Հտ. Ա. 111 էջ.

Հտ. Բ. 127 էջ.

Երկու հատորը մի կազմի մեջ են:

Թարգմանությունը կատարված է գերմաներէն բնագրից, արեւմտահայերէն Լեդինտկի և Թարգմանության մասին հիշատակված է առաջաբանում: Նախատեսված է մանուկների ընթերցանության համար: Թարգմանված է ըստ գերմանացի մանկագիր Քրիստոփոր Շմիդի:

Սույն հրատարակությունը կազմակից է «Օթոն կամ կորսված տղան» գրքին: Տես՝ ալիգ. 5.

451. Իրլանտայի տնակը, Հտ. Ա.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1846.—97 էջ.— Տիտղթ. առաջ՝ «Մատենադարան մանկանց, 6. իրլանտայի տնակը»:

Թարգմանությունն աշխարհաբար է, լույս է տեսել 2 հատորով՝ «Մատենադարան մանկանց» մատենաշարով:

Տիտղոսաթերթի վրա չկան տվյալներ հեղինակի և թարգմանչի վերաբերյալ: Տեղեկությունները վերցված են գրքում զետեղված համառոտ առաջաբանից և մատենագիտական աղբյուրներից:

Հավանական է, որ հեղինակը գերմանացի նշանավոր մանկագիր՝ Քրիստափոր Շմիդն է, որի գրչին են պատկանում «Մատենադարան մանկանց» սերիայով լույս տեսնող հանրամատչելի երկերը կամ գրված են նրա հետևություններով: /Տես՝ Ղ հտ. 1, էջ 1852/:

Թարգմանված է Վենետիկի Մխիթարյանների կողմից:

Սույն հրատարակությունը կազմակից է՝ Օթոն կամ կորսված տղան» գրքին՝ Վենետիկ, 1853.— Տես՝ աղբ. 5.

Տես՝ Մատենադարան մանկանց...

452 Իրլանտալի տնակը, Հտ. Բ.— Վենետիկ, Տպ. ս. Ղաղարի, 1846.—109 էջ.— /Մատենադարան մանկանց, № 7, «Իրլանտալի տնակը»/.

Տես՝ Մատենադարան մանկանց...

Տես նաև՝ Օթոն կամ կորսված տղան...

453. Ասսինգ, Եսթան իմաստուն, Դրամատիկական բանաստեղծություն 5 գործող. Հեղինակություն Լեսսինգի /Lessing's Natlan der weise /Թարգմ. Գեորգ Բարխուդարյանց. — Բիֆիու, Տպ. 2. էնֆիաճյանցի և ընկ., 1878.—208 էջ.

454. Լինդաու Ռուդոլֆ, Կորած բարեկամը, Մի գրույց տաճկական կյանքից /Թարգմ. Գ. Ղ.— Վաղ-պատ, Տպ. ս. էջմիածնի, 1899, էջ 31—77.

Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից, Թարգմանչի վերաբերյալ տեղեկությունները լրիվ չեն:

Սույն հրատարակությունը տպակից է Գորբունովի և Պասսպովի՝ «Տառապյալների ծառա Ռոբին» գրքին՝ Տես՝ էջ 31.

455. Լյուդիա: Մարկոս Ավրելիոս կայսեր ժամանակին պատմական նկարագիր մը /Գերմ. ազատ թարգմ. Հ. Վրթանես վ. Յագուբճյան, Մխիթ. ուխտեն.— Վիեննա, Տպ. Մխիթ., 1861.— ՌՅԺ [4], 213[1] էջ, 1 թ. նկ.

Գրքում զետեղված է առաջաբան նվիրված հեղինակին և նրա ստեղծագործությանը: Տրված է նաև պատմական համառոտ ակնարկ Մարկոս Ավրելիոս կայսրի ժամանակաշրջանի վերաբերյալ:

Թարգմանությունը կատարված է բնագրից, արևմտահայ լեզվով: Տիտղոսաթերթի վրա՝ «Լիդիա»:

456. Լյուդովիկոս կամ կորսված տղան, [Թարգմ. Հովհաննէս Եսայան, աշակերտ Ռաֆայելյան վարժարանին].— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1897.—94[1] էջ.— /Մատենադարան մանկանց 10, Լյուդովիկոս/.

Թարգմանված է գերմաներենից, արևմտահայերենի Սույն վիպասանութիւնը նախատեսված է մանուկների ընթերցանության համար:

Հեղինակի մասին գրքում տեղեկութիւններ չկան, հավանական է, որ թարգմանութիւնը կատարվել է գերմանացի դրող Քրիստափոր Շմիդի հետեւությամբ: Թարգմանչի մասին տվյալները քաղված են դրքույկի 94-րդ էջից:

Սույն հրատարակութիւնը համարվում է, որպէս «Մատենադարան մանկանց» սերիայով լույս տեսնող հանրամատչելի վիպասանութիւններից մեկը:

Տես՝ Մատենադարան մանկանց...

457. Լյուդովիկոս կամ կորսված տղան [Մատենադ. մանկանց կամ հավաքումն օգտակար և զվարճալի պատմութ. տղոց կրթութ. համար] /Թարգմ. Հովհաննէս Եսայան.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1853.—97 էջ, 2 ներդ., թ. նկ.— /Մատենադարան մանկանց № 10, Լյուդովիկոս/.

Թարգմանված է ղերմաներեն ընտրից, լրստ Քրիստափոր Շմիդի, արևմտահայերեն:

Լույս է տեսել «Մատենադարան մանկանց» մատենաշարով նտրատեւում է պատմութիւնների ընթերցանության համար:

Տես՝ Մատենադարան մանկանց...

458. Ահա պլուգմանը; Զատկական հավիկիթներ; [Թարգմ. Վե. նետ. Միքի. միաբ.] 2-րդ տպագր.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1904.—125 էջ.— /Զրոսարան մանկանց, Զ. ծեր Պլուգմանը.../.

Թարգմանչի և թարգմանության մասին տիտղոսաթերթի վրա չկա հիշատակութիւն: Նախատեսված է մանուկների ընթերցանության համար: Հեղինակի մասին չի նշված: Գրքի ուսումնասիրութիւնը ցույց տվեց, որ թարգմանութիւնը կատարվել է գերմաներենից, աշխարհաբար, արևմտահայերեն, Վենետիկի Միքիարյանների կողմից: Ա. հրատարակութիւնը լույս է տեսել 1867 թ.:

459. Մենդյան խթումը: Բարոյական պատմութիւն տղոց հա-

մար.— Վենետիկի Տպ. ս. Ղաղարի, 1859.—125[1] էջ.— |Զբոսա-
րան մանկանց, Ա./.

Աշխարհաբար թարգմանություն գերմաներենից, արևմտահայ
լեզվով: Հեղինակի և թարգմանչի մասին դրքում տեղեկություններ
չկան:

Մեր կարծիքով թարգմանությունը կատարվել է Վենետիկի
Մխիթարյանների կողմից:

Սույն հրատարակությունը համարվում է որպես «Թարոյական
վկայիք» և «Թարոյական պատմություններ» մատենաշարով լույս
տեսած աշխարհաբար, հանրամատչելի վիպասանություններից մեկը:

460. Կեսներ [Գեսներ] Սողոմոն: Քերթուած ի մահն Արեւի
|Թարգմ. Հ. Մանվել վ. Զախչախյան ի Մխիթ. միաբ. Գ. Տպագր.—
Վենետիկի Տպ. ս. Ղաղարի, 1862.—257 էջ, նկ.— Տիտղթ. վրա՝
«Սողոմոն կհանկը»:

Սույն հրատարակության սկզբում գետեղված է թարգմանչի
առաջարկանքով վերջում՝ ծանոթություններ դրքում տեղ գտած առան-
ձին բառերի ու տերմինների համար:

Գրաբար թարգմանություն, չափածո քերթված: Թարգմանու-
թյունը կատարված է գերմաներեն բնագրից:

Տես նաև՝ Գեսներ (Կեսներ) Սողոմոն: Քեր-
թուած...

461. Կեսներ [Գեսներ] Սողոմոն: Քերթուած ի մահն Արեւի
|Թարգմ. Հ. Մանուէլ վ. Զախչախյան.— Վենետիկի Ս. Ղաղար,
1835.— [15], 272 էջ.

Ռովանդ.՝ Յառաջաբան թարգմանչին: Մահ Արեւի |Երգ 1—5/: Մա-
նոթութիւնք: Երգ ի տապանն Արեւի ի թարգմանչին:

Գրաբար թարգմանություն գերմաներեն բնագրից, չափածո:

Գրքում գետեղված է առաջաբան նվիրված սույն հրատարակու-
թյան թարգմանությանը և հեղինակի կյանքին ու գրական ստեղծա-
գործությանը:

462. Կեսներ [Գեսներ] Սողոմոն: Քերթուած ի մահն Արեւի
|Թարգմ. Հ. Մանուէլ վ. Զախչախյան.— Վենետիկի Տպ. ս. Ղաղա-
րի, 1825.—[15], 272 էջ.

Ռովանդ.՝ էջ 13—15՝ Յառաջաբանութիւն թարգմանչի: էջ 1—26՝
Մահ Արեւի [Երգ 1—5, արձակ]: էջ 263—269՝ Մանօթու-

թիւնք; էջ 270—272՝ երգ ի տապանն Աբելի, ի թարգմանչէն [չափածո]։

Գրաբար թարգմանութիւն գերմաներեն բնագրից, Գրքում ղեկեղծած է առաջարան նվիրված սույն հրատարակութեան թարգմանութեանը։

Տիտղթ. վրա՝ «Սողոմոն Կեսների քերթուած»։

463. Կլոպշտոկ, Մեսիական, /Հան ի հայ Հ. Սամուէլ Գանթարյանի Մխիթարյանց.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1903.—253 էջ.— Տիտղթ. վրա՝ «Կլոպշտոկի Մեսիական»։

Գրաբար թարգմանութիւն գերմաներեն բնագրից, չափածո։ Սույն երկը բաղկացած է 10 երգից, Յուրաքանչյուր երգից առաջ ղեկեղծած է համառոտ ծանոթութիւն՝ «Նախադրութիւն» խորագրով։

464. Կոցեբու /Քոցհայու/ Ավգուստ Անգնլակ ատրճանակներ, Զավեշտ 1 արար. /Գրեց Ա. Քոցհայու/ /Թարգմ. Հ. Վ. Խանայկյան.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1903.— 37 էջ.— /Գրադ. ն թատերգական/։

Թարգմանութիւնը կատարված է գերմաներեն բնագրից, արեւմտահայերեն, արձակ թատերգութիւն։ Հրատարակիչն է՝ Աթանաս Տիրոյանը։

Սույն հրատարակութիւնը կազմակից է Ինտրայի՝ «Նոճատան» զրքին Կ. Պոլիս, 1908.— Տես՝ ալիգ. 2.

Այս թարգմանութիւնը տպակից է նաև Զուլիո Զենոյիսիոյի՝ «Որդիական սեր» զրքին 3 արար. Վենետիկ, Ս. Ղազար, 1908.— Տես՝ ալիգ. 2.

465. Կոցեբու Ավգուստ, Հուսահատութեան ժայթքում, /Զափածո/ /Թարգմ. գերմ. Մկրտիչ Պարսամյան.— Կ. Պոլիս, Տպ. «Շանթ», 1912.—16 էջ.— Տիտղթ. վրա հեղ.՝ «Աուկուսթ Ֆոն Քոցէպուէ».— /Մատենաշար «Շանթ», թիվ 4/։

Գրքույկի սկզբում կա համառոտ տեղեկութիւն հեղինակի մասին՝ «Աուկուսթ Ֆոն Քոցէպուէ /Կենսագրական ծանոթութիւններ/» խորագրով։

Թարգմանութիւնը կատարված է գերմաներեն բնագրից՝ արեւմտահայերեն, չափածո։

466. Հալբե Մաֆս։ Սիստեմ; Օսկար Ուայլդ։ Երջանիկ իշխանը

/Գերմ. թարգմ. է. Բաբայան.— Թիֆլիս: Տպ. «Հերմէս», 1904.—52 էջ.

Գրքույկը բաղկացած է տարբեր հեղինակների երկու պատմ-վածքներից: Թարգմանությունը կատարված է գերմաներեն բնագրից, արձակ: Տիտղոսաթերթի վրա՝ «Արտատպած է «Մշակ» լրագրից»:

Տես նաև՝ Ուայլդ Օսկարի Երջանիկ իշխանը...

467. Հայգե Պաուլ: Բեաթրիչե /Վեպկ/ /Գերմ. թարգմ. Փիլիպպոս Վարդանյան.— Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.—103 էջ.

468. Հայգե Պաուլ: Նոնցայի բերդը /Վեպկ/ /Գերմ. թարգմ. Փիլիպպոս Վարդանյան.— Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1891.—108[1] էջ.

469. Հայնե Հայնրիխ: Բանաստեղծություններ և Քերթված-ներ /Թարգմ. Ֆրանս. Առուս-Շաֆեն.— Թիֆլիս: Տպ. Մ. Դ. Ռոտինյանցի, 1898.—131 էջ.

Բավանդ՝ Ինտերմեցյու նախնականք; Վերջուրան; Նոր գարուն; Դարձ; Երիտասարդություն բանաստեղծություններ; Հյուսիսային ծով; Պսակում; Վերջալույսը; Խցիկին մեջ; Գիշերատեն; Մովին խորը; Խաղաղություն; Հարցումներ; Գիշերերգեր; Դժուգակ երազ; Մեծարանքներ; Հորսնիքը; Գերեզմանոցը; Ողբերգություն; Ողբերգ; Ուխտը; Երկու զորանալի; Զուրի պայեր; Նավակը; Բուրանսիր; Պալատունի կոմսուհին; Ասրա մը; Ղազարի գիրքը; Հանգստի ծարավ; Մայիսի մեջ; Գերեզմանառ նավը; Հիշատակ; Նախաձեռնումը; Նշանածներ; Մարդասերը:

Թարգմանությունը կատարված է ֆրանսերեն հրատարակությանից՝ արևմտահայերեն, արձակ քառյակներով: Արտատպված է «Մուրճ» ամսագրից:

470. Հայնե Հայնրիխ: Երգերի գիրքը /Հեղինակի պատկերով և կենսագր. ակնարկով/ /Գերմ. թարգմ. Հակոբ Տեր-Գեորգյան.— Բագու Տպ. «Տրուդ», 1907.—154[1] էջ, 1 դիմանկ.

Բովանդ.՝ Հայերի Հայնե (Կենսագրական ակնարկ Հ. Տեր Գեորգյան); «Երգերի գիրքը»՝ Նախորդանք; Պատանեկական տանջանքներ 1817—1821. I «Անուրջներ»; II երգեր; III Ռոմանսներ՝ Տխուր պատանի; Արձագանք; Երկու եղբայր; Բանտարկյալի երգը; Երկու գրենադեր; Լուր; Ան-

շատում; Հիրավի; հրատ: Քնարական ինտերմեցցու
1822—1823. Նախերգանք; Վերադարձ: 1823—1824. Հարց
սարի վրա: 1824. Նախերգանք; Լեոնային իդիլիա; Պա-
տանի հովիվ; Բրակենի վրա; Հյուսիսային ծով: 1825—
1826. Առաջին ցիկլ: Պսակումն: Վերջալույս; Արևի մուտ-
քը; Խոստովանանք; Գիշերը նավասենյակում; Փոթորիկ;
Մովային հանգիստ; Խաղաղություն; Երկրորդ ցիկլ: Ող-
ջույն ծովին; Փոթորիկ; Նավաբեկ եղած; Վերջալույս;
Հունաստանի աստվածները; Հարցեր; Ֆենիքս; Վերջա-
բան:

Գրքում զետեղված է թարգմանչի կողմից գրված կենսագրա-
կան ակնարկ նվիրված Հայնրիխ Հայնեի կյանքին ու գրական գոր-
ծունեությանը: Վերջում տրված են առանձին բառերի և անունների
համար՝ ծանոթություններ: Թարգմանությունը կատարված է գեր-
մաներեն ընկերից:

471*. Հայնե Հայնրիխ: Մադկաքաղ Հ. Հայնեի բանաստեղծու-
թյուններից /Գերմ. թարգմ. Անանունի.— Թիֆլիս: Տպագր. Հ. Մար-
տիրոսյանի, 1882.—40 էջ.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է մատենագի-
տական աղբյուրների հիման վրա: Տես՝ Ղ հտ. 1, էջ 1562.

Տես նաև՝ «Գրադույակ հայերեն դրքերի կովկ.
հայ. բարեգործ. քնկ. զր.-ն» Թիֆլիս,
1910, էջ 50.

472. Հայնե Հայնրիխ: Հայնեի ընտիր մտքեր /Գերմ. թարգմ.
Արշակ Եղիզարյան.— Թիֆլիս: Տպ. օր. Ն. Աղանյանի, 1909.—128
էջ.

Թարգմանված է գերմաներեն ընկերից:

Գրքում զետեղված է Արշակ Եղիզարյանի երկու խոսքը՝ «Առա-
ջաբանի փոխարեն» խորագրով: էջ 6—11-ում տրված է համառոտ
կենսագրական ակնարկ՝ «Հայնրիխ Հայնե» խորագրով:

473. Հայունիկներին: /Պատմվածքների/.— Ժընևիլ: Հրատ. Եվրո-
պայի հայ ուսանող. միութ.-ն, 1903.—33 էջ.— /Նվեր հայ ժողովրդ-
դին/.

Բովանդ.՝ Զախեր Մազոխ: Հենրեկա /Թարգմ. Գ. Ա.— Զախեր Մա-
զոխ: Ճակատամարտը /Թարգմանեցին քույրեր Ա.; Տուր-
գենեկ Ի. Ս. Շեմքին /Թարգմ. օր. Զ.

Սույն թարգմանական երկերը նվիրույթայի հայ ուսանողական միության կողմից նվիրվել է հայուհիներին:

Շապիկի վրա՝ «Հայուհիներին» նվեր հայ ժողովրդին», Տես նաև Զախեր Մազոխի՝ «Հենրեկա» և «Ճակատամարտը» երկերը:

474. Հարստան Մոսից, Շիլիոնի կալանավորը, /Վեպ/ /Թարգմ. ռուսեր. Կ. Գյուլնազարյանց.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Շարաձեի, 1894.—237 էջ.

Գրքում զետեղված է թարգմանչի համառոտ առաջաբան՝ նվիրված հեղինակին և նրա ստեղծագործությանը: Թարգմանությունը կատարված է ռուսերեն փոխադրությունից:

475. Հաուպտման Գեհհարդ: Կառապան Հենշել, Դրամա 5 գործող. /Գերմ. բնագր. թարգմանեց Լևոն Բաբայան.— Թիֆլիս, Հրատ. Գ. Գալստյանի, տպ. Տ. Մ. Ռոտինյանցի, 1907.—96 էջ.

476. Հաուպտման Գեհհարդ: Մենակ մարդիկ, Դրամա 5 գործող. /Գերմ. թարգմ. Ե. Ա.— [Թիֆլիս], 1901, 122 էջ.

477. Հաուպտման Գեհհարդ: Զուլհակներ, Դրամա 40-ական թվականից /Ռուսեր. թարգմ. տիկ. Ս. Արտեմյան.— Ս.— Պետերբուրգ, Տպ. «Պուշկինյան», 1905.—106 էջ.

Թարգմանված է ռուսերեն հրատարակությունից, արձակ, ըստ Լ. Գուրեվիչի, դրամա 4 գործողությամբ:

478. Հաուֆ Վիլհելմ, Երիտասարդ անգլիացին /Թարգմ. օր. Շ. Տ. Ն.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Կ. Մարտիրոսյանցի, 1899.—42 էջ.

Թարգմանությունը կատարված է ռուսերենից: Թարգմանիչն է՝ օր. Շուշանիկ Տեր-Նիկողայոսյանցը:

479. Հաուֆ Վիլհելմ: Ինքնակոչ իշխտուր /Թարգմ. ռուսեր. օր. Շ. Տեր-Նիկողայոսյանց.— Թիֆլիս, Ավետիս Պողոսյանի հրատարակչ. ֆոնդ, տպ. օր. Ն. Լեզանյանցի, 1908.—38 էջ, իկ.— /Մանկական գրադ.-ն № 2/.

480*. Հաուֆ Վիլհելմ: Խալիֆ-արազիլի սլատմությունը /Գերմ. թարգմ. Լ. Պանիրյան.— Թավրիզ, Տպ. «Ումիդ», 1911.—32 էջ.

Պատական գրադարանում չկա: Նկարագրված է բանասիրական աղբյուրների հիման վրա:

Տես՝ «Հանդես ամսօրյա», 1912, ապրիլ, էջ 258.

481. Հաուֆ Վիլհելմ, Հրեա Արևերը որ ոչինչ չէր տեսել
/Թարգմ. օր. Շ. Տ. Ն.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ.
ընկ., տպ. Կ. Մարտիրոսյանցի, 1899.—17 էջ.

Սույն երկը թարգմանված է ռուսերեն հրատարակությունից,
Թարգմանիչն է՝ Շուշանիկ Տեր-Նիկողայոսյանցը:

482*. Հաուֆ Վիլհելմ, Պատուոյ Ետեմէն կամ Լիխթընշթայն:
/Վեպ/ /Թարգմ.-Մեսրոպ.— Բոստոն: Տպ. «Ազգ», [ա. թ.].—
[Ա. ԺԱ], 374[3] էջ, 15 թ. գունավ. նկ.

Թարգմանված է գերմաներեն բնագրից, արևմտահայերեն
Տպագրության տարեթվի մասին գրքում հիշատակություն չկա:

Գրքում գետեղված է առաջաբան թարգմանչի կողմից՝ «Վիլ-
հելմ Հաուֆ և Լիխթընշթայն» խորագրով [էջ Ա—ԺԱ], Առաջաբա-
նում տրված է համառոտ ակնարկ՝ հեղինակի կյանքի և գրական
գործունեության վերաբերյալ:

483. Հաուֆ Վիլհելմ, Ուխտավորք: [Վեպ երեսաների համար]:
Գործ Վիլհելմ Հաուֆի /Աշխատասիրեց Ռաֆայել Պատկանյան.—
Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. ընկ. հայերեն գրքերի հրատարակության,
տպ. Մովս. Վարդանյանցի և ընկ., 1882.—259 էջ.

Բովանդ.՝ Քարավան; Խալիֆ արագիլի պատմությունը; Կտրած
ձեռքի պատմությունը; Ֆաթմայի աղատությունը; Գաճաճ
Մուրի արկածք; Օրբասանի պատմածք:

Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությու-
նից, Թարգմանիչն է՝ Ռաֆայել Պատկանյանը:

Գրքի սկզբում՝ թարգմանչի կողմից տրված է համառոտ տու-
ջաբան սույն թարգմանության տպագրության և ընթերցողական
հատկացվածության մասին: Վեպը բաղկացած է մի շարք պատ-
մություններից, որոնք նախատեսված են մանուկների համար:

484. Հաուֆ Վիլհելմ, Քար-սիրտ /Պատմվածք/ /Թարգմ. օր.
Շ. Տ. Ն.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հրատ. ընկ., տպ. Մովսես Վար-
դանյանցի, 1899.—102[4] էջ.

Թարգմանիչն է՝ օր. Շուշանիկ Տեր-Նիկողայոսյանցը: Ուսում-
նասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է
ռուսերեն հրատարակությունից, Վերջում գետեղված է Թիֆլիսի
հայոց հրատարակչական ընկերության կողմից լույս տեսած գրքե-
րի ցուցակը:

485. Հերհարտ է. Հուդայի վերջին գիշերը /Թարգմ. հաշատուր քհ. Փանյանց.— Թիֆլիս, Տպ. Մն. Մարտիրոսյանցի, 1901.—26 էջ.— Տիտղթ. վրա՝ «Արտատպած «Նոր-Դար» լրագրից»:

486. [Հերհարտ է.], Հուդայի վերջին գիշերը /Թարգմ. Աբրահամ քհ. Շխիյանց.— Թիֆլիս, Տպ. Մ. Շարաձեի և ընկ., 1898.—26 էջ.— /Նոր մատենադարան, ԺԱ/.

Թարգմանված է գերմաներեն բնագրից: Գրքույկի վերջում զետեղված է գրականության ցանկ «Նոր մատենադարան» խորագրով: Տիտղոսաթերթի վրա հեղինակը չի նշված: Տեղեկությունները քաղված են մատենագիտական աղբյուրներից: Տես՝ Ղ հտ. 1, էջ 1543.

487. [Հերհարտ է.], Փաբիլա /Թարգմ. հաշատուր քհ. Փանյանց.— Թիֆլիս, Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1901.—91 էջ.— Տիտղթ. վրա՝ «Արտատպած «Նոր-դար» լրագրից»:

Թարգմանությունը կատարված է գերմաներեն բնագրից: Հեղինակի մասին տիտղոսաթերթի վրա նշումներ չկան: Տեղեկությունները քաղված են մատենագիտական աղբյուրներից: Տես՝ Ղ հտ. 1, էջ 1543.

488. Հերկուլես, Հանաք 1 գործող. /Թարգմ. էմին Տեր-Գրիգորյանց.— Եր. Տպ. էմին Տեր-Գրիգորյանցի, 1891.—44 էջ.

Հեղինակի մասին հիշատակություն չկա: Թարգմանությունն արվել է ռուսերեն հրատարակությունից: Տեքստի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս կատակերգությունը պատկանում է գերմանական գրականությանը:

Սույն հրատարակությունը կաղմակից է Զիակամետտիի՝ «Ոճ-րագործի ընտանիքը» գրքին: Տես՝ ալիդ. 2.

489. Հիրշֆելդ Հ. Մայիսի տասնուվեցը Պատմական վեպ /Ակատ Թարգմ. Հ. Բառնաբաս Պիլեդիկյան ի Մխիթ. ուլտե.— Վիեննա: Մխիթ. տպ., 1892.—148 էջ.— /Բարսյական և կրթական տետրեր: Հտ. Դ./.

490. Հոգեփոխություն կամ կախարդված պրինց. Կատակերգ. /Վոդեվիլ 3 արար. /Թարգմ. Կամսար Տեր-Դավթյանց.— Թիֆլիս, Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.—68 էջ.

Հեղինակի մասին գրքում չի նշված: Սույն երկը պատկանում է գերմանական գրականությանը: Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից:

Գրքույկին կազմակից են՝ Բ. Քամալյանի «Սիրահարը սեղանի տակ», Թիֆլիս, 1893 և Փառնակեսի «200.000», Եր., 1892.— կատակերգությունները: 5-րդ էջում նշված է՝ «Առաջին անգամ հայ դերասանական մշտական խումբը ներկայացրեց Թիֆլիսի քաղաքային թատրոնում 1880 թվ. մարտի 20-ին»:

491. Հոֆման Էրենստ: Թուղթ խաղացողի բաղդը /Թարգմ. Պ. Պետրոսյանց.— Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանցի, և ընկ., 1882.—70 էջ.

492. Հոֆման Էրենստ: Թուղթ խաղացողի բաղդը /Թարգմ. Պ. Պետրոսյանց.— Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանցի և ընկ., 1881.—70 էջ.

493. Հոֆման Ֆրանց: Աբրահամ Լինկոլն ստրուկների ապստողը: Երեխաների համար: Պատմեց Ֆր. Հոֆման /Թարգմ. Միրզա Տեր-Սարգսյանց.— Շուշի: Տպ. Միրզաջան Մանտեսի Հակոբյանցի, 1888.—144[1] էջ.

Թարգմանված է գերմաներեն բնագրից, արևելահայերեն: Գրքում ղեկողված է թարգմանչի համառոտ խոսքը «Երկու խոսք» խորագրով:

Սույն վիպակը նախատեսված է մանուկների ընթերցանության համար:

Կազմակից է նաև Հ. Արամյանի՝ «Քրդերը Տաճկահայաստանում» գրքին: Ս.— Պ., 1905.— Տես՝ ալիգ. 2.

494. Հոֆման Ֆրանց: Լեշխատավորի որդիքը /Վիպիկ պատանիների համար/ /Ռուս. թարգմ. օր. Մաքսուհի Շամբորյանց.— Վաղ-պտա: Տպ. ս. էջմիածնի, 1904.—88 էջ.

495. Հոֆման Ֆրանց: Բարեկամությունը դոճեր /Թարգմ. գերմ. նիկողայոս Լալայանց.— Ս.— Պետերբուրգ «Հոհենֆելդենի և ընկ., տպ.», Մ. Մխանարյանցի ստուկրով տպած, 1876.—157 էջ, 4 ներդ. նկ.

496. Հոֆման Ֆրանց: Գայլ /Պատմվածք/ /Թարգմ. Տիրուհի Կոստանյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1894.—13 էջ.

Թարգմանված է գերմաներեն բնագրից: Սույն պատմվածքը նախատեսված է պատանիների ընթերցանության համար:

Շապիկի վերջին էջի վրա տպագրված է Տիրուհի Կոստանյանցի այլ թարգմանությունների զրացուցակը:

497. Հոֆման Ֆրանց: Զինվոր Հակոբ: /Պատմվածք/ /Գերմ.
թարգմ. Տիրուհի Կոստանյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի,
1897.—24 էջ.— /Նոր մատենադարան/.

498. Հոֆման Ֆրանց: Թռչնորս: Պատմություն Երեսաների հա-
մար /Թարգմ. Արշալույսի /Ա./.— Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտի-
րոսյանցի, 1877.—145[7] էջ.— Տիտղթ. վրա՝ «Գործ Ֆռանց-Հոֆ-
մանի»:

499. Հոֆման Ֆրանց: Ժամանակը ոսկի է /Գերմ. փոխադր.
Ա. Քամալյանց: Պատկերազարդ.— Թիֆլիս: Տպ. «Հերմես», 1904.—
164 էջ.

Գրքում զետեղված է «Ազգ» խորագրով Ս. Քամալյանցի հա-
մառոտ խոսքը: Նախատեսված է պատանիների ընթերցանության
համար:

500. Հոֆման Ֆրանց: Խավարից դեպի լույս /Թարգմ. Հարու-
թյուն Առաքելյանց.— Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի,
1877.—144 էջ.

Թարգմանված է գերմաներեն բնագրից: Թարգմանիչն է՝ Հա-
րություն Առաքելյանցը (Գյուտ քհ. Աղանյանց): Գրքում զետեղված
է առաջարան թարգմանչի կողմից նվիրված հեղինակի սույն աշ-
խատության թարգմանությունը: Վեպը նախատեսված է պատանի
ընթերցողների համար:

501. Հոֆման Ֆրանց: Կյանքի դարաց: /Պատմվածք/ /Գերմ.
թարգմ. Տիրուհի Կոստանյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի,
1897.—32 էջ.— /Նոր մատենադարան Ժ./.

502. Հոֆման Ֆրանց: Հակովբ էրլիս /Վեպ մանուկների և
ուսանողների համար/ (Գործ Ֆրանց Հոֆման գերմանացի մա-
տենագրի) /Թարգմ. Աղեքսանդր Հ. Քալունթարյանց.— Բաղու:
«Ի սպարտնի ն. Մալաֆեյանցի ընկ.», 1874.—106[1] էջ.—
Տիտղթ. վրա՝ «Յակովբ էրլիս»:

Թարգմանված է գերմաներեն բնագրից:

Գրքում զետեղված է թարգմանիչ Աղեքսանդր Քալունթարյան-
ցի ներածական խոսքը՝ նվիրված Ֆրանց Հոֆմանի գրական ստեղ-
ծագործությանը և հայ մանուկների դաստիարակությանը:

503. Հոֆման Ֆրանց: Հավատարմությունը ամեն արգելքնե-
րին հաղթում է: Գործ Ֆրանց Հոֆմանի /Թարգմ. գերմ. Հարություն

Առաքելյանց.— Թիֆլիսի Տպ. Հովհ. Մարտիրոսյանցի, 1877.—141 էջ.

504. Հոֆման Ֆրանց, Մրցումն /Պատմվածք/ /Թարգմ. Տիրուհի Կոստանյանց.— Թիֆլիսի Տպ. Մ. Շարաձեի, 1894.—16 էջ.

Թարգմանությունը կատարված է գերմաներեն բնագրից, Գրքի վերջում զետեղված է թարգմանչի գրչին պատկանող այլ հրատարակությունների ցուցակը:

505. Հոֆման Ֆրանց, Ռենե /Վիպակ երեխաների համար/ /Թարգմ. դերմ. վիշապազուն.— Թիֆլիսի Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.—129 [Ա—ԺԳ] էջ.

Գրքի վերջում զետեղված է Հանդամեջ գյուղի և նրա ուսումնարանի նկարագիրը: Տես՝ «Խոսք թարգմանչի» ներածությունը [էջ Ա—ԺԳ]:

506. Հոֆման Ֆրանց: Տորի և Մալի Բարոյական վեպ իմ պատանի բարեկամների համար /Գերմ. թարգմ. Գևորգ Բարխուդարյանց.— Թիֆլիսի Հրատ. «Աղբյուր-Տարագի», տպ. «Հերմես», 1913.—101 [3] էջ, նկ.

Թարգմանչի կողմից տրված է համառոտ տեղեկություն գերմանացի մանկագիր Ֆրանց Հոֆմանի մասին:

Գրքի վերջում զետեղված է կենսագրական ակնարկ նվիրված բազմավաստակ թարգմանիչ՝ Գ. Բարխուդարյանի կյանքին ու գործունեությանը: Գևորգ Բարխուդարյանցը բնագրից թարգմանիլ է Շիլլերի, Գեոթեի, Լեսսինգի անմահ ստեղծագործություններ՝ «Օրլենսի կույսը», «Դոն Կարլոս», «Վիլհելմ Տելլ», «Ֆաուստ», «Նաթան իմաստուն» և այլ երկեր:

507. Հուլիոս կամ հոգեգավկի մը պատմություն /Թարգմանված է գերմաներենից.— Վենետիկի Ս. Ղազար, 1859.—89 [1] էջ, 1 ներդիր, թ. նկ.— /Մատենադարանի մանկանց № 4, Յուլիոս/.

Հեղինակի և թարգմանչի մասին հիշատակություն չկա: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սույն հրատարակությունը պատկանում է գերմանացի նշանավոր մանկագիր՝ Քրիստափոր Շմիդի «Մատենադարանի մանկանց» մատենաշարին, որոնք իրենց մեջ ընդգրկում են մի շարք բարոյական պատմություններ: Թարգմանությունը հավանական է, որ կատարվել է Վենետիկի Մխիթարյանների կողմից:

Նախատեսված է պատանիների ընթերցանության համար:

Սույն հրատարակությունը կողմակից է՝ «0թոն կամ կսրսված տղան» գրքին։ Վենետիկ, 1859.

«Հուլիոս կամ հոգեզավկի մը պատմություն» գրքի առաջին տպագրությունը լույս է տեսել 1840 թվ., Վենետիկում։

Տես՝ Մատենադարան մանկանց...

508. Հուլիոս կամ հոգեզավկի մը պատմություն.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1840, 82[1] էջ.— Տիտղթ. առաջ՝ «Մատենադարան մանկանց 4. Յուլիոս»։

Աշխարհաբար թարգմանություն գերմաներենից, Հեղինակը և թարգմանիչը գրքում չի նշված։ Ըստ Զարբհանսլյանի և Ղազիկյանի՝ «Մատենադարան մանկանց» մատենաշարով լույս տեսած բոլոր գրքերը գերմանացի մանկագիր Քրիստափոր Շմիդին են կամ գրված են նրա հետևություններով։ Տես՝ Զ Մատ., էջ 410, Ղ. հտ. 1, էջ 1842.

Տես՝ Յուլիոս...

Տես նաև՝ Մատենադարան մանկանց...

509*. Հուլիոս կամ որդեգիր /Աշխարհաբար վիպասանություն տղոց համար/ /Գերմ. թարգմանված.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1841.—111 էջ.— /Մատենադարան մանկանց. Գ./.

Պիտական գրադարանում չկա։ Նկարագրված է մատենագիտական/աղբյուրների հիման վրա։ Տես՝ Ղ հտ. 2, էջ 1852.

510. [Հովսեփ], Աղքատ մանուկ, Գործ Ա. /Բարոյական վեպ/ /Թարգմ. Գ. Տեր-Ղևոնդյանց, և Գ. Խաչատրյանց.— Թիֆլիս, Տպ. Մովսես Վարդանյանցի, և ընկ., 1881.—56 էջ.

Թարգմանված է զերմաներեն բնագրից։ Տիտղոսաթերթի վրա հեղինակի մասին հիշատակություն չկա։ Հեղինակի վերաբերյալ տեղեկությունը վերցրել ենք Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կեանքի» գրքից։ Տես՝ Ղ հտ. 2, էջ 1611.

511. Հովսեփ Լ. Դեսպի հյուսիսային գլուխ /Թարգմ. Զ. Մեսրոպյան. Մասիկյան.— Վիեննա, Տպ. Միխայիլյան, 1891.—48 էջ.— (Բարոյական և կրթական տետրեր Գ.).

Թարգմանված է գերմաներեն բնագրից, արևմտահայերեն։ Թարգմանիչ կողմից տրված է համառոտ ներածական՝ «Ազգ» խորագրով։

Սույն հրատարակութիւնը կազմակից է Հիւրշֆելդի՝ «Մայիսի տասնըվեցը» վեպին։ Վիեննա, 1892. տես՝ ալիգ. 2.

512. Ձկնորսին հյուղը։ Որդեկոտոր մայր մը։ Մանրավաճառին աղջիկը։ Ալպյանց խրճիթը.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1860, [2].— 236 [1] էջ, 1 ներդր. թ. իլ.— /Զրոսարան մանկանց, Ե./.

Աշխարհաբար թարգմանութիւն, արեւմտահայերէն։ Օտարազգի ժողովուրդների գրականութիւնից քաղված թարգմանութիւնների ժողովածու է։ Տեքստի ուսումնասիրութիւնը ցույց տվեց, որ թարգմանութիւնը կատարվել է գերմաներէնից, ըստ գերմանացի մանկագիր՝ Քրիստափոր Շմիդի։

Տես՝ Զրոսարան մանկանց...

513. Ձմեռվան իրիկուններ կամ այլ և այլ բարոյական պատմութիւններ։ Հտ. Ա. 1—4-րդ իրիկուն.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1912.—105 [1] էջ.— /Մատենադարան, 2. Ձմեռվան իրիկուններ/.

Աշխարհաբար թարգմանութիւն գերմաներէն բնագրից, արեւմտահայ լեզվով։ Գրքուկում չկան տեղեկութիւններ հեղինակի և թարգմանչի մասին։

Մեր կարծիքով «Մատենադարան մանկանց» սերիայով լույս տեսնող հրատարակութիւնները պատկանում են գերմանացի ակաւնավոր մանկագիր Քրիստափոր Շմիդի գրչին։ Թարգմանութիւնը կատարվել է Վենետիկի Մխիթարյանների կողմից։

Սույն հրատարակութիւնը նախատեսված է պատանիների բնթիւրջանութիւն համար։

Տես՝ Մատենադարան մանկանց...

514. Ձմեռվան իրիկուններ կամ այլ և այլ բարոյական պատմութիւններ։ Հտ. Բ. 5—10-րդ իրիկուն.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1912.—108 [1] էջ.— Մատենադարան մանկանց, 3. Ձմեռվան իրիկուններ/.

Տես՝ Մատենադարան մանկանց...

515. Ձմեռվան իրիկուններ կամ այլ և այլ բարոյական պատմութիւններ։ Հտ. Ա. և Բ.— Վենետիկ, Տպ. ս. Ղազարի, 1859.— /Մատենադարան մանկանց № 2—3, Ձմեռվան իրիկուններ/.

Հտ. Ա. 87 էջ, 1 ներդ. թ. նկ.

Հտ. Բ. 91 էջ, 1 ներդ. թ. նկ.

«Ձմեռվան իրիկուններ կամ այլ և այլ բարոյական պատմութ-
յուններ» գրքի առաջին տպագրությունը լույս է տեսել 1839 թվ.
Վենետիկում 2 հատորով:

Ա. և Բ. Հատորները մի կազմի մեջ են:

Տես՝ Մատենադարան մանկանց...

Տես նաև՝ Օթոն կամ կորսված տղու մը
պատմութիւնը...

Կազմակից է՝ «Օթոն կամ կորսված տղու մը պատմությունը»
գրքին: Վենետիկ, 1853.— Տես՝ ալիգ. 2.

516. Ձմեռվան իրիկուններ կամ այլ և այլ բարոյական պատ-
մութիւններ: Հտ. Ա. և Բ.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1839.—

Հտ. Ա. 83, 1 չհ. էջ.

Հտ. Բ. 87 էջ.

Տիտղոսաթերթի վրա նշված է՝ «Մատենադարան մանկանց»
2, 3-րդ Տես՝ Մատենադարան մանկանց:

Սույն հրատարակությունը գտնվում է Մեսրոպ Մաշտոցի ան-
վան Մատենադարանի գրադարանում.

Ի՞

517. Մանկական գրադարան: /№ 1/ 8—12 տարեկանների հա-
մար: (Ավելի փոքրերին՝ պատմելու նյութ) /Գերմ. փոխադր. Ա. Զի-
լինկարյան.— Ալեք-պոլ: Տպ. Գ. Ս. Սանոյանցի, 1904.—16 էջ.

Ընկալող.՝ Երեք թիթեռնիկ /ըստ Օրտմանի/: Ինձ չմոռանաւ /մողո-
վորդական/: Հավատարիմ ձկնիկ /ըստ Օրտմանի/: Հոր
պատկերը /Ազատ պատմվածք/: Ծա չեմ կարող սուտ
ասել /Անգլ./: Գերին և առյուծը /Ազատ պատմվածք/:

Տիտղոսաթերթի վրա հեղինակի մասին տվյալներ չկան:

Սույն հրատարակությունը լույս է տեսել «Մանկական գրա-
դարան» մատենաշարով՝ երեք գրքով /գիրք № 1, 2, 3/:

Տես՝ Երեք գրքույկ...

518. Մանկական գրադարան: /№ 2/ 8—12 տարեկանների հա-
մար: /ավելի փոքրերին պատմելու նյութ/ /Գերմ. փոխադրեց Ա. Զի-
լինկարյան.— Ալեք-պոլ: Տպ. Գ. Ս. Սանոյանցի, 1904.—17 էջ.

Բովանդ.՝ Բարի ծովակը; Աղջիկը և կատուն; Փոքրիկ մկնիկը; Թռչնիկ:

519. Մանկական գրադարան. /Մ 3/ 8—10 տարեկանների համար /ավելի փոքրերին պատմելու նյութ/ /Գերմ. փոխադր. Ա. Չիլինկարյան.— Ալեք-պոլ: Տպ. Գ. Ս. Սանոյանցի, 1904.—16[1] էջ.— Մանկական գրադարան № 1, 2, 3/.

Բովանդ.՝ Զուլթակահարը; Արջը և գողը; Խելոք ձին; Հնարագետ ագռավը; Կողոպտված աղջիկ; Երկու եղբայր:

Հեղինակի մասին գրքույկում տեղեկություններ չկան:

Սույն հրատարակությունը լույս է տեսել նաև՝ «Երեք գրքույկ» խորագրով:

520. Մատանի, Պատմական լեռն /Բարգմ. Մոսկվայի համալս. ուսանող՝ Գաբրիէլ Հեջուբյանց.— Մոսկվա: Տպ. կադարյանց ճեմար. Արեվել. կեդ., 1859.—132 էջ.

Շուկ-ի վրա վերին. առաջ՝ «Երկու վիպք»...

Հեղինակի մասին չի հիշատակվում: Բարգմանությունը կատարված է ուսերեն հրատարակությունից:

Տեքստի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սույն երկը պատկանում է վերմանական գրականությանը:

521. Մատենադարան մանկանց կամ հավաքումն օգտակար և դուրձալի պատմութեանց տղոց կրթութեան համար՝ 15 հատորով /Գերմ. թարգմ./ Հետևությունը Շմիդտ գերմանացույց.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1839—1912.—

Բովանդ.՝ Ա. Օթոն կամ կորսուած տղան 1839—1840, 112 էջ.

ԲԳ. Ձմեռուան իրիկուններ... 2 հտ. 1841, 1853, 1912.

Դ. Յուլիոս 1840, 1859, 82 էջ:

Ե. Երանեակ Թանկոյի թագուհին 1841, 1859, 64 էջ.

Զէ. Իրլանտույի տնակը 1845, 1867, 98 էջ.

Ը. Քարայր ապաշխարութեան 1853.—94 էջ:

Թ. Թեոփիլես կամ պղտիկ ճգնավոր 1853.—96 էջ.

Ժ. Լյուդովիկոս կամ կորսուած տղան 1853.—97 էջ:

ԺԱ. Ռոզալիա Փալերմո քաղաքին մեկ գեղեկ 1853.—94 էջ.

ԺԲ. Քրիստինե կամ գառնուկ 1853.—96 էջ:

ԺԳ. Ֆենհեյմ: Առաքինութիւն վարձատրեալ 1853.—118 էջ.

ԺԴ. Ֆելիչէ կամ որբ տղան 1853.—110 էջ:

ԺԵ. Բարդուղիմէոս 1854, 1866, 108 էջ.

1839 թվականից «Մատենադարան մանկանց» մատենաշարով սկսում են լույս տեսնել «Օթոն կամ կորսւած տղու մը պատմութիւնը», «Զմեռան իրիկուններ», «Երանեակ անունով Թանկոյի Թագուհւոյ պատմութիւնը», «Յուլիոս կամ Հոգեպաւսակի մը պատմութիւնը», «Իռլանտայի տնակը» և ուրիշներ: Դրանք բոլորն էլ գրւած են գեղմանացի նշանավոր մանկագիր Քրիստափոր Շմիդտի հետեւությամբ և հրատարակվել են եվրոպական բոլոր լեզուներով: Թարգմանությունը և հրատարակությունը կատարվել է Վենետիկի Մխիթարյանների կողմից, աշխարհարարոյ Նախատեսւմով է պատանիների ընթերցանության համար:

Տես՝ Օթոն կամ կորսւած տղան...

522. Մատենադարան մանկանց կամ հավաքումն օգտակար և զուարճարի պատմութեանց տղոց կրթութեան համար.— 2-րդ տպագր.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1846—1858.—557 էջ.

Թւականւ.՝ 1. Օթոն կամ կորսուած տղան, 1853.

2—3. Զմեռան իրիկուններ կամ այլ և այլ բարոյական պատմություններ, 1858.

4. Հուլիոս կամ հոգեպաւսակի մը պատմութիւնը, 1859.

5. Երանեակ անունով Թանկոյի թագուհւոյն պատմութիւնը, 1859.

6—7. Իրլանտայի տնակը: Հտ. Ա.—Բ, 1846.

8. Քարայր աղաշխարութեան, 1853.

9. Թեոփիլէ կամ պզտի ճգնավոր, 1852.

10. Լյուդովիկոս կամ կորսուած տղան, 1853.

11. Ռոզալիա Փալիրմո քաղթին մեկ ղեղեն, 1853.

12. Քրիստինէ կամ գառնուկ, 1853.

13. Ֆենհէյմ կամ առաքինութիւն, 1853.

14. Ֆելիշ կամ որբ տղան, 1853.

15. Բարդուղեմեոս կամ հովիվ քարոզիչ, 1866.

19-րդ դարից, Վենետիկի Մխիթարյանները նախաձեռնում են երեխաների ընթերցանությունը կազմակերպելու գործին: Մանուկների համար սկսում են լույս տեսնել մատչելի, արձակ գեղարվեստական ընթերցանության գրքեր, աշխարհաբարոյ:

19-րդ դարի երկրորդ քառորդից սկսած, Վենետիկի Մխիթարյանները «Մատենադարան մանկանց» մատենաշարով հրատարակում են մանուկների համար բարոյախոսական վիպասանություն-

ներ, պատմութիւններ և պատմվածքներ աշխարհաբար լիարդմանութեամբ, որոնք լույս են տեսել 1839—1866 թթ. առանձին պրակներով: Ինչպես օրինակ՝ «Մատենադարան մանկանց» կամ «Հավաքումն օգտակար և դուարձալի պատմութեանց տղոց կրթութեան համար»: Այդ պատմութիւնները պատկանում են գերմանացի ակադեմիկոս մանկագիր Քրիստափոր Շմիդտի գրչին: Թարգմանված է գերմաներեն բնագրից, արևմտահայերեն: Սույն մատենաշարը բաղկացած է 15 վիպասանութիւններից:

523. /Մյուլբախ Ղ./ Պոներ միլիոնավոր, Թշվառ զործավոր և քնշատյաց սիրահարբ: [Երեք հատորով] /Թարգմ. գերմ. բնագր. հանդերձ կարևոր ծանոթութեամբ, Հտ. Ա—Գ.— Կ. Պոլիս: Տպագր. Բ. Հ. Քյուրքճյանի, 1869.—1870.—

Հտ. 1. 135 էջ.

Հտ. 2. 137 էջ.

Հտ. 3. 160 էջ.

Վեպի սկզբում զետեղված է հրատարակիչ Հովսեփ Գավաֆյանի առաջաբանը՝ «Գրականութեան բարեկամներուն» խորագրով, որ համառոտակի արված է սույն երկի նշանակութեան և թարգմանութեան մասին: Թարգմանութեանը կառարկած է գերմաներեն բնագրից՝ արևմտահայ լեզվով: Հեղինակի մասին նշված է, որ 1-ին Լչում հետևյալ վերնագրով՝ «Պոներ կամ միլիոնավոր մեծատուն մը վիպասանութիւնը» ի Ղ. Միլբախէ...

Ա—Գ հատորները մի կազմի մեջ են:

524. Մուր վաշած վշտեր: Ճշմարիտ պատմութիւն: Մանիշակ: Օղային ճանապարհորդութիւն մը: Ամեն խաչ ծանր է: Քթախոտի պտղունցը.— Վենետիկ: Տպ. ս. Ղազարի, 1860.—184 էջ.— /Զրոսարան մանկանց Գ./.

Աշխարհաբար թարգմանութիւն գերմաներենից, արևմտահայերեն: Հեղինակի և թարգմանչի մասին չի հիշատակված:

525. Յոկա Մաուրուս, Ուրացողը /Պատմվածք/ /Գերմ. թարգմ. Իսահակ Հարութիւնյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի և ընկ., 1900.—64 էջ.

526. Յովիոս կամ հոգեզավկի մը պատմութիւն.— Վենետիկ: Ս. Ղազար, 1840.—82, 1 չհ. էջ.

Աշխարհաբար թարգմանություն գերմաներենից, Հեղինակի և թարգմանչի մասին չի նշված։ Սույն հրատարակությունը լույս է տեսել «Մատենադարան մանկանց» մատենաշարով։

Տես՝ Հուլիոս...

Տես նաև՝ Մատենադարան մանկանց...

527. Նալայ ու դամայանալ։ /Հնդկական հեքիաթ/ /Գերմ. թարգմ. հայ երեխանց համար Գեորգ Աքիմյանց...— Թիֆլիս։ Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.— [1—3], 53 էջ.

Թարգմանությունը կատարված է հայ մեծ լուսավորիչ հաշատուր Արուսյանի «Վերք Հայաստանի» վեպի հետևություններ, Քանաքեռի բարձրագույն նախատեսված է մանուկների ընթերցանության համար։

Հեղինակի մասին պրոպագանդա տեղեկություններ չկան։ Ըստ մատենագիտական աղբյուրների և գրացուցակներում եղած նշումների, սույն հեքիաթը պատկանում է գերմանացի հայտնի մանկագիր Ֆերդինանդ Շմիդտի պոչին։

Սույն հրատարակության մեջ ղեկավարված է թարգմանչի համառոտ առաջաբանը՝ նվիրված հայ մանուկների ընթերցանությանը և աշխարհաբար թարգմանված հանրամատչելի գրքերի հրատարակությանը։

528*. Նապաստակը /Թարգմ. գերմ. Դուրիչանյան Ն.— Թիֆլիս։ Հրատ. Թիֆլ. հայոց հրատ. ընկ., 1896.

Պետական գրադարանում չկա։ Նկարագրված է բանասիրական աղբյուրների հիման վրա։ Տես՝ Մուրճ, 1906, № 2, էջ 117.

529*. Նապաստակը և ողնին /Թարգմ. գերմ. Տիրուլի Կոստանյանց.— Թիֆլիս, 1897.

Պետական գրադարանում չկա։ Նկարագրված է բանասիրական աղբյուրների հիման վրա։ Տես՝ Մուրճ, 1906, № 1, էջ 157.

530. Նեյդգադա Ա. «Թատրոնի վերատեսչի մոտ» /Կատակերգ. 2 արար./ /Թարգմ. Հովհ. Մալիկյան.— Թիֆլիս։ Տպ. «Հասարակաց», 1912.— 29 էջ.

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է ռուսերեն հրատարակությունից, հանրամատչելի լեզվով։

531. Շիլլեր։ Ավազակներ /Գերմ. բնագրից ամփոփ. թարգմ. Ա. Թառայանց.— Բագու։ Տպ. Հ. Գ. Գյուլբասարյանի, 1902.— 60 էջ.

Թարգմանությունը կատարված է գերմաներեն բնագրից, ար-
ձակ, Կազմակից է Շանթի՝ «Կինը» վեպին: Կ. Պոլիս, 1924.

532. Շիլլեր Ֆրիդրիխ: Ավագակներ (Ողբերգ.) /Գերմ. թարգմ.
Փիլիպպոս Վարդանյան.— Թիֆլիս: Տպ. Հ. Մարտիրոսյանցի,
1890.—194 էջ.

533*. Շիլլեր Ֆրիդրիխ: Ավագակներ /Գերմ. թարգմ. Գևորգ
Բարխուդարյանց.— Թիֆլիս, 1878.

Պետական գրադարանում չկա՝ նկարագրված է բանասիրական
աղբյուրների հիման վրա:

Տես՝ Ա. Բաբայանի «Շիլլերը հայ գրակա-
նության մեջ և թատրոնում». գրքում:
Եր., 1959, էջ 169.

534. Շիլլեր Ֆրիդրիխ: Բանաստեղծություններ /Գերմ. թարգմ.
Մ. Մաքսուդյանց.— Դավրեժ: Տպ. Թեմ. հայոց Ատրպատականի,
1904.—71 էջ.

Տես նաև՝ Ստար փունջերու Ա. հյուսիս Շիլլե-
րից...

Սույն հրատարակությունը գտնվում է ԳԱ հիմնային գրադարա-
նում:

ԱԿԳ

535 Շիլլեր Ֆրիդրիխ: Դոն Կարլոս Դրամատիկ. բանաստեղ-
ծութ. 5 գործող. Schiller's. Don Carlos /Թարգմ. Գևորգ Բարխու-
դարյանց.— Թիֆլիս: Տպ. Հ. էնֆիաճյանցի, և րևկ., 1878.—278[1]
էջ.

Թարգմանությունը կատարված է գերմաներեն բնագրից, չա-
փածու: Տիտղոսաթերթի վրա նկարագրությունը տրված է գերմանե-
րեն և հայերեն լեզուներով:

536. Շիլլեր Ֆրիդրիխ: Երգ ի ղանգակն: [Զափածո] /Թարգմ.
Հ. Ղ. Մ. Ալիշան].— Վենետիկ: Տպագր. Մխիթար., 1890.—22 էջ.

Թարգմանությունը կատարված է գերմաներեն բնագրից, գրա-
բար, չափածու: Թարգմանչի մասին գրքույկում տեղեկություններ
չկան: Ըստ մատենագիտական և բանասիրական աղբյուրների,
թարգմանիչն է՝ Վենետիկի Մխիթ. Հ. Ղ. Մ. Ալիշանը:

Գրքույկում զետեղված է Թարգմանչի համառոտ ծանոթությու-
նը սույն թարգմանության առթիվ: Առաջին հրատարակությունը
լույս է տեսել 1871 թվ. Վենետիկում՝ Ղևոնդ Ալիշանի թարգմանու-

թյամբ և ծանոթությամբ: Լ. Ղևոնդ Ալիշանի բաղձաթիվ թարգմանությունները լույս են տեսել նաև «Բաղձալիպ»-ում:

537. Շիրվեր Ֆրիդրիխ: Երգ ի զանգակն: [Թարգմ. Լ. Ղ. Մ. Ալիշան].— Վենետիկ: Ս. Ղազար, «Ի տպագրատան Մխիթարիանց», 1871.—20 էջ.— Տիտղոսաթերթի վրա վերնագիր՝ «Շիրվերի երգ ի զանգակն»:

Գրաբարախառն աշխարհաբար թարգմանություն գերմաներեն ընագրից, չափածո: Թարգմանություն առթիվ գրքույկում ղետեղված է համառոտ ծանոթություն թարգմանչի կողմից:

Տիտղթ. վրա թարգմանչի մասին չի հիշատակված: Տեղեկությունները քաղված են մատենագիտական և բանասիրական աղբյուրներից: Թարգմանիչն է՝ Վենետիկի Մխիթ. Լ. Ղ. Մ. Ալիշանը: Լրացուցիչ տվյալները վերցված են Ա. Բաբայանի «Շիրվերը հայ գրականության մեջ և թատրոնում» գրքից:

538. Շիրվեր Ֆրիդրիխ: Զանգակի երգը /Գերմ. թարգմ. Գևորգ Բարխուդարյանց.— Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1884.—29 էջ.

539. Շիրվեր Ֆրիդրիխ: Կիլլում Թեւլ [Վիլհելմ Տեւլ], Ողբերգ. ի 5 արար. /Թարգմ. Միքայել Ս. Կյուլլապյան, անդամ քարտուղարաց ղիվանի արտաքին գործոց պաշտոնատան, որ ի Բ. դուռ.— [Կ. Պոլիս], Տպագր. Ս. Միքայելյանի, [1874], 188 էջ.

Թարգմանությունը կատարված է ֆրանսերենից, արևմտահայ լեզվով: Գրքի սկզբում տրված է համառոտ ներածություն՝ «Յառաջաբան թարգմանչին» խորագրով, որ նշված է, որ սույն ողբերգությունը փոխադրվել է ֆրանսիացի Պ. Ա. Մելիոյի թարգմանությունից, Հրատարակության տարեթվի մասին տեղեկությունները նշված են «Առաջաբան»-ում [էջ Ա.]: Թարգմանությունն արձակ է:

540. Շիրվեր Ֆրիդրիխ: Հովհաննա Դ՝ Արգ կամ Օրլեանի օրիսրդը: Վիպասանական ողբերգություն Շիրվերի /Թարգմ. գերմ. բնագրից Կարապետ Կ. Ղազարոսյան: Schiller's Gunefrau vom Orleans Ueber Setzt im's Armenische von Cn. C. Hasarossian.— Կ. Պոլիս: Տպագր. Քյուրքեճյանի, 1868.—178 էջ.

Գրքի սկզբում ղետեղված է համառոտ առաջաբան թարգմանչի կողմից՝ նվիրված հեղինակի կյանքին ու գրական գործունեությանը: Թարգմանությունը կատարված է ընագրից, արևմտահայերեն, արձակ, Թարգմանիչ Կ. Ղազարոսյանը իր առաջաբանում նշում է,

որ հրատարակելով «Օռլեանի օրիորդը» ողբերգության հայերեն թարգմանությունը, իր նպատակն է եղել գերմանական հանճար Շիլլերի բանաստեղծական գործերից նմուշ տալ հայ ընթերցողներին»:

541. Շիլլեր Ֆրիդրիխ, Մարիա Ստուարտու Ողբերգ. 5 գործող. Հեղինակություն Շիլլերի /թարգմ. գերմ. բնագրից Գևորգ Բարխուդարյան.— Թիֆլիս, Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1894.—96 էջ.

Թարգմանված է բնագրից, չափածո:

Տիտղոսաթերթի վրա նշված է Գևորգ Բարխուդարյանի ինքնագիրը ուղղված Հովհ. Գասպարյանցին:

Տիտղթ. վրա վերնագրից առաջ նշված է՝ «Արտատպված է «Թատրոն» հանդեսից»:

542*. Շիլլեր Ֆրիդրիխ, Սեր և խարդավանք /Գերմ. թարգմ. Գևորգ Բարխուդարյանց.— Թիֆլիս, 1878.

Պիտական գրադարանում չկա: Նկարագրված է բանասիրական և գրականագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ Բաբայան Ա. «Շիլլերը հայ գրականության մեջ և Թատրոնում» պրոբում, Եր., 1959, էջ 169.

543. Շիլլեր Ֆրիդրիխ, Վիլհելմ Տելլ /Բնագրից ամփոփեց Սեդրակ Թառայանց.— Թիֆլիս, Տպ. Կ. Մարտիրոսյանցի, 1901.—54 էջ.

Թարգմանված է արձակ շարադրմամբ, մեջ ընդ մեջ չափածո հատվածներով:

544. Շիլլեր Ֆրիդրիխ, Վիլհելմ Տելլ, Դրամա 5 գործող. Schiller's Wilhelm Tell /Թարգմ. Գևորգ Բարխուդարյանց.— Թիֆլիս, Տպ. Համբարձում էնֆիաճյանցի և ընկ., 1873.—205[2] էջ.

Թարգմանությունը կատարված է գերմաներեն բնագրից, չափածո: Գրքի սկզբում զետեղված է Վ. Թերզիբաշյանի առաջաբանը նվիրված Ֆրիդրիխ Շիլլերի կյանքին ու գրական գործունեությանը: Այնուհետև տրված է թարգմանչի կողմից գրված համառոտ առաջաբան՝ Շիլլերի «Վիլհելմ Տելլ» դրամայի թարգմանության առթիվ:

Տիտղոսաթերթի վրա նկարագրությունը տրված է գերմաներեն և հայերեն լեզուներով:

545. Շիլլեր Ֆրիդրիխ, Օռլեանի կույսը /Բնագրից ամփոփեց Ս. Թառայանց.— Թիֆլիս, Տպ. Կ. Մարտիրոսյանցի, 1901.—50 էջ.

Թարգմանությունը կատարված է արձակ, չափածո տեքստերով:

546. Շիլլեր Ֆրիդրիխ: Օրլեանի կույսը: Վիպասանական ողբերգ. 5 գործող. Schiller's Unafrau von Orleans /Թարգմ. Գևորգ Բարխուդարյանց.— Թիֆլիս: Տպ. Հ. Էնֆիաճյանցի և ընկ., 1878.— 172 էջ.

Տիտղոսաթերթի վրա նկարագրությունը տրված է գերմաներեն և հայերեն լեզուներով: Թարգմանված է բնագրից, չափածո:

547*. Շիլլեր Ֆրիդրիխ: Օրլեանի կույսը: /Վիպասանական ողբերգ. 5 գործող./ /ա. տ. և ա. թ./, 88 էջ.

Թարգմանչի մասին հիշատակություն չկա: Գիրքը չունի շապիկ և տիտղոսաթերթ: Հրատարակության վայրի և տպագրության տարեթվի մասին տեղեկություն չկա: Թարգմանված է գերմաներենից, արևելահայերեն:

548*. Շիլլեր Ֆրիդրիխ: Ֆինսկոյի դավադրությունը Ջենովայում /Գերմ. թարգմ. Գևորգ Բարխուդարյան.— Թիֆլիս, 1878.

Պետական գրադարանում չկա: Նկարագրված է բանասիրական նից:

Տես՝ Ա. Բաբայանի՝ «Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում» գրքում: Եր., 1959, էջ 169.

549. Շիլլեր Ֆրիդրիխ: Ֆրիդոլին /Թարգմ. Բաֆֆի.— Թիֆլիս: Տպ. «Արօր» Տ. Նազարյանի, 1891.— 32 էջ.— Տիտղթ. վրա՝ «Աղբիւր»-ի 1892 թվ. 5-րդ ընծան: Շակ-ի վրա տպված է՝ «1892»:

Սույն երկի թարգմանությունը կատարված է ուսուցիչներից, արձակ շաբաղմամբ: Գրքույկի սկզբում դետեղված է համառոտ առաջաբան «Ազգ» խորագրով:

Սովետահայ սկանալոր մասենագետ և բանասիր Արտմ Բաբայանը իր «Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում» աշխատությունում նշում է, որ «Աղբիւր» ամսագրի խմբագրությունը 1891 թվ. առանձին գրքով Բաֆֆու թարգմանությամբ լույս է ընծայել Շիլլերի «Ֆրիդոլին» անունով երկը, որպես ընծա ամսագրի 1892 թվականի բաժանորդներին: /Բաֆֆու այս թարգմանությունը ետ մահու հրատարակություն էր, այն կատարված էր ռուսերենից և ստեղծագործության վաղ շրջանում: Թարգմանությունը գրաբար էր/»:

«... Շիլլերը «Ֆրիդոլին» անունով երկ շունի, Բաֆֆու այդ թարգմանությունը բանաստեղծի 1897 թ. գրած «Der nach Clem Eisen hammer» նշանավոր բալլադի արձակ շարադրանքն է։ Մեծ գրողի այդ բալլադը, որի հիմնական գաղափարը ճշմարտության վերջնական հաղթանակն է հանդեպ ստի ու կեղծիքի, առաջին անգամ չափածո թարգմանել և տպագրել է Մ. Մաքսուդյանը 1904 թ. «Դարբնոցի ճանապարհին» վերնագրով»։ Տես՝ Ա. Բաբայանի՝ «Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում» գրքում։ Եր., 1959, էջ 208.)։

Մ. Մաքսուդյանը թարգմանել է նաև «Հերոս և Լևանդո», Հարս-բուրգի կոմսը» բալլադները։

1904 թ. առանձին գրքով հրատարակվում է «Օտար փունջեր»։ Ա. Հյուսք։ Շիլլերից, որը տպագրվել է Թավրիզում։

Հանճարեղ Շիլլերին թարգմանել են հայ ականավոր թարգմանիչներ և գրողներ՝ Գևորգ Բարխուդարյանը, Հովհաննես Մասնհյանը, Հովհ. Թումանյանը, Հովհ. Աբելյանը, Ալ. Շիրվանզադեն, Երվ. Լալայանը, Լևոն Մանվելյանը, Ա. Մելքոնը, Մելիքսեղ Մուրադյանը, Խորեն Գալֆայանը, Ա. Մանդինյանը և շատ ուրիշներ։

550. Շմիդտ Քրիստափոր, Լեզենս կամ փոքրիկ վինահար աղ-ջիկը /Ֆրանս. թարգմ. Լյուսի Պալասանյան.— Զմյուռնիա Տպ. Տե-տեյանի, 1866.—100 էջ.— Տիտղթ. վրա հեղ.՝ «Շմիդտ Քրիստա-փոր /Կրիստոֆ/»։

Թարգմանությունը կատարված է ֆրանսերեն հրատարակու-նից, արևմտահայերենի Հեղինակն է՝ դերմանացի նշանավոր ման-կադիր Քրիստափոր Շմիդտը։

551. Շմիդտ Քրիստափոր, Լեզենսանց կամ Ռուդոլֆի գերմա-նացի /Թարգմ. Ն. Մ. Զորայան.— Կ. Պոլիս Տպ. Հովհ. Մյուհեն-տիսյանի, 1850.—132 էջ.

Հեղինակի և թարգմանչի մասին տիպոսաթերթում տեղեկու-թյուններ չկան։ Նրանց մասին տվյալները վերցված է «Յառաջաբա-նություն»-ից, որը գրել է թարգմանիչը՝ Ն. Զ. ստորագրությամբ /Նիկողայոս Զորայան/։

Առաջաբանում ասված է. «Այս փոքրիկ պատմութեանն ալ հե-ղինակը այն երեկելի Շմիտ գերմանացի քահանան է, որ իր Օթոն, Երանեակ և ուրիշ քանի մը օգտակար ու զուարճալի պատմություն-

ներովը արդեն մեր աղգին ալ ծանոթ է... Ուստի յուսալով, որ այս գրքովը իր օգտակար իմաստներովը պիտանի կըրնայ ըլլալ մեր տղայոց, ուզեցի Գաղղիերէն թարգմանութենէն մեր լեզուովն ալ թարգմանել ու անոնց նուիրել, որուն մէջ պիտի գտնէն ձախորդութէն մէջ քաջ ու ժիր ըլլալու կարգի ու խոհեմ տեսութեան մը գեղեցիկ օրինակները...

Զարգանալանը այս գիրքն անվանել է «Ռօպէնսոն գերմանացի կամ փոքրիկ ճգնաւորը»։ Այն համարվում է որպէս Դ. Դեֆոյի հետեութեամբ գրված վեպի՝ մանկագիր Շմիդի հեղինակությունը։ Ըստ Ա. Ղազիկյանի, թարգմանիչը նիկողայոս Զորայանն է [Տես՝ Ղ հտ. 1, 669 էջ/.

Թարգմանությունը կատարվել է ֆրանսերեն հրատարակությունից, արեւմտահայերեն։

Սույն հրատարակությունը գտնվում է գրականության և արվեստի թանգարանում։

ԳԱԹ—Ազատյանի ֆոնդ։

552. Շմիդտ Քրիստափոր, Գառնուկ և լուսատտնիկ / Մանկական վեպեր Քրիստափոր Շմիդտի / Թարգմ. Նվարդ.— Թիֆլիս։ Հրատ. Թիֆլ. ընկ., Հայ գրքի հրատարակության, տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.—52 էջ.

553. Շմիդտ Քրիստափոր, Երեք զրույց / Գերմ. թարգմ. Թ. Ատովմյան.— Թիֆլիս։ Տպ. Մ. Վարդանյանցի և ընկ., 1882.—79 էջ.

Ռովանդ.՝ Դեղձանիկ [էջ 5—45]։ Մտաւուռ անտառում [էջ 47—63]։

Ստույգ քաջություն [էջ 64—79] .

554. Շմիդտ Քրիստափոր։ Ժենրվիեմ / Բարոյավեպ / Թարգմ. ի դաղդ.— Կ. Պոլիս։ Հրատ. Աշճյան զրուստն, տպագր. Ռ. Սողոմոնի, 1910.—87 էջ.

Թարգմանչի մասին գրքում չի հիշատակված։

Սույն հրատարակությունը կազմակից է Նշան Միրզոյանի / Նշան Միրզա / «Տորա» վեպին։ Զմյուռնիա, 1871.— Տես՝ ալիդ. 3.

555. Շմիդտ Քրիստափոր։ Ժենրվիեմ / Բարոյավեպ / Թարգմ. Ղ. Մարտիրոսյան.— Կ. Պոլիս։ Տպագր. Իվանկյանի, 1895.—112 էջ.

Թարգմանությունը կատարված է գերմաներեն բնագրից, արեւմտահայերեն։

